

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 5
M A I
1930
PARIS (France)

«ՀՈՅ ՅԵՂՍՏՐՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Դարձեալ օտարութեան մէջ՝ մեր ժամանակակից պատմութեան ամենէն լուսաւոր այլ կարճատեւ Օրը, Մայիս 28ը:

Մեր ժամանակներու պատմութեան մէջ դէպքեր կան որ հետզհետէ կը մոռցնին: Գիտենք անցքեր, որոնցմէ ալօտ յիշատակներ միայն մնացած են: Բայց չի մոռցիր Մայիս 28ը, ինչպէս երբեք չպիտի մոռցնի Ապրիլ 11/24ը:

Ընդհակառակն, քանի կ'երկարաձգուի մեր քննախոսութիւնը օտար ափերու վրա, այնքան կարօտով կը վերջիւնէք Անկախութեան Տօնը: Կը յիշենք զայն իւրաքանչիւր քայսպիտօսին: Մեքեաններու եւ օթօններու թաւալումին հետ:

Ոչ բանաստեղծական բնազդ է այս, ոչ ալ մարմնով: Այլ իրական, կոպիտ պահանջ: Մարդիկ չեն կրնար սպրիլ, չեն կրնար շնչել ու ստեղծագործել առանց սեփական հայրենիքի եւ անկախութեան: Մեր հալածական ժողովուրդը կորսնցուց իր անկախութիւնը, հաղի ողջունած անոր առաջին ցուլերը: Կորսնցուց զարհուրելի պայմաններու մէջ, ինչպէս շահած էր տասնապատիկ աւելի ծանր զարհուրանքներով: Այդ կորուստէն յետոյ է որ, նետած՝ աշխարհի պողոտաներուն վրա, հետզհետէ աւելի խոր կ'սկիծով կը յնչ գայն: Որովհետեւ, իր մորթին վրա իսկ կը զգայ, թէ ի՛նչ կը նշանակէ պատկանիլ «անորոշ ազգութեան»:

Կորսնցուցինք անկախութիւնը, բայց ոչ հայրենիքը: Որքան ալ յօշոտած եւ ճնշած, չարժեքու եւ ծաղկելու անկարելութեան դատապարտուած, վաղեան միակ երաշխիքն է այսօրւան Հայաստանը: Եւ մենք անոր փառքն է որ կ'երգենք ամէն տարի, Մայիս 28ին, խուռներամ եւ տենդահար բազմութիւններով:

Հ. Յ. Դանիակցութիւնը, իբրեւ արտայայտիչը այս ժողովուրդին տենչերուն, իր անկարելին փորձեց, որպէսզի կանգուն մնայ հայրենիքը, գոնէ այնպէս ինչպէս որ ձեւակերպուած էր 1918ին: Մեղադրանքներ շատ ենք լսած այս մասին եւ միշտ ալ պատրաստ ենք լսելու: Բայց, ամենէն թթու հակառակորդն

ալ, չի կրնար ժխտել թէ՛ պատրաստ ժառանգութիւն մըն էր որ կորզեցին Երեւանի այսօրւան «իմաստունները»: Երկիր մը՝ որ Հայաստան էր դարձած ոչ միայն աշխարհագրութեամբ, այլ եւ ազգաբնակչութեամբ: Երկիր մը՝ որուն վրա նորեկները ոչինչ կրցան աւելցնել քաղաքականապէս, հակառակ իրենց բոլոր յոխորտանքներուն: Երկիր մը, վերջապէս, ուր մօտ մէկ միլիոն ժողովուրդ էր համախմբած, պատրաստ՝ իրականացնելու իր պատմական կոչումը:

Այսօր Դանիակցութիւնը Ֆիզիքապէս կազանդուած է Երկրի մէջ, բայց անոր ոգին է, որ կը սաւառնի Արարատեան Դաշտին վրա: Անոր քարոզած, հետապնդած գաղափարներն են որ չըջան կ'ընեն բերնէ բերան: Ինչո՞ւ զարմանալ որ Սուրմալուի հայ գիւղացին հետեւալ կոպիտ պատասխանը կուտայ, երբ կ'երթան համոզելու թէ իր հողաբաժինը պիտի աւելնայ, չնորձիւ հաւաքական տնտեսութեան.

— «Փոխանակ թուրքեր քանդելու եւ հող աւելացնելու, ինչու՞ չէ՞ գնում Սուրմալուայ հողերը գրաւելու, որ նեղութիւն չկրնանք»...

Երկրի մէջ, ժողովուրդը չի կրնար տօնել Մայիս 28ը, բայց իր, մտրոզ էութեամբ կը սարսույց անոր յիշատակէն: Կը զգայ, կը տեսնէ թէ ի՛նչպէս պիտի շնչէր իր վայելած ափ մը հողը, եթէ ունենար անկախութիւն: Եթէ ունենար ազատութիւն՝ վարելու իր ճակատագիրը:

Դաղութներու մէջ, ժողովուրդը ունի ազատութիւն, բայց չունի հող, հայրենիք: Եւ անկախութեան ամէն տարեգարձ, որ կուգայ ու կ'անցնի, խոր վէրք մը կը ձգէ իր սրտին մէջ: Կարօտ մը, որ այլեւս անզիմադրելի կը դառնայ:

Երէկ, Դանիակցութիւնը հայրենի սարերու կատարէն կ'արձակէր աղաւթեան մարտակոչը: Այսօր՝ ստիպուած է միջազգային պողոտաներն ալ թնդացնել, որպէսզի սուտ մարգարէները դարանի չկենան հայրենիքի կարօտէն շարած բազմութիւններուն առջեւ:

Երէկ՝ միայն արտաքին թշնամին էր, որ կը սպառնար: Այսօր՝ հարազատն ալ պատրաստ է բզբռելու անկախութեան դրօշը, առանց արթնուն հսկողութեան եւ յարատեւ ճիգի:

Դա՛նն է մեր ներքին ճակատի կազմալուծումը նոյնիսկ ազատութեան, անկախ եւ միացեալ հայրենիքի դեռնի վրա: Բայց ամուլ հառաչանքը չէ, որ պիտի դարձանէ այդ կացութիւնը, այլ գործօն եւ հաստատակամ աշխատանքը:

Անոնք որ տեղի-անտեղի գոհունակութիւն կը մատուցանեն այսօրան մանրանկար Հայաստանին, ու կը հաւատան անոր ապագային, այդքանն իսկ ցնորք կը համարէին երէկ:

Մենք վստահ ենք որ, ուշ-կանուխ, անոնք նոյնքան ջերմեռանդութեամբ պիտի հաւատան Մայիս 28ին: Պիտի համախմբուին անոր շուրջը:

Ոչ մէկ ընկերու՛մ՝ այն ճամբուն վրա, որ կը կոչուի Միացեալ եւ Անկախ Հայաստան:

Մայիս 28ով բացեցաւ այդ ճամբան: Կոխով եւ արիւնով:

Ճամբուն կէսը կտրած ենք արդէն, եւ անյաղթելի չէ մնացեալ կէսը, եթէ միայն ուղիղ նայինք նշանակէտին եւ ամուր քայլենք:

ԴԱՒԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ

Այս տարի արտակարգ պատրաստութիւններ տեսնւած էին Երեւանի մէջ, տօնելու համար մայիսեան ապստամբութեան տասնամեակի:

Ապրիլի առաջին օրերէն մասնաւոր հրահանգներ տրեցան: Պետական հրատարակչականը ձեռնարկեց ապստամբութեան վերաբերեալ հրատարակութեանց տարածման: Լոյս տեսաւ ժողովրդական գրքոյկ մը, յատկապէս գիւղացիներու համար: Հրատարակեցան ապստամբութեան մասնակցողներու լուսանկարները: Հայաստանի բոլոր թերթերը բացառիկ թիւեր հրատարակեցին Մայիս 2-ին: Բոլոր դպրոցները դասեր յատկացուցին ապստամբութեան: Սարժեցան երեկոյթներ, թափօրներ, ձրի շարժանկար, ցուցահանդէս եւ զբօսանքներ: Բոլոր սկիւմբներուն մէջ տրեցան զեկուցումներ: Հաւաքական տնտեսութեանց համար կազմակերպեցան յատուկ երեկոներ: Գործարաններու բանտրները ղրկեցան զիւղերը:

Մէկ խօսքով, — կատարեալ ցուցահանդէս, արեւելեան տօնալմաճառ, փառաբանելու համար դէպք մը, որ ամէն բանէ առաջ դատապարտութիւնն է Հայաստանի այսօրան իշխանաւորներուն: Անջնջելի արտաքին անոնց ճակտին:

«Ս. Հ.»-ը պարծանքով կը յիշէ (18 Ապր.) — «Տար տարի առաջ, 1920թ. Ապրիլ 28ին, հսկտեմբերեան մեծ յեղափոխութեան պի՛քները վերջնականապէս իրենց մէջ առան Անդրկովկասի պրոյետարական կեներոնը — յեղափոխական Բագուեւ, ուր հաստատուեց պրոյետարիատի դիկտատուրան ու ծաւալեց ամբողջ Ադրբէյջանում:

«Ադրբէյջանի խորհրդայնացոււմը հանդիսացաւ Հայաստանում յեղափոխութեան պտոթկումն արագացնող կարևորագոյն մի փակտոր»:

Կը հետեւի թէ՛ տասը տարի յետոյ ալ, հայ բոլշեւիկները ոչ նոր բան մը սորված են, ոչ ալ բան մը մոռցած՝ 1920ի նախնական գիտելիքներէն:

Եւ սակայն, այս տասը տարին պարապ չանցաւ իրենց, բոլշեւիկներուն համար, գոնէ իբրեւ մտքի մարզանք: Անոնք հրապարակ հանեցին շարք մը գրքոյկներ, յուշեր եւ լրագրական յօդւածներ, որոնք լայնօրէն կը լուսարանեն դաւադրութեան զանազան ծաղերը: Դեռ 1919 սեպտեմբերին, սխրահոշակ Մարգիս Կասեանը, Պորճրդային Հայաստանի անդրանիկ վարիչը, իր ստորագրութեամբ կը խոստովանէր թէ՛ բոլշեւիկեան գործունէութիւնը Հայաստանի մէջ՝ սկսած էր 1919ի ամսունէն: Նոյն տարւան սեպտեմբերին, դադտանի ժողով կը դումարեն, կը կազմեն Հայաստանի Կոմիտէ, եւ կ'որոշեն, — «Պորճրդային հանրապետութեան հաստատուումը Հայաստանում»: Թէ՛ եւ, Հայաստան աշխարհին մէջ, «արդիւնագործութեան կապիտալիզմի նշոյն անգամ դոյութիւն չունի» եւ, «ազգաբնակչութեան 90%՝ը աղքատութեան եւ զրկանքի մէջ է քարշ տալիս իր խղճուկ դոյութիւնը»:

Ուրիշ խօսքով, երկրին պայմանները չէին որ հարկադրեցին ընդգլխի, այլ՝ Մոսկուայի հրամանը եւ Բագուի նախաձեռնութիւնը: Մոսկւան պէտք ունէր ոչ միայն Բագուի քարիւղին, այլ եւ ազատ անցքի՝ դէպի Թուրքիա: Անշուշտ, Հայաստանի մէջըլին վրա: Հայ բոլշեւիկները եթէ մոռցած են 1920 մայիսի արիւնոտ խեղիատակութեան նախընթաց դէպքերը, թուրք-խորհրդային փոխադարձ յանձնառութիւններն ու գործակցութիւնը, կրնան կրկին եւ կրկին կարող իր գործի պատմական դասին արձանագրութիւնները:

Արդարեւ, յուսախար՝ ամէն ճակատի վրա եւ ջղադրգին՝ իր զարհուրելի մեկուսացումէն, Մոսկւան ունէր միայն մէկ յենարան, — ապստամբ Թուրքիան: Մէկը միւսին կրթնած՝ կը կուէին միեւնոյն ճակատին դէմ: Հայաստանը, եւ աստիճան մըն ալ Վրաստանն էր որ կը դժւարացնէր փոխադարձ աջակցութիւնը: Մոսկւան Սեւ Մոլոս ափերը քերելով, դադտապողի, հազիւ կրնար դրամ եւ զէնք հասցնել իր հաւատարիմ զինակցին: Ադրբէյջանի խորհրդայնացումը, ինքնին, սարքած էր Թուր-

քերու հետ խորհրդակցաբար, ուժ տալու համար քեմալական տիրապետութեան: Եւ Բազուի անկումը արդէն ճամբայ կը բանար դէպի Երեւան եւ Թիֆլիս, միշտ միեւնոյն առաջադրութեամբ, — ուղղակի յարաբերութեան մէջ ղենկ Մոսկուան եւ Էնկիւրբին, զէթ հարաւէն վերահաստատել նախկին Ռուսաստանը եւ փրկել Թուրքիան:

Ճիշտ կը խօսի «Ս. Հայաստան»ը. — «Ազգբէշանի խորհրդայնացումը հանդիսացաւ Հայաստանում յեղափոխութեան պտտիումն արագացնող կարեւորագոյն մի Փակտոր»:

Իսկապէս, Բազուի մէջ էր, որ դարբնեացաւ մայրիտան դաւաղութիւնը: Առաջին եղբայրասպան կոխը: Ապստամբութեան հնոցները կազմեցան հայ-ազգբէշանեան սահմանին վրա, Ղազարի մէջ, թէեւ սկզբնական պտտիումը տեղի ունեցաւ արեւմուտքէն, Արեւմտադրասպոր-կարս շրջանին մէջ:

Արդիւնքը, — Նորագոտ ժողովուրդը, խորապէս խոցուած, ոտքի կանգնեցաւ մէկ ժարդու պէս, պաշտպանելու համար վտանգուած հայրենիքը: Երկրի բոլոր մասերէն, ամենէն յետին գիւղէն կամարտական խումբեր կը կազմէին, խափանելու համար շարաշուք դաւր: Իրանակցութիւնը, ինչպէս նման պարազաններու մէջ, շարժման մէջ դրած էր իր ամբողջ ուժը, պատասխանատու վարիչէն մինչեւ վերջին վինկորը: Վտանգին դիտակցութիւնն ունէին, նմանապէս, միւս հասանքները: Համաժողովրդական այգպիսի գրոհ՝ մէկ ալ փետրուար 18ին տեսնեցաւ, միեւնոյն դաւադիրներուն ղէմ: Ո՞ր ուժը պիտի կրնար դիմանալ այդ ամենի յորձանքին:

Եւ գլխիկըր փախուստի մատնեցաւ դաւադիր խմբակը, տեղի տալով որ աշխատաւորի արիւն թափի աշխատաւորի ձեռքով, յանուն ժողովրդավար հայրենիքի փրկութեան:

Յաղթե՛ց արատութեան, խաղաղ ստեղծագործութեան ծարաւի ժողովուրդը: Բայց, չզգաստացաւ ներքին թշնամին, քանի որ իր կռնակն ունէր հակայական Ռուսաստանը: Ընդհակառակն, ամուր խորխոսի ձգած Բազուի մէջ, վերակազմեց իր ուժերը, եւ շարունակեց փորել հազի կազմաւորուած պետութեան մը հիմքերը: Չանազան դիմակներով սողոսկեցաւ բանակին մէջ, եւ թունաւորեց զայն: Պարտք սեպեց կազմաւորուած վերածնութիւնը ժողովուրդի մը որ նոր ազատած էր արեան մղձաւանջէն: Պարտութիւն չդրաւ միջոցներու մէջ, արդարացնելու համար տիրոջը պատգամն ու բացած վարկերը:

Ապահովաբար ուրիշ ո՛րեւէ երկրի մէջ, ամենէն մոլորականք բոլշեւիկի-անգամ պիտի կարճը՛ր այն բոլոր վատութիւններուն առջեւ, որ կատարեցան հայ բոլշեւիկներու

ձեռքով անհար ժողովուրդի մը ղէմ:

Ինչ որ տեղի ունեցաւ այնուհետեւ, — հայթուրք պատերազմ (1920 սեպտեմբեր), անկում հայկական հանրապետութեան, փետրուարեան ապստամբութիւն եւ կրկին դերութիւն, բոլորը տրամաբանական հետեւանքն են այդ սկզբնական մեղքին: Օղակները միեւնոյն շղթային: Հայաստանի այսօրեան ողբերգութիւնը կը սկսի ոչ թէ 1920 նոյեմբեր 29էն, այլ 1920 մայիսէն, երբ առաջին դաւր սարքեցաւ այնքան վայրագ թթամտութեամբ:

Այդ արիւնոտ ձեռնարկը հեռուոր կապ անգամ չունէր Լենինի նշանախօսքերուն հետ, բայց իր առաջադրութիւններով այնքան կը մօտնար ցարական աշխարհակալութեան ջրածուցութիւններուն: Եւ անոր վախճանը, վերջնական ելքը դժբախտաբար, հաստատեց բոլոր յուստեսներուն կասկածները:

Նայեցէ՛ք այսօրեան Հայաստանի — ամբողջ Կովկասի վրա — եւ կատեցէ՛ք:

Բաղդասեցէ՛ք 1920ին արձակած չունդալից խոտտումներն ու շտայլաբան յանձնառութիւնները՝ այսօրեան իրականութեան հետ, եւ քննեցէ՛ք:

Եւ սակայն, Երեւանի ոստիկանները տակաւին պարծենալու բաներ կը գտնեն մայրիտան ողբերգութեան մէջ: Ու բացառիկ ցոյցեր կը կատարեն, անոր տասնամեակին առթիւ: Անշուշտ սարսափած՝ գանգաւորներու ցասումէն, որ թէեւ չի պոռթկար, ցնցումներ չի պատճառեր, բայց երթալով կ'աճի ու կը խորանայ ինչպէս ստորերկրեայ ալիք մը:

Տասը տարի յետոյ ալ, անոնք հալածանքի մղձաւանջէն կը տառապին ոչ միայն արտասահմանի, այլ եւ երկրի մէջ: Եւ «դաշնակալութիւն» կը տեսնեն հոն, ուր Հայաստանի շարքաւ, շարատանջ գիւղացին է որ ինքնապաշտպանութեան կը դիմէ, իրենց «հարաւձային» այլանդակութեանց եւ «պիսապոտոյտ» մարդանքներուն ղէմ:

Ինչ խօսք որ, այդ իրարանցումն ու բացառիկ ցոյցերը նպատակ ունին ոչ թէ դատարարակե շարքերը, այլ իրենց երկիւղը խեղդել գոռուած զոչումի մէջ: Յրկու ռադրութիւնը, եւ թոյլ չտալ որ բանտրն ու գիւղացին խորհրդածեն, որոճան ամենօրեայ անողոք իրականութեան վրա: Երեխաներն ալ բարձրաձայն կը իսօսին, այլանդակ շարժումներ կ'ընեն մութիւն մէջ, որպէսզի փարատեն իրենց վախը:

Իսկ եւ դաւադիրներ շատ է տեսած մեր արի եւ աշխատաւոր ժողովուրդը, բայց միշտ ալ ինքն է եղած վերջին խնդրողը:

Այդպէս կ'ըլլայ եւ այս անգամ, հոգ չէ թէ նոր դարու դաւադիրները տասնամեակներ սարքեն լրատերական ճամարտակութիւններով:

Կ Է Յ Ր Հ Ա Ր Դ Ի

Աշխատաւորական շարժումը, ինչպէս էլ որ կենքի Անգլիոյ ներկայ դահլիճին ճակատագիրը, այսուհետեւ աւելի սաստկօրէն պիտի զբաղեցնէ լուսաւոր մարդկութիւնը, որպէս համաշխարհային պատմութեան մեծագոյն և բախտորոշ ազդակներէն մին:

Հայ քաղաքական հրապարակախօսութիւնն ալ ուշի ուշով պէտք է հետեւի արեւմտեան կեանքի այդ մեծ ազդակի հոլովոյթին, որուն վիճակած է հիմն ի վեր յեղաշրջել շատ մը յարաբերութիւններ նաև արժեցող Արեւելքի մէջ և ուժգին անըրազբժումներ ունենալ մասնաւորապէս Հայաստանի ու հայ ժողովուրդի ճակատաբերին վրա:

Չուտ ընկերավարական շարժումը համեմատաբար նոր երևոյթ է Անգլիոյ մէջ. և այդ հանդամանքը ոմանց համար առեղծւած մըն է: Չէ՞ որ ընկերավարութիւնը ծնունդ է նախ և առաջ սոնտեսակամ յառաջխաղացութեան, իսկ Մեծ-Բրիտանիան ունեցեր է միշտ ամենէն զարգացած տնտեսութիւնը: Այնտեղ է հնարեր շոգեմեքենան, այնտեղ է ծնունդ տուեր և կատարելագործուեր խոշոր մեքենական արդիւնաբերութիւնը: Այնտեղ է զարգացեր և մեծ առևտուրը, շնորհիւ Անգլիոյ դադութիւններուն և աշխարհածաւալ կապերուն:

Անգլիան կապիտալիզմի (դրամատիրութեան) դասական հայրենիքն է, ինչպէս և դասական վայրը ազատութեան:

Նւ. այնտեղ, բրիտանական կղզիներու մէջ է, որ յառաջացան — զեռ. 18րդ դարու մէջ — այդ կապիտալիզմի անսահման բարիքներուն: Հետ՝ նաև անոր աղաղակող շարիքները: Այնտեղ վաղածամ հրահրութեան և խորացու հսկայամարտութիւնը ունեւոր և շքաւոր դասակարգներ — երկու բեռներ՝ որոնցմէ մէկուն մէջ կը կուտակուէին հարստութիւնն ու պերճանքը, միւսին մէջ՝ զրկանքներն ու զանգուածային թշուառութիւնը:

Ինկերային այդ խորունկ տարկանոնութեանց հետեանքն է արդէն համաշխարհային ընկերավարական շարժումը, որու նպատակն է՝ բառնալ այդ ամօթաբեր ստուերները, ջնջել դասակարգերու այդ ալլաւերող հակամարտութիւնը և անտեսական գերութենէն փրկագտել ժողովրդային աշխատաւոր զանգածները, որոնց կըտ բարդակներու ստեղծաբարձութիւնն են այդ հարստութիւններն ու պերճանքը:

Թշուառութիւնը ստահարակ յեղափոխիչ է, ծնունդ կուտայ ըմբոստացումներու, շարժումներու: Նւ. Ներդային առաջին շարժումները ընկերային կամ դրասակարգային գետնի վրա տեղի ունեցան Մեծ-Բրիտանիոյ մէջ: Անկաթը, քառասյին թոխիչներ էին, առանց կադմակերպութեան և նպատակի գիտակցութեան: Թշուառութեան զոհերը ստեղծ իրենց վրէժը կը լուծէին անշունչ առարկաներու վրա: Մեքենան կուշար փոխարինելու մարդը, դուրս փտարելու մարդային ձեռքերը արդիւնաբերութենէն — և ահա զորքագուրկ աշխատաւորները կը յարձակէին մեքենաներուն վրա, կը ջարդէին, կ'աւերէին շոգեկառքեր ու գործարաններ: Ընկերային մեծ պայքարի առաջին թոթովանքն էր

այդ (19րդ դարու սկիզբները) — կոխը կ'արտայայտէր սարօթածով (խափանել, փճացնել): Պայքարը հեռոցնետէ կազմակերպւեցաւ, դասակարգային գիտակցութիւնն աճեցաւ միլիոնաւոր աշխատաւորութեան մէջ և անցեալ դարու քառասնական թւականներուն յառաջ եկաւ «շարխտս» ծանօթ շարժումը, որ քանի մը սարի շարունակ արկածեց Անգլիոյ քաղաքական կեանքը:

Կապէս բարենորոգչական շարժում մըն էր այդ, աշխատատեղերը կրճատելու և օրավարձը աւելցնելու նշանաբաններով:

Բուն արեւմտեան բախումներու բնոյթը չունէր շարտիզմը, — բրիտանական խառնածքը ընդհանրապէս խաղաղասէր է, սերահար Էլօլիսիօփի, ոչ ռէվօլիւսիօնի, աստիճանական բարեշրջման, յառաջդիմութեան և ոչ փոթորիտ ու արիւնոտ բռնկումներու, որոնք ցամաքային երկիրներու, մասնաւորապէս Ճրանսայի յատկանիչն են և յաճախ ապարդիւն կ'անցնին, հսկայական զոհեր պատճառելով (յիշեցէք միայն Փարիզեան կոմունան, որ 1871-ին, Ֆրանս-պրուսական պատերազմի օրերուն, մէկէն ի մէկ բռնկեցաւ: Առանց պատրաստութեան ու պարզ գիտակցութեան, աշխատաւորութիւնը գլխապատաստ նստակցաւ կրկեսին մէջ և ուղեց բուրժուական տապալելով իրականացնել ընկերային հաւասարութեան դրախտը: Վարեցաւ ոռու բուլշեիկներուն պէս: Բայց Ֆրանսական բուրժուազիտի, իշխող դասակարգին գերբեր զեռ ուժեղ էին և ապստամբութիւնը խիտ սուղի նստաւ աշխատաւորութեան: Անգէն, յախուռն ըմբոստացումը խեղդեցաւ արևան բաղանիքներու մէջ և միմիայն Պէն-Լաշէզի հուշակաւոր պատին ներքե շուրջ երեսուն հազար ապստամբներ գնդակահարւեցան բանակին ձեռքով...)

Անգլիոյ մէջ էլ, և ի հարկէ, եղած են արիւնոտ ժայթքումներ, ինչպէս կրօմէլեան շարժումները, որոնց ընթացքին թաղաւորը (Չարլզ Ա.) գլխատուեցաւ ըմբոստներու ձեռքով: Բայց այդ ահաւոր յեղաշրջումը, որ կատարւեցաւ զուտ քաղաքական գետնի վրայ, գրեթէ բացառութիւն մըն է այդ երկրի պատմութեան մէջ:

Աշխատաւորական շարժումն աճեցաւ այդ երկրում, քառասնական թիւրերէն ի վեր, ստեղծւեցան «Տրեդ-ունիօն»ներու վիթխարի կազմակերպութիւնները միլիոնաւոր անդամներով: Արհեստակցական Միութիւնները դարձան ծանրակշիւ ազդակ մը Անգլիոյ քաղաքական կեանքի մէջ, յամառ ճիւղերով իրազործեցին շարք մը կարեւոր բարենորոգումներ և աստիճանաբար բարուեցին բրիտանական պրոլետարիատի վիճակը: Բայց անոնք երբեք չչլղեցան խաղաղ իրենց բարեշրջական ուղիէն, երբեք չուղեցին որդեգրել ցամաքային ընկերավարական շարժման մեթոդները, զգուշացան դասակարգային սուր բախումներու վարդապետութենէն և ընկերավարութիւնն բառն իսկ, որ Ֆրանսական ծագում ունի՝ յորինած անցեալ դարու երեսնական թւականներուն, երկար ժամանակ չէին ընդունել իրենց բառերէն մէջ: Մասնաւորապէս Կարլ Մարքսի վարդապետութիւնը, որ լայն տարածում գտաւ գերման-աւստրո-ռուս երկիրներ-

րու մէջ, մնաց միշտ խորթ ու օտար անգլիական զանգեաններուն և անոնց շարժման դադափարարիօսներուն համար:

Աղպէս էր կացութիւնը, երբ ութսունական թահաններու վերջերուն, հանգէս եկաւ Վէյքը Լարդի, Մակտոնալդներու և Մոտուէններու մեծ ուսուցիչը, որ անգլիական աշխարհում մօտաւորապէս նոյն դիրքն ունեցաւ ինչ որ Բեբել Գերմանիոյ մէջ:

Բեբելի պէս, ան ալ վարչէն կուգար, խոնարհ, չքաւոր, պրոլետարական խաւերէն:

Բեբելի պէս՝ ինքնուս, առանց բարձր կրթութեան և տեսական քիչ-շատ լայն պատրաստութեան:

Կէյր Լարդի նոյնպէս սկոտլանդի էր, ինչպէս Մակտոնալտ և շատ մը ուրիշ աշխատաւորական պարագլուխներ: Լեոնային Սիոպիոյ մէջ առանձնապէս զարգացած էր բրիտանական արդիւնաբերութեան խոշորագոյն ճիւղերէն մէկը — հանքագործութիւնը: Եւ քարածուխի լայնածաւալ հանքերուն մէջ գործաւորներու կացութիւնը առանձնապէս խղճալի ու վրդովիչ էր: Կայտաւարիգը հող էր ցուցնէր իր թանձրագոյն սաւերները, իր բոլոր արաստուր կողմերը — սանձարկեղ շահագործում, դրամատիրական խրախճաններ, դրամագլխի ու աշխատանքի սուր ներհակութիւն և գանդաւաններու սե թլուտութիւն: Հողագործ ժողովուրդը, ապրուստի հոգսերով տարած, կը ձգէր իր մասն ու արօրը և խմբովի կը նետէր դէպի մեծ կեդրոններն ու գործարանները, դէպի ամխարոյր ու հեղձուցիչ անդունդները, ուր կը տքնէր չնչին օրավարձ մը ստանալու համար, վատառողջ պահպանուէր մէջ, մաշելով ու աշխատելով Փիղիքային և հոգեպէս:

Կէյր Լարդի մանուկ օրերէն բաժնեց ճակատագիրը այդ գործաւոր լեզոններուն, ապրեցաւ և տառապեցաւ անոնց հետ, յաճախ սովահար և ցրտահար:

Վաղաժամ բորբոքեցաւ անոր սրտին մէջ ստեղծութիւնը դէպի ընկերային այդ անիրաւ կարգերը, դէպի այդ նորագոյն ստրկութիւնը, որ բարբորութեան դրախտ կը ստեղծէր անչառ փոքրամասնութեան համար — հողի ու փողի դասակարգին — մինչ ահագին ժեծամասնութիւնը կը դեգերէր խաւարի ու թլուտութեան մէջ:

Ատելութիւնը ծնաւ անհաշտ պայքարի տենչը: Երիտասարդութեան վաղագոյն օրերէն Լարդի աղիտատոր մըն է, ըմբոստ մը հանդէպ դրամի իշխաններու և ամբողջ դրամատիրական սխտեմի բուռն թափով վը նետի շարքերուն մէջ և կը հրահրէ դասակարգային կտրուր, առանց ճանչնալու Մարքս և էնգելս, կամ ուրիշ որեւէ վարդապետութիւն:

Ու կը սկսի կազմակերպել հանքագործ աշխատաւորութիւնը: Կը կազմակերպէ տարբեր, արմատական ոգով: Բր առաջին մտահոգութիւնն էր իրեն պէս քլլքստ պարձնել Տրէդ-Յիւնիոններու հսկայական կազմակերպութիւնը, որ կը յամուէր իր շահաւոր տակտիկան մէջ, չէր դնէր հեռուոր նպատակներ, չէր ձգտեր չքաւոր զանգեաններու լրակատար ազատագրութեան, չէր ձգտեր իր ձեռքն առնել քաղաքական իշխանութիւնը, չէր դրաղըր աւհասարակ քաղաքականութեամբ, այլ միայն գուտ տնտեսական գետնին վրա կ'աշխատէր —

իշխող դասակարգին հետ իրաւախոհելով ստանալ մանր մունր բարենորոգումներ գործաւորներուն համար, — վարձագրի յաւելում, աշխատանքի պահանջներու բարելաւում, միջոցներ՝ քիչ-շատ ապահովելու մանկութիւնն ու ծերութիւնը, թեթեւեղելու կիներու աշխատանքը և այլն:

Կէյր Լարդի այդ ամենը օգտակար ու անհրաժեշտ սեպելով հանդերձ՝ կը քարոզէր ընդդրկել աւելի արմատական քաղաքականութիւն, ձգտիլ յեղաշրջելու ամբողջ դրամատիրական իրաւակարգը, տալ աշխատաւոր ժողովուրդի ձեռքը արդիւնաբերութեան բոլոր միջոցները — հող ու դրամագլուխ, հանքեր, գործարաններ ու մեքենաներ — և ստոր համար կը պահանջէր խոր մտուիլ քաղաքական կենսեցին մէջ, մասնակցիլ խորհրդարանային ընտրութիւններուն, դառնալ մեծամասնութիւն Օրէնդէրի ժողովին մէջ և օր մը, վերջապէս, ձեռք ձգել գործադիր իշխանութեան ղեկը, որով միայն կարելի է յեղաշրջել բոլոր յարաբերութիւնները, վերջ ղեկ փոքրամասնութեան առանձնաշնորհներուն և հնարաւորութիւն ընծայել աշխատաւոր ու տառապող ժեծամասնութեան՝ լիովին վայելելու իր աշխատանքի վատտակը, ապրելու ազատ ու բարեկեցիկ քաղաքացիներու մարդապէլ կեցեցալով:

Ուրիշ խօսքով՝ Կէյր Լարդի կը քարոզէր գործաւորներու և բոլոր ճնշւածներու դասակարգին՝ կանգնիլ ցամաքային աշխատաւորութեան պէս՝ ընկերավարութեան դրօշակին տակ:

Առաքեալին քարոզ լայն արձագանք գտաւ ժողովուրդի ամենին խոնարհ ու իրաւագուրկ խաւերուն մէջ, և միւս կողմէ՝ ուժեղ ընդդրիութիւն Տրէդ-Յիւնիոններու շափաւոր տարբերու կողմէ, որոնք կը խըրքւէին քաղաքականութենէ ու կուսակցութիւններէ և յամարօրէն կուգէին պահպանել Արհեստակցական Միութիւնները չէրգը գետնի վրա՝ խուսափելով սուր ընդհարումներէ դրամի դասակարգին հետ և անոր բերան՝ կառավարութեան հետ:

Գանի մը տարուան մէջ Կէյր Լարդի իր քարոզներով սասանեցուց այդ հակայ միութեան շնչը և Տրէդ-Յիւնիոններու զգալի մաս մը յարեցաւ իր գաղափարներուն: Այնուհետեւ ճամբան հարթեց չէր:

1893-ին հիմնեցաւ արդէն Անկախ Աշխատաւորական կուսակցութիւնը, ստաքեալի ղուշիկն տակ: Սկիզբները միապաղաղ կուսակցութիւն մը չէր: Հիմնադիրներու մէջ կային գուտ ընկերավարականներ և Տրէդ-Յիւնիոնիստ համակիրներ, որոնք չէին ընդունէր ընկերավարական վարդապետութեան բոլոր հանգանակները, բայց կընդունէին Կէյր Լարդիի երկու էական սկզբունքները. — ընկերավարացումը՝ որպէս նպատակ և իշխանութեան նաճումը՝ որպէս միջոց: Նորակազմ մարմինը հետզհետէ գտեցաւ, միշտ աւելի մօտնալով ցամաքային համանուն կուսակցութիւններուն և յարելով ընկերավարական Միջողգայինին: Ան միայն մէկ թեկն էր, ձախ թեկը Անգլիոյ Աշխատաւորական մեծ կուսակցութեան (Labour Party), որ այն ատենները ունէր արդէն մէկուկէս միլիոն վճարող և զիտակից անդամներ: Մի այլ թեկն էր Պարբեան Ընկերութիւնը (Fabian Society), նոյնպէս ընկերավարական նշանաբաններով, Սիդնէյ Ուեբի ղեկավարութեամբ: Երբորդ ու մեծագոյն հատա-

ծըն էին բուն Տրէշ-Դւնիոնները կամ Արհեստակցական Միութիւնները, որոնք հետզհետէ տողորեցան Կէյր Զարդիի արմատական գաղափարներով: Եւ այսօր բրիտանական խորհրդարանի մէջ, ձեռքի ու մտքի աշխատանքներն թրեան երեք թիւերը, պահպանելով իւրաքանչիւրը իր անունը, բայց միացած անխորհի կապերով, ունին հօգոս ներկայացուցչութիւն մը, չուրջ 290 երեսփոխաններով, որ թուով երկրորդն է և իր ձեռքն ունի Մեծ Բրիտանիոյ կառավարութեան ղեկը:

Այդ 290 ժողովրդական ներկայացուցիչները — կին ու տղամարդ — ճշմարիտ պաշտամունք մը ունին իրենց մեծ Ռահմիթայի, Կէյր Զարդի համար, որ մեռու մեծ պատերազմի ընթացքին, ստանց տեսնուել իր ջրտնաջան աշխատանքին արդիւնքը—ընկիւր՝ կառավարութիւնը:

Ինչքան ալ, սակայն, յառաջդիմին Կէյր Զարդիի գաղափարները, ինչքան ալ չեւտիք անոր արմատական ու անհաշտ ոգին բրիտանական աշխատանքութեան շարքերուն մէջ, այնուամենայնիւ, Անգլիոյ ընկերվարական շարժումը կը մնայ է կայէտ խաղաղ, բարենորոգչական՝ ու բարեշնչողական (էտրիւաիտիստ), հետո զասակարգային սուր պայքարի ընդունումներէն և յեղափոխական կարմիր ճոռմարանութենէն:

Գերման, Ֆրանսական ընկերվարական գրականութիւնը լեցուն է գալոց ընկերային յեղափոխութեան և անկէ ծնելիք իրաւակարգի գորգիներով ու գուշակութիւններով: Ընն շատ է զրուած գալիք արիւնտոսութիւններու, «կատաստրոֆներու» մասին, երբ «գաղիական աքլորը պիտի աղաարարէ վերջին ահաւոր դիցապատմարտը», երբ «օրէնքը արձակուող պիտի ստանայ», իր հետ տանելով կարգն ու խաղաղութիւնը. և երբ պրոլետարիատը, պիտի աւերածնէ իր կարմիր գիկատատրութիւնը...

Անգլիոյ ընկերվարական գրականութեան մէջ դժուար կը գտնէք նման բաներ: Անգլիացին զգաստ, իրապաշտ մարդ է: Անգլիացի ընկերվարականի ալ — ինչպէս ըսինք — աստիճանական յառաջդիմութեան արևոյնն մըն է: Զի սիրեր տերրներու, «կատաստրոֆներու» արիւնտոս վերվարումներու մասին խօսել և աքն խորունկ հաւատն ունի, որ ընկերային յեղաշրջումը, գէթ իր երկրին մէջ, պիտի կատարուի առանց մեծ ցնցումներու և տագնապներու, և որ ներկայ դրամապետական իրականագրը պիտի փոխանցի ընկերվարականին աստիճանական վերանորոգումով ու խաղաղ թափանցումով: (Այդ հաւատն ունէր Անգլիոյ մասին նոյնիսկ Կարլ Մարքս):

Ռուս բոլշեւիզմի յախուռն յաղթանակը և անոր պատճառած ահուկի շարքերը աւելի ևս ամրապնդեցին Մեծ Բրիտանիոյ՝ ընկերվարական զանդածներու մէջ յամբաբայլ երթալու անհրաժեշտութեան գիտակցութիւնը և խոր հակակրանքը դէպի գահավէժ խոյանքները, քաղաքացիական աւերիչ կոիւնտերն ու կատարածները, որոնք յաճախ յառավել կը բերեն նորագոծօրէն հակառակ արդիւնք — ոչակցիա, բռնապետութիւն ու ազատութեան շղթայում — վարկաբեկելով ամենին վսեմ գաղափարները...

Ինչքան ալ խոր էին կապիտալիզմի հասցուցած շարքերը բրիտանական աշխարհին մէջ, այնուամենայնիւ ընկերվարութեան ուսմիտները և նոյն ինքը Կէյր

Զարդի, սևատես չեն եղած իրենց մեծ ազդի գալոց անխուսափելի յեղաշրջումներու նկատմամբ: Անոնք գիտէին — գիտեն և իրենց աշակերտները, Մակտոնալտը, Հենտերըն, Մոտտոնը և ուրիշներ, որոնք այսօր կը վարեն աշխարհի մեծագոյն կապրութեան ճակատագիրը — գիտեն, որ Անգլիան երբեք չպիտի դառնայ Լեմին-Ստալինեան, ասիական սոցիալիզմի փորձադաշտ մը և որ «պրոլետարական գիկատատրութիւնք»՝ ազատութեան խոչտանդումներով ու քաղաքացիական կոիւտերով չպիտի պատուարուի բրիտանական ժողովուրդի վրա: Ատոր դէմ միշտ թուժք պիտի կանգնի ցեղային նուրբ, արթուն քնադդը, սքանչելի կարգապահութիւնը, զաստիարակութեան գերազանց սխտեմը.— թուժք պիտի կանգնեն քաղաքական դարաւոր ազատ կարգերը:

Անգլիան, ըսինք, դրասակալ վայրն է կապիտալիզմի ու գանգաւաններու պարտաւորութեան, բայց նա դասական հայրենիքն է և պարլամենտարիզմի, խորհրդարանային կարգերու և սահմանադրական ազատութիւններու: Այնտեղ թագաւորին միահեծան իշխանութիւն սահմանափակած է դեռ 13րդ դարուն»՝ և այնուհետև սատիճանարար կրճատելով, այդ իշխանութիւնը դարձել է այսօր գուտ անանական, հասեր է գերօրի:

Այդ գարմանալի ազդին մէջ ագնակատութիւնը ռամկավար է և ռամիկ դասը՝ աղնական: (Բառերով, հարկաւ, կը գործածենք յարաբերական իմաստով): Յետին գործարարին մէջ ըիշտաւ կը շեշտուի բարեշնչութիւնն առաքինութիւնը, յարգանքը դէպի մարդը՝ ինչ դասակարգի ալ պատկանի ան: Բայց և ամենէն գոռոզ լորդը, իր դիրքերը պաշտպանելով հանդերձ, զգասուն է և ուշադիր դէպի ժամանակի պահանջները, դէպի հանրային կարծիքը: Ահա թէ ինչու Մեծ Բրիտանիան իր ուշադրաւ պատմութեան ընթացքին շատ անգամ կարողացեր է խուսափիլ քաղաքացիական բախումներէ ու արիւնհեղութիւններէ, մինչ հարեան Պրանսայի պատմութիւնը լի է կուր և արիւնի տեսարաններով:

Եւ ահա թէ ինչու ընկերվարութեան առաջնակարգ տեսարանները լաւատեսութեամբ յայտարարեր են միշտ — և նոյնը յաճախ շեշտեր է ճառերու, յօլաւաններու մէջ՝ Անգլիոյ ընկերվարական ներկայ վարչապետը — որ բրիտանական աշխարհին մէջ, ամենայն հաւանականութեամբ, իրերը պիտի ընթանան բարեշնչողութեան ճամբով, խորհրդարանային, սահմանադրական ճամբով, այսինքն ազդի օրինաւոր ներկայացուցիչներու մեծամասնութեան ազատ վիճաբանութիւններով ու որոշումներով — և ոչ երբեք արիւնահեղ սասանումներով, բլու մը փոքրամասնութեան ժակորինեան զաւերով ու թուիչներով... Մ. ՎԱՐԱՆԴԻԱՆ

*) Ճրամատայի մէջ՝ միայն 1789-ին: Ապա Մեծ Յեղափոխութեան ցնցումներէն յետոյ, Բոնապարտի օրով վերահաստատուեցաւ ինքնակալ միապետութիւնը, որ կարճատև ընդհատումներով իշխեց մինչև 1871 թականը, երբ հուշակեցաւ Հանրապետութիւնը: Գերմանաստորիական երկիւրներու մէջ քաղաքային իրաւունքներու սահմանափակումը կատարուեցաւ 1848-ին, յեղափոխական հարւածով մը և համետ չափով խորհրդարանի մը հաստատումով:

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌԵՐ ԲՆԵԱԿԱՆ ԱԿՆՈՅՈՎ

Բ .

Նախորդ յօդածով իխտ համառոտակի թւեցինք թէ ինչ տեղի ունեցաւ 1915ին: Հետաքրքրական է և կենսական գիտնալ թէ ինչո՞ւ այդպէս ընթացան դէպքերը: Այս հարցումին քննութիւնը սահմանափակելով հայ ժողովուրդի ներքին կեանքով, անժողանալի պատմական դաս մը պիտի ըլլար, առարկայական լոյսի մը տակ պարզել այն պատճառները, որոնք մղեցին հայ ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը կրաւորական համակերպութեան, և դատապարտեցին յղափոխական մարմինները անվճռական կեցածք մը ունենալու:

Հայ ժողովուրդի բունած դիրքը երբ քննութեան կ'առնենք, ստիպած ենք աչքի առջև բերել 1) անոր քաղաքական մտածողութիւնը, — ընդհանրապէս հանրային կարծիքը, և 2) անոր Ֆիդիքալան-գլխական կարողութիւնը: Որով խնդրի լուսարանութիւնը կը ջանանք ընել մեր իրականութեամ տարողութեամբ և ոչ թէ ցանկալիութեամ թիպարանով:

1915ին հայ ժողովուրդի բարոյական և Ֆիդիքալան գոյովիճակը, այդ օրերու անմիջական արդիւնքը չէր, այլ կազմաւորած էր նախորդող 6-7 տարիներու ընթացքին և հետևաբար, հայութեան վարակելիքը արամբանական հետեւանքն էր սահմանադրական (Թուրքիոյ) շրջանի ձևաւորած մտայնութեան:

Որքեմն, անհրաժեշտ է պատկերացնել այն բնաւորումը որուն ենթակայ եղաւ հայ ժողովուրդը և որը իր արդեցութիւնն ունեցաւ նաև հայ քաղաքական կուսակցութիւններու վրա: Այս պարզարանութեամբ միայն կարելի է յստակ գաղափար մը կազմել Արիւիւնան Եղեռնի անանուն մարտիրոսաբերութեան վրա, ու ըսել թէ՛ ինչո՞ւ մարդով ժողովուրդ մը բունեց համակերպութեան ճանապարհը:

Աւելի հեռունըր շերթանք. նկատի առնենք 1908-ին հռչակած թրքական սահմանադրութեան շրջանը, ուր հայ քաղաքական հասանքներն իրենց արդով կերպարանքով հրապարակ եկան: Սահմանադրութեան յղափոխականներն ու իրաւասարդ Թուրքերը օրասն հերոսներ կը ներկայանային: Բունակալութեան լուծին տակ ճգմած ժողովուրդը ծափերով և կեցցէներով կը դիմաւորէր ազատութեան համար մարտնչողները: Յեղափոխական կազմակերպութիւններուն մասնակցիլը ցանկալի պատիւ մըն էր, որուն կը ձգտէին շատերը: Համիտեան վարչաձեւը հետ կապուած տարբեր ամօթանքով կը լռէին և կամ շքեղանքներ կը փնտռէին: Չկողք ու անպէտ տարբեր պարտականութիւն մը կատարելու անապարտներն մէջ յղափոխութեան համալիր կը անդդիտանային, անիծելով անցեալը, որ թոյլ չէր տաւ իրենց յանդուգն անձնագործութիւններով ազգի փրկութեան գործին ներկելու:

Հ. Յ. Դաշնակցութիւնը թէ հայկական կեանքի և թէ պետական ընդհանուր կեանքի մէջ հանդէս կուգար

յեղափոխութեան առաջին շարքին վրա: Որովհետև Համիտեան բունակալութեան շրջանին, Դաշնակցութեանը հանդիսացած էր ամենին յանդուգն յեղափոխական կուսակցութիւնը, որ ոչ միայն շեշտակի հրապարակ դրած է Հայոց ազատագրական ինչդիրը և հետապնդած էր յարատեւըն, այլ նաև հեռատեսութիւնն ունեցած էր գործակցելու միւս ազգերու մէջ գոյութիւնն ունեցող յեղափոխական խմբակներուն հետ, համապետական կուռի մէկ ճակատ ստեղծելու Համիտեան բեժիմի դէմ: Ու եթէ Երիտասարդ Թուրքերն ու զինուորականները ազատութեան հռչակման առաջին զերակատարներն էին, անոնք իրենց հետ հաւասար գծի վրա կը դնէին Հ. Յ. Դաշնակցութիւնը, որու հետ տակաւին 1907ին, Փարիզի հայ-թրքական համագործակցութեան և համերաշխութեան խորհրդաժողով գումարած և համաձայնագիր ստորագրած էին:

Դաշնակցութեան, կամ, ընդհանուր խօսքով, յեղափոխականներու գերակայութիւնը երկար շտեկ: Առաջին կիսամեակի խանդավառութիւնը հետզհետէ կը սլակէր. հարկադրաբար լուծ տարբեր իրենց անձնագործութիւնը կը գտնէին և հասանքներն ու մտայնութիւնները կը քաշէին իրենց իրական արեւելի և իրենց իսկական գոյներով կը ներկայանային մեզի: Հ. Յ. Դաշնակցութիւնն ալ իր կարգին, չբաւականացաւ միայն խանդավառ ցոյցերով, այլ անցաւ արմատական աշխատանքներու, որոնք հայկական ներքին կեանքը ցնցելու և արթնցնելու բնոյթն ունէին: 1909ի սկիզբները հրապարակ կուգար «Արատամարտ» քաղաքական մեծ օրաթերթը, ինքնաշատուկ և խորունկ ապու մը բանայով թրքահայ անդրին իրականութեան մէջ: Դաշնակցական մտաւորականները ներս կը մտնէին կրթական հաստատութիւններէն: Ազգային ժողովներու և մարմիններու մէջ, թէ և փոքրամասնութիւն մը, բայց գործօն աշխատանքով մը իրենց վճռական խօսքը կ'ըսէին, տուն տալու համար հայկական ընթացիկ կեանքին: Նոր և հին մտայնութիւններն իրարու կը բախէին: Ընկերային և քաղաքական մտայնութեան բախումին գուզընթաց, ու անոր օրպէս գլխաւոր դրդապատճառ՝ դատելու և դատակարարելու պայքարը կը սրէր. ամէն տեղ, ու ամէն գործի մէջ հակադիր ճակատները դէմ դէմի կը ցցուէին:

Այս մակընթացութեան և տեղատուութեան օրերուն, 1909 մարտ 31ին Համիտի յետադիմական շարժումը կը պայթէր. ու կարմիր սուլթանին սարսափը նորէն մըթնորոտը անշնչելի կը դարձնէր: Թէ և հակահարածը կուգար շատ արագօրէն մէջըր դնելու Համիտի Աշխատութեան, սակայն, յետաշրջական քայլը Մատնայի կոտորածի պատճառ կը դառնար՝ մթազնելով հայկական կեանքը, տակաւին ազատութեան բարիքները չվայելած:

Հ. Յ. Դաշնակցութիւնը գիտակ այն վտանգին, որ

մայրաքաղաքէն մինչև հայկական նահանգները կր սպառնար ինզղել սահմանադրական արատու թիւերն և վերականգնել Համիտեան բռնակալութիւնը. և միւս կողմէ, ձգտելով լուծել հայկական նահանգներու հոգային հարցը (որ հայ-քրտական յարաբերութեանց մէջ ամենէն ծանր ինզղիրն էր) սահմանադրական կառավարութեան նախաձեռնութեամբ և օժանդակութեամբ, 1909ի զարնան դաշինք կը կնքէր Իթիբալէտին հետ երեք հիմնական նպատակներով. 1) որ կառավարական կուսակցութիւնն ու Հ. Յ. Դաշնակցութիւնը յետաջրկան բոլոր տեսակի շարժումներուն զէմ պիտի կուրի միացեալ ուժերով՝ ի պաշտպանութիւնը 1308ի սահմանադրական արատութեան, 2) որ կառավարական կուսակցութիւնը պիտի հետապնդէ հողային հարցի լուծումը ի նպատտ հայ ժողովուրդի, և 3) կառավարութիւնը միջոցներ ձեռք պիտի առնէր տեղական լայն ինքնավարութիւն մտցնելու Թուրքիոյ վարչական կազմակերպութեան մէջ:

Եւ իրօք, 1909ի Համիտեան դաւադրութեան զէմ հրապարակի վրա կը մնային փոքրաթիւ իթիբալէտականներ և Հ. Յ. Դաշնակցութիւնը, որոնք զենքի կը դիմէին արատութեան պաշտպանութեան համար:

Իսլաց զէպները արագ րնթացան. սահմանադրական բնականոն վիճակը վերահաստատուեցաւ. Համիտը դահրնկեց եղաւ. ժողովուրդը պահ մը խանդավառեցաւ, աիթները շուտով դադրեցան, ու հանրային ուժերը մտան իրենց մնայուն հուներն մէջ: Համապետական կենսքը հանդարտեցաւ:

Հայկական կենսի ներքին փոթորիկը պայթեցաւ: Յետադիմական շարժում մը (որ իր ժամանակին կոչուեցաւ Խյ շրիաք-իթիբալէ) սկսաւ Հ. Յ. Դաշնակցութեան զէմ, որպէս միակ կազմակերպւած և ուժեղ յեղափոխական կուսակցութեան: Այդ հակադաշնակցական ճակատին միացան հայ յետադիմականները (պահպանողական անունի տակ), ռամկավարները (անկազմակերպ), հնչկանները (թէ՛ն միշտ կը խօսէին յանուն ընկերավարութեան և Մարքսին), կղերականներու մեծամասնութիւնը, հայ հարուստ, կալւածատէր և աւետարական դասակարգը, և բազմաթիւ ապադասակարգային տարրեր, որոնք անձնական շահերէ դրդուած կամ քաղաքական տահապետութեան բերումով հակադաշնակցական ճակատին յարեցան:

Այս պայքարը, որ իր էութեան մէջ դասակարգային և ընկերային աւելի խոր պատճառներ ունէր, դրսևորուեցաւ խիստ ամբոխավարական ձևով մը, Դաշնակցութեան ղեկավարութիւնը նսեմացնելու և թուլացնելու համար: Հակադաշնակցները հրապարակ եկան թոյլատրելի և անթոյլատրելի զէնքերով և կրցան իրենց բազմանքին հասնել:

Բախտի շար կատակով մը, Թուրքին սարկօրէն հնազանդողներն ու գործակցողները Դաշնակցութիւնն ամբաստանեցին Իթիբալէտի հետ իր ունեցած համաձայնութեան համար և Թուրքերու զէմ եղած ստելութիւնը ջանացին ուղղել յեղափոխական կուսակցութեան զէմ:

«Բացի և զոցի» ինզղիրը շահագործեցին յանուն հայ եկեղեցիի պաշտպանութեան և Դաշնակցութիւնը չըս-

չակեցին որպէս եկեղեցիները պղծող և քանդելու միտող:

Ընտանիքի «սրբութեան» պաշտպան հանդիսացան (առանց քնտանեկան սրբութիւն ունենալու) և Դաշնակցութիւնը ներկայացուցին, որպէս «ազատուէրեան» հուսակցութեան մը և կը ըրին ընտանիքներէն դուրս վտարել զայն:

Կրթական հաստատութիւններէն հետզհետէ դուրս աշխատեցան վտարել դաշնակցականները, որպէս նոր սերունդը մոլորեցնող հոսանք մը:

Այս բոլորով չբաւուրանացան. այլ աշխատեցան ցոյց տալ որ համիտեան շրջանի դժբախտութիւններու պատճառը յեղափոխականներն էին, և զլիսաւորաբար Հ. Յ. Դաշնակցութիւնը: Ձկնքը, ասորճանակն ու «Սոփան» առասպելական պատմութիւններու նիւթ դարձան. յեղափոխականները ներկայացուցան որպէս կոպիտ աւագակիր: Երգիծական դրականութիւնը օժանդակ հանդիսացաւ. այս յետադիմական շարժման, ու յեղափոխականներու զէմ ստելութիւնը, վախը և ծագրանքը թե առին շրջանակէ շրջանակ: Դիմադրուելու համար Դաշնակցութեան թարմ հոսանքին, հակաաւտորիտներն ամէն ջանք թափեցին քանդել կազմակերպուած ուժ մը, զայն ներկայացնելով վնասակար, աղպակործան ու րնկերային կենսքին խտուրի, թէ՛ որպէս ընկերավարական և թէ՛ որպէս զէնք գործածող կուսակցութիւն մը:

Հ. Յ. Դաշնակցութիւնն անուշտ ձեռները ծալած շրիմաւորեց այս շարժումը: Սահմանադրական արատութեան խանդավառ օրերն անցնելէ յետոյ, Դաշնակցութիւնն իր ամբողջ թափով լծուեցաւ բազմապիսի աշխատանքներու և իր դրոշմը դրու հանրային, քաղաքական և մշակութային բոլոր երեւոյթներուն վրա: Դաշնակցութիւնը հայկական նահանգներուն մէջ մասամբ պահպանեց իր յեղափոխական-դիմական կազմակերպութեան բնոյթը, իսկ ընդհանրապէս ամբողջ Թուրքիոյ սահմաններուն մէջ, տարւեցաւ պետական և ազգային-հանրային և մշակութային գործերով:

Ճակատներու այս դասաւորութեամբ ընթացաւ հայկական կենսքը ամբողջ շորս տարի, մինչև 1913 թեականը: Դաշնակցութիւնը արմատացած ըլլալով հոծ զանգուածներուն մէջ, միշտ տիրական ուժով մը կը ներկայանար. սակայն, ազգային պաշտօնական կենսքին մէջ (երեսօք. ժողովներ, խորհուրդներ և յարակից ամբարիները) Դաշնակցութիւնը, րնտրական սիտեմներու բերումով՝ մնաց ընդդիմադիր կուսակցութիւն մը:

Բացի քանի մը շրջաններէ, մնացած բոլոր վայրերուն մէջ ազգային պաշտօնական կենսքի ղեկավարութիւնը մնաց հակադաշնակցական հոսանքներուն ձեռքը:

Խաղաղ ժամանակաշրջանի մը հոգեբանութեամբ, ընդդիմադիր հոսանքները լարած պայքարի մէջ մնային, և ջանացին իրենց տեղն ու դերը որոշել հանրային կենսքին մէջ: Ետտ ջիշերը միայն Լըբեմէ կանչուողաւոնային որ այդ խաղաղ ժամանակաշրջանը կրնար տեսական ըլլալ: Դերագոյն վտանգի մը հաւանականութիւնը մոռացութեան տուած էր հայ ժողովուրդի մեծամասնութեան կողմէ: Տարրական ինքնապաշտպանութեան մտահոգութիւնը բաժին կը մնար միայն Հ. Յ. Դաշնակցութեան: Պետք է խոստովանել

նան, որ այդ մտահոգութիւնն ալ մասնաւորաբար կը ծանրանար Հայկական քանի մը նահանգներու դաշնակցական Կ. Կոմիտէներուն վրա, որոնք ազատագրական շարժումներու դժոխակ բողոքն անցած էին:

Վերջ յիշած պարզորոշ անհետեւեք չմնացին: Նախ, Հակոտակորդ կողմերը իրարու դէմ լեցուցան ասուլիսներով և բոլորովին վարկաբեկեցան իրարու աչքին, համաձայնութեան հզր մը անկարելի դարձելով, ու յետոյ մարկաբեկեցան անտարբեր (դոռեկ կոչեցէք ճշգրտեք) հոծ զանգուածներու աչքին:

Երկրորդ, չկարուցիւնը պատուաւոր դերք մը նկատուեցաւ: Հոծ զանգուածները, իրենց թոյլ ընթացքն արդարացնելու և նիւթական ու բարոյական զոհողութիւններէն դուրսնալու համար, ապտասանեցան ճշգրտեքնալի պիտոյն, ակնյայտի Հակախղափոխական տրամադրութեամբ: Թէև Հակադաշնակցական հոսանքներուն գործօն աշակցութիւն ցոյց չէին տար (որովհետև անջիլդ ու զոհողութեան անընդունակ տարբեր էին), բայց լրենց գանդաւածային անշարժութեամբ և պահպանողական կամ անորոշ մտայնութեամբ թուով կը կազմէին յեղափոխական կազմակերպութեան առջև: Աւելին, Հակաբարձականներն այն աստիճան իրար յագնեցուցին և վարկաբեկեցին, որ չէզոք տարրը, իր անդոյն քաղաքական դիմագիծով հերոք ուժով, — իրաւարարը (արդիթը) հանդիսացաւ հակառակորդ հոսանքներու միջև: Այս միջանկեալ տարրին դերը որքան աւելցաւ, ազգային քաղաքական միջնորոտն այնքան աւելի մշուշապատ դարձաւ:

Երրորդ, ընդհանուր պետական խնդիրները կրկնորդական դժի վրա մնացին (զոնէ Հակադաշնակցական հոսանքներու և չէզոք տարրի համար): Քրտական և թրքական վտանգը մուշուցեալ, կամ նւազ նկատի առնուեցաւ, քան «բացի և գոցի», կամ Երուսաղէմի խնդիրները:

Չորրորդ, հայ ժողովուրդն օգուելով ազգային մշակութային ներքին ինքնավարութենէն (Ազգ. Մահ. մանադրութիւն), ընդհանրապէս մշակութային համայնք մը դարձան, ինչ որ իր կարգին ազդեց Հ. Յ. Դաշնակցութեան վրա:

Լինդերորդ, բացի Դաշնակցութենէն, մնացած հոսանքներու և տարբերու համար գէնքի ուժը և յեղափոխական կազմակերպութիւնները մեր ազգային գոյութեան անհրաժեշտ միջնորդը ըլլալէ դադարեցան. նոյն իսկ արհամարհանքի նիւթ դարձան:

Վեցերորդ, թրքական կառավարութիւնը ուրախ աչքով դիտեց Հայկական ներքին պատակտուժը, զիտակցելով որ համապետական կիսնքին մէջ ընդդիմութիւն ոյժ մը կը թուլոյն և մանաւանդ, հայ ժողովուրդի ուշադրութիւնը կը հեռանայ Հայկական հարցէն: Թէև Հակադաշնակցական հոսանքները իստորէն շարունակեցին իրենց յարձակումները Դաշնակցութեան դէմ՝ իթիթիստ-Դաշնակցական համաձայնութեան համար, և այդ առթիւ Հակաթիթիստ տրամադրութիւններ արտայայտեցին, (իթիթիստական կառավարութիւնն այդ Հակախղանքն ուղղած նկատեց թուրք ազգին վէմ), բայց կառավարութիւնը շատ կարեւորութիւն չէր տար այդ հոսանքներուն, վտահ զիտանալով որ հայ ժողովուրդի կազմակերպած զինական և յեղափոխական ուժը կը հանդիսանար Հ. Յ. Դաշնակցութիւնը, և հետեւաբար իր զբարեկամ» ու միևնոյն ժամանակ խարդախ աչքը կը պահէր անոր վրա:

Այս բոլորին վրա պէտք է աւելցնել նաև այն ծանրակշիռ զայլը, որ Հ. Յ. Դաշնակցութիւնն առաւ, չեղեալ հռչակելով իթիթիստ-դաշնակցական համաձայնութիւնը: Երեք տարւան քննադատութիւններն ու ամբողջաբարական յերիւրանքները անպատաստրամադրութիւն մը ստեղծեցին Դաշնակցութեան ծոցին մէջ հանդէպ վերոյիշեալ համաձայնութեան: Միւս կողմէ իթիթիստական կառավարութիւնը կ'ուշանար լուծում տալու հողային հրատապ հարցին և տեղական ինքնավարութեամբ մը բարձրացնելու հայ ժողովուրդի իրական կացութիւնը Հայկական նահանգներուն մէջ: Եւ դեռ աւելին, — ան հետզհետէ կը շեշտէր իր չկամութիւնը, կը ժխտէր զանազան յանձնառութիւններ, ու մանաւանդ՝ անտարբեր կը ձևանար ի տես Հայկական նահանգներու մէջ հետզհետէ աճող անապահովութեան, որ իմ ծանրութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան ամենէն մեծ մտահոգութիւնը կը կազմէր: Այս ամենը, 1911ին վերջերը, իրարու միացած, մղեցին Դաշնակցութիւնը իթիթիստ-դաշնակցական համաձայնութիւնը շեղեալ համարելու: Այս զայլով, փաստօրէն Դաշնակցութիւնը կը միանար Հայկական ընդհանուր մտայնութեան, անշուշտ, ընդդէմ Թուրքերուն: Պէտք է խոստովանել, որ ոչ հայ ժողովուրդը և ոչ ալ Հ. Յ. Դաշնակցութիւնը նախապատրաստած չէին (Ֆիդիկա-կան ոյժ չունէին), բացի ի բաց թշնամի ճակատի մը վրա կանգնելու ընդդէմ Թուրքերուն, որքան ալ այս վերջիններու ընթացքը նպաստաւոր ըլլար հայութեան հիմնական պահանջներուն:

Սակայն, Դաշնակցութիւնը Իթիթիստի հետ իր յարաբերութիւնը խզելի յետոյ ալ, չկրցաւ համադրութեան թեան գետին մը գտնել Հակադաշնակցական հոսանքներուն հետ: Ազգային պաշտպանութեան խնդիրը կը մնար անորոշ, կամ միայն Դաշնակցութեան մտահոգութեան ստարբայ: Բայց Դաշնակցութեան հոգեբանութեան մէջ ալ բեկումն մը յառաջ եկած էր, — այդ յան է, որ Դաշնակցութիւնը ինքզինքը մինակ չէր զգար և իոհեմութիւն կը նկատէր համազգային ուժերով հրապարակ զալ՝ ազգային կարևոր խնդիրները լուծելու համար: Ահա Հայկական համերաշխութեան բարոզը, որ դարձաւ Դաշնակցութեան կարգախօսը: Բայց Հայկական իրականութիւնը կը մնար նոյնը: Ներքին կազմալուծումը կը շարունակէր, փոխադարձ անվստահութիւնը կ'աւելնար. հայոց ազգի պաշտօնական ներկայացուցիչները կը մնային պատրիարքաբաններն ու առաջնորդարանները, իրենց կատարեալ անզօրութեամբ, հայ-թուրք համերաշխութիւնը կը իջկէր, հայ կուսակցութիւններն իրարու պլլւած կը մնային, ու Դաշնակցութեան խօսքը, իր շարքերէն և համակիրներէն դուրս, կը հնչէր դատարկութեան մէջ:

Գէպէքն այս հունով ընթացան մինչև 1912ի վերջերը, երբ Բալկանեան պատերազմէն յետոյ, հրապարակ եկաւ Թուրքին այդամահատութեան խնդիրը: 1913ին երկու համազգային կարևոր անցքեր տեղի ունեցան Հայկական կենսաբան մէջ, որոնք ներքին պայքարի տեղի չուէին, 1) Հայ Գրեթու գիտի 1500ամեակը

և տպագրութեան 500-ամեակի հանդիսաւորութիւնները . 2) Հայաստանի բարեկարգումներու հարցը :

Հայ ընդդիմադիր հոսանքները, կարելի է ըսել, յոգնած էին: Յոգնած էր նաև Հայ ժողովուրդը, և խաղաղ միջոցառում կարօտ: Առանց համաձայնութեան և համազորածակցութեան, հոսանքները փոխադարձ դիմադրութիւնով, մէկ ճակատով դուրս եկան այդ երկու հարցերու քննութեան և զործադրութեան ընթացքին: Դանակցութիւնը բռնած էր իրաւախոհութեան ուղին ի սէր հայկական համերաշխութեան և հաւաքական ուժին: Ու բացայայտ է, որ այս ընթացքով, յիշատակական կազմակերպութիւնը հեռոգհեռ էր կրօնացիներ իր բացարձակ անկախութիւնը և հոգեբանութիւնը՝ միս միտակ ներկայանալու պատասխանատու հայկական ճակատադիր տնօրինման ինդիքներուն մէջ:

Սակայն, այդ երկու կարևոր ացքերը, որոնք համազգային նշանակութիւն ունէին, իրենց էութեամբ Հայ ժողովուրդի ներքին կազմակերպութեան, Փրօքթիական ուժի և վտանգները դիմադրաւելու տեսակետներէն մեծ արժէք չէին ներկայացնէր: Այլ խօսքով, մեր ներքին ուժերէն և նախապատրաստութիւններէն չէին բխէր: Եւրո մշակութային տօնը պարզ հանդիսութիւններ կատարելու մէջ կը կայանար և երբեք այն նշանակութիւնը չունէցաւ թէ Հայ ազգային կեանքը կազմակերպւած ու հաւաքական ուժով պիտի շարունակէր մշակութային վերածնունդ մը ապահովել Հայ ժողովուրդին: Ինչ կը վերաբերէր բարեկարգումներու խիստ կարևոր խնդրին, գերազանցապէս դիւանագիտական աշխատանք մըն էր, և մանաւանդ գերազանցապէս կարևոր մեծ պետութիւններու արժամադրութեան, որ այդ առեկները, գանձանք հաշիւներով, նպաստաւոր էր հանդէպ հայկական հարցին:

Թէև մեր թեւժ երևութեան համերաշխութիւնը հայկական ուժերու արժատական միութիւն մը չէր, սակայն, թուրք կառավարութեան և իթթիխատի աւազին խոչը նշանակութիւն ստացաւ: Այսպիսով, փաստօրէն Հայ ժողովուրդը իր բոլոր հաստատութիւններով և հոսանքներով դէմ յանդիման կը կանգնէր թուրք կառավարութեան: Ատենը եկած կը նկատէր եւրոպական միջամտութեամբ հայկական հարցի մասնակի լուծում մը ձեռք բերելու և ստեղծելու իրաւական դրութիւն և կատարեալ ապահովութիւն հայկական նահանգներուն մէջ:

Պատմութիւնն արդէն ծանօթ է, շատ չծանրանաք անոր մանրամասնութիւններուն վրա: Գլխաւորաբար Ռուսաստանի նախաձեռնութեամբ և եւրոպական մեծ պետութիւններու համազորածակցութեամբ՝ հայկական նահանգներու բարեկարգումները պարտադրեցան պարտած թուրքերոյ, և Հայաստանը բաժնեկցաւ երկու մեծ նահանգներու, որոնց մարզպան կամ ընդհանուր քննիչ նշանակեցան շօթ և Վէստէնէնկ, երկու եւրոպացիները: Անշուշտ, եթէ համաշխարհային պատերազմը չլայթէր, Հայաստանը պիտի մտնէր վարչական, քաղաքական և մշակութային վերածնունդի մը ճանապարհի մէջ, և կասկածէ դուրս է, որ հայ-թրքական և հայ-բրիտանական յարաբերութիւնները հեռոգհեռ, պիտի մեղմանային ու իրենց բարեբար ազդեցութիւնը պիտի ունենային համապետական կեանքին վրա: Իայց

այս խնդրի քննութիւնը մեծ կապ մը չունի մեզ հետաքրքրող հարցին հետ. հետեւաբար, անդրադառնանք այն մասնաւոր կողմերուն վրա, որոնք մեծապէս սրեցին հայ-թրքական յարաբերութիւնները և նշանակութիւն ունեցան հանրային կարծիքի առջև:

Հայութիւնը 1913ին իր կրթնդիկոսով, Աղլային Բիրոյով, Պոլսոյ պարտիւրաբարանով, Պոլսո նուպարով, և քաղաքական բոլոր հասանքներով համաձայն գտնեցաւ մեծ պետութիւններու ձեռնարկին, հայկական նահանգներու բարեկարգումներու խնդիրը լուծելու: Մինչև այդ թևակարգ պատերազմը մը չէր, որ Հ. Յ. Դանակցութիւնը հակառուսական քաղաքականութիւն ունէր և ցարական ռոնակալութեան դէմ, Պոլսոյ և թուրքերոյ գանապան վայրերու մէջ բողոքի միթիիններ կը սարգէր: Քաղաքական հակումի այս յանկարծակի փոփոխութիւնը, անշուշտ, իր արդարացուցիչ պատճառներն ունի, բայց, իբրև պատմական երևոյթ, յար և նման է 1878ի Ներսէս Վարժապետեանի և զործակիցներու ընթացքին: Այն ժամանակն ալ, 1877ի ռուս-թրքական պատերազմին, Հայ երևոյթանները թրքական թորհրդարանին մէջ կրկնուր ճառեր արտասանեցին ընդդէմ Ռուսաստանի, և տարին նաեցած, երբ Ռուսերը Սան Ստեփանոյի դաշնագիրը կը պարտագրէին թուրքերոյ, Ն. Վարժապետեանի ղեկավարութեամբ հայութիւնը իր օրինակաբաններ կը փոխէր և գիմում կ'ընէր Ռուսաստանին՝ Հայկական Հարցի լուծման համար: Նոյն քաղաքականութիւնը և նոյն մտայնութիւնն էր, որ ուղիղ գծով, 35 տարի յետոյ, յայտ կուգար հայկական կեանքին մէջ, առաջ՝ առանց յեղափոխական կազմակերպութիւններուն (որովհետև զոյութիւն չունէին), իսկ հիմա, քաղաքական կուսակցութիւններու համաձայնութեամբ և մասնակցութեամբ: Հայկական ազատագրութեան կարևոր փուլերէն մէկն էր, որ կը բողոքէր Հայ ժողովուրդը 1913ին, և իր կենսունակ ու հակադիր բողոք ուժերն ու հոսանքները կը միացնէր պաշարի ճակատին վրա՝ ընդդէմ թուրքերոյ. թէև դիւանագիտական ճանապարհով:

Ինչպէս է, որ երբ Հայ ժողովուրդի բոլոր ղեկավարները այսպիսի ծանրակշիռ խնդրի մը մէջ ասպարէզ կ'ընէին, ստիպւած էին մտածել նաև իրենց դիւանագիտական յաղթանակի պաշտպանութեան և պահպանման մասին: Այլքարի մտնողը պարտաստ պիտի ըլլայ հարւած ալ ընդունիլ: Սակայն, այս տրամաբանական պահանջը անմիջապէս կապ ունէր հայկական ներքին կազմակերպական կեանքին հետ. իսկ հայկական ներքին կեանքը, ըստ էութեան, պարտաւորած կը մնար: Յեղափոխութիւնը կը համարուէր անպէտք և մը, և յեղափոխական կազմակերպութիւնները վնասակար: Հայ ժողովուրդի յոյսը, վտանգի մը պարագային, կապւած կը մնար այն պետութիւններուն, որոնք հայկական բարեկարգումները պարտաւորած էին թուրքերոյ: Վերջին հաշուով, անուժ ու անդեկ ազգութիւն մը, թշնամացած թուրք պետութեան և քաղաքի հետ, ենթակայ անոր գերազանց ուժին ու սուրբին, իր ասպահովութիւնը կը փնտռէր օտար պետութիւններու բարեհաճ հովանաւորութեան մէջ (թէև անցիկ այնքան փորձեր ունէր) և բնաւ չէր մտահոգւելր գոնէ տարրական ինքնապաշտպանութեան պատրաստութեամբ:

Հ. Յ. Գաշնակցութիւնը միա՛ն, գիտակ հայկա-
կան բարենորոգումներու պէս խիստ ծանր հարցի մը
հաւանական հետեանքներուն, 1913ի սկիզբէն սկսած,
աւելի շիտակ՝ բաղկանան պատերազմի վախէն դրբու-
ած՝ (որովհետև ամէն մէկ պատերազմ կամ խառնու-
կութիւն թուրքերի մէջ, միշտ յանգած է հայկական
կոտորածներու), ինքնամփոփման շրջանի մը մէջ մտաւ
և մեծ ուշադրութիւն դարձուց հայկական ինքնապաշտ-
պանութեան վրա: Եթէ քննութեան առնենք Հ. Յ.
Գաշնակցութեան գործունէութիւնը 1908-1912, և բազմ-
գատենք 1913-1914 թուականներուն հետ, պիտի տես-
նենք որ Գաշնակցութիւնը Սահմանադրութեան առաջին
հինգ տարիներուն շատ քիչ գիտածիքը ունեցած է.
մինչդեռ վերջին երեւ տարիներու գիտական մթերու-
մը, մասնաւորաբար հայկական կարևոր նահանգներուն
մէջ, կրկնապատիկը եղած է նախորդ երկար շրջանին:
Բայց պէտք է խոստովանել, որ Գաշնակցութեան այս
ջանքերն ալ շատ փոքր էին, դուրս ըլլալով պահանջը
և հաւանական վտանգը: Իսկ հայ հարուստներն ու հա-
կադաշնակցական տարրերը գէնջի գնման, մթերման և
գինական ուժի պատրաստութեան մասին լսել անգամ
չէին ուզեր:

Այս պայմաններուն մէջ Հ. Յ. Գաշնակցութիւնը
կը գործէր, կարելի է ըսել, երեք գլխաւոր ուղղու-
թեամբ .1) ներքին կուսակցական կազմակերպութեան
և գինական տարրի ուժեղացումը. 2) Համապետական
կեանքին կը բերէր իր մասնակցութիւնը և ամէն ջանք
կը թափէր, որ բնականոն ճանապարհով արդէն սկսած
բարենորոգումները իրողութիւն դառնային, և 3) Ազ-
գային հաստատութիւններուն և հայ հանրային կեան-
քին լծած կը մնար, փոխադարձ գիշտումներու և խո-
հմութեան ճանապարհը բռնելով, համոզած ըլլալով
որ հայկական հաւաքական ուժերու համախմբումը
հայկական վերածնունդի միակ գրաւականն է: Այսպի-
սով, Գաշնակցութիւնը անհրաժեշտաբար կը մասնակ-
ցէր բաղձազան աշխատանքներուն, կը կապէր բազմա-
պիսի գիշտումներով, կ'ընթանար ընդհանրութեան հետ,

որպէսզի մասամբ կարողանայ այդ ընդհանրութիւնը իր
ետեէն տանել, ու ի՞նչու չէ, վեր յիշած պայքարի
տարիներու քնաշրջման հետեանքով, հայկական կեան-
քը վարելու և պահպանելու պատասխանատուութիւնը կը
բաժնէր միւս հասանքներուն հետ: Այսինքն, փաստօրէն
կը հրատարէր իր մեծախորտ քեան իրաւունքէն, մե-
նատիրութիւն մը, որ երբեք գոյութիւն ունեցած չէ,
ինչ կը վերաբերի ազգային ընդհանուր կեանքին կամ
ազգային պաշտօնական հաստատութիւններու ղեկավար-
ութեան: Բայց Գաշնակցութիւնը մեծաւոր էր յեղա-
փոխական գործին մէջ, մինակը դուրս եկող հայ ժո-
ղովուրդի ինքնապաշտպանութեան գործին մէջ: Ահա,
այս մենատիրութիւնէն էր, որ սկսած էր հրատարել,
զոնէ հոգեբանօրէն, որպէսզի այդ գործին լծակից
դառնային ուրիշներն ալ: Յոհեմ մը շրջահայեաց կու-
սակցութիւն դարձած էր և կը բաղձար, սրտանց կը
բաղձար, որ հայութեան պաշտպան հերոսի փառքը
բաշխի բոլոր հայկական հոսանքներուն: Մէկ խոս-
քով, Հ. Յ. Գաշնակցութիւնը ճե ի ճե վազբի մէջն էր.
կ'ուզէր հասնիլ բոլոր կարևոր խնդիրներուն. այդ աշ-
խատանքները կը կատարէր ընդհանուրին հետ, երբ
այդ կարելի էր, ու շատ խնդիրներու վրա (ինչպէս
գէնջի և ինքնապաշտպանութեան գործերը) կը սպառէր
իր ուժերը միայնակ, երբ ոչ ոք կ'ուզէր մասնակից ըլ-
լալ այդ աշխատանքին:

Ինչպէս կը տեսնենք, հայկական ներքին կեանքը
բարդ կծիկի մը պէս խճճած էր: Հոսանքներն ու դա-
նազան տարրերը իրարու շրթալած էին, իրարու գոր-
ծը ծանրացնելով, առանց իրական համագործակցու-
թեան: Հակադաշնակցական մթնոլորտը նախկին ըն-
թացքով իր ուղին կը շարունակէր և փոքր ու աւորեայ
խնդիրները պատրակ կը բռնէր՝ հակախցափոխական
մտայնութիւնը վառ պահելու:

Հայութիւնը մեր վերջը թւած քաղաքական, մտա-
յին և Ֆիզիքական կացութիւնն ունէր, երբ 1914ին
պայթեցաւ համաշխարհային պատերազմը:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՔՈՍՈՍՆԱՄԵՍԿ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԱՐՇԱՒԱՆԿԻ ՄԱՍԻՆ

ԽՄԲ. — Հ. Յ. Դաշնակցութեան Դիւանէն կը Բաղնիք այս չափազանց հետաքրքրական պատմութիւնը Կուրուսեան արշալախութիւնի մասին, անփոփոխ պահելով նկարագրութեան ձևն ու յեզուը:

Գրողն է՝ խումբին անչափեմբէն Մշեցի Մեարոյ Վարդանան, որ յաշիրը գրի առած է 1900 հոկտեմբեր 23ին, Պուլկարիոյ մէջ: Առաջին խօսքը, «Շատ սխալ կը մտածեմք եղբարք» — խորագիր է:

Շատ սխալ կը մտածենք, եղբարք. թէ ինչպէս. այսպէս որ մենք չենք կարող միութեամբ գործել, թէ ինչպէս այսպէս որ մենք աշխատելու ենք ժամ րոպէ չկորսնցնել, հասցնելու ենք հիւանդին դեղ և պէտք կ'զած օգնութիւն: Ո՛ր կողմն է ճշմարտութեամբ գործող, ո՛ր կողմն է պէտք եղած ուժ, ո՛ր կողմն է հաւատարիմ և անկեղծ աշխատողներ, աստղ կը փրկուի Հայաստան. ոչ թէ միանանք մեր արիւն ծծող թշնամիներին հետ: Մաս մը գործիչներ յոյսեր դրած են զերտ աղաների հետ միանալ, մաս մը ազատամիտ թուրքերի հետ միանալ. ասոնք ոչ մէկն ալ մեզի օգտակար չեն, բացի վնասից: 1887ին Տարոնացի Սարկաւազ, լաւ աղագաւորութեան ժամանակին, պտտեցաւ և Հայաստանի ամբողջ Գիւրտերու զլիաւորներին հետ տեսնեցաւ որ կ'ուզէր միացնել Հայերի հետ, բայց անկարելի եղաւ. ամբողջ զլիաւորներուն մէջ միայն Մանազկերտցի Սօֆիին ընդունեց այդ առաջարկ, այն ալ շուտ մը սահմանի վրայ եղած զերտ աշխատիչներին իմաց տուց թէ Հայեր մտադիր են զէնք տեղափոխել Մասուն և որտեղ որ իրենց պէտք է: Այդ ժամանակ Գիւրտեր սկսեցին տաճկաց սահմանի վրա եղած հայաբնակ գիւղեր թալանել, գաղտնի սպանել և պէտք եղած գէշութիւններ անել: Գալով Մասունի գաւառի զերտ աղաներին, անոնք ալ Հայերի հետ լաւ էին թէ ինչպէս, Հայեր կ'աշխատէին, անոնք կ'ուսէին: Եթէ Շէկ տներ իրենց Հայերին սպանեն, իրենք անօթի պէտք է մեռնեն:

Եղբարք, ոչինչ պէտք է սպասենք Գիւրտից կամ թուրքից կամ թէ այսպէս քննելով օգնութիւն սպասել օտար պետութիւններէ. օտար պետութիւններ անելի ուրախ են որ մենք այսպէս քնենք, ապաւ չողի մէջ նստենք մէկ մէկու բամբասենք: Այդպէս անկարելի կը լինի մեր ազգի փրկութիւն. Հայաս աշխատիլ պէտք է:

Մենք 1890ին համոզուելով Յակոբ Սարկաւազէն թէ Սարկաւազ Գիւրտերին համոզեր է Հայերի հետ գործել պէտք եղած ժամանակ, Մշոյ քաղաքէն դուրս ելանք Ալաշկերտի ճամբով որ պէտք էր անցնէինք Ռուսաստան. բայց Ալաշկերտի թուրքազապէն սպասեցինք, եւ, Խուրթից Մաֆօն, Ատուն, Պարզնիսիցի Խաշօն, Յովհաննիսը, Կուրաձցի Եգնիկ, Պիթիլիսից Կարապետ, Իերզեցի Արամայիս: Հինգ օրէն վերջ իմացանք որ

Վանցի Յովնան 24 ընկերներով կկած է ոռուսաց և թուրքաց սահմանի վրա. այդտեղ սարսափելի բերդ մը կայ որ տակը կայնակ-գլուխ չի երևար, որ այնքան բարձր է: Մատուռ կ'ըսեն այդ բերդին: Բերդի տակ ձորի մէջ ուխտատեղի է որ ամէն տարի Տաճկաստանից թէ Ռուսիայից կուգան մատաղ կը կտրեն, երկու օր կ'ուսեն կը խմեն կ'անցնեն ամէնմարդ իրեն տեղ:

Հինգ օրէ վերջ Հայկունի վարժապետին հետ խօսեցանք. մեզի նամակ մը տուաւ որ Վանցի Յովնան մեզի ընդունէ իր խումբին մէջ. առաւօտուն կ'իմանանք որ Յովնան պաշարած է Գիւրտերէն և կառավարութիւնը զօրք ուզած է ամէն կողմէ որ զան ոռուսական սահմանի վրա: Ալ մենք չապասեցինք զօրքի գալուն, Ալաշկերտի Խաշու գիւղէն մեկնեցանք: Եօթը հոգի մէկ հրացան ու չորս ատրճանակ ունէինք. քաջ Խութեցիներ այնպէս սրտոտ կը վազէին որ մենք ալ օրինակ առինք իրեցմէ և աղօթարարը չբացած Գիւրտերու քով հասանք. ինչ տեսնենք. Գիւրտերը կարկուտի պէս լեցած են Մատուռ տեղի շուրջը բոլոր լեռները: Արամայիսի սովորական տեղերն էր: Ճանապարհ ընկնելով մօտեցանք Գրտերին որպէսզի անկից կարելի ըլլայ ինչևէ բերդի վրա: Կրակը սկսեց. բայց Գրտերը կարծելով որ Ռուսի սահմանապահ կողակներն են, իսկ մերներսը կարծելով թէ թուրք զօրքն է. վարէն պոռալով քանի մը անուներ տախք և շարունակեցինք ճանապարհը դէպի վեր, իսկ Գրտեր կարծելով թէ Ռուսը կը պաշտպանէ Հայերին և կողակներին օգնութեան դրկեց: Դեռ մինչև այդ օր Գրտեր գիտէին թէ ոռուս կառավարութիւնը Հայերին բարեկամ է. ինչ գիտնան թէ Հայերի ամենէն առաջին թշնամին ոռուսն է. այսօր ալ աչքերնուս առաջ կ'երեւի: Այսօր Ռուսի նպատակն է որ Հայերին կուլ տայ ինչպէս որ Վրացուն, Պոլիակին կուլ տուաւ, Կովկասի մէջ արգիլեց եկեղեցիներու մէջ վրացիները կարգաւ և ոռուսերէնը պարտադրեց. ինչ՞ վրացիին ինչ գիտէ ոռուսերէն: «Մածուռը սե է». Վրացիներ պէտք է ըսեն սե է: Նմանապէս ոռուս կառավարութիւնը կ'աշխատի Հայերուն ալ ըսել տայ «մածուռը սե է»:

Մեզ դիմաւորեց Ղարաբաղցի Տէրտէրեան Յովհաննիսը: Վեր ելանք նայեցինք, տղաքը մնացեր են 20: Կէս ժամ հանգստութիւն առինք, Յարութիւն աղայի հետ խօսակցութիւն արինք: Յարութիւն աղան պատմեց. — ես այստեղ կկայ, որ իմ ետեէն պէտք էր օգնութիւն հասնէր. այսօր 7 օր է որ այստեղ ենք, հինգ օր է որ կը կուրեց Գիւրտերու հետ. 24 ընկեր էինք, մնացինք 20. եկած օրերնիս ունէինք վեց հրացան, 9 հատ ատրճանակ, մէկ հրացանը Ալաշկերտցի Պետրոս աղայի տղան՝ Արշաւ, առաւ զնաց որ իրենց տունէն հաց բերէ մեզի, ա՛լ չկուա: Անոր ետեէն մեր գիւղացի Գալուստը զրկեցինք, ան ալ Խաշու գիւղը զարնած է

ոտքէն և ճոն մնացած է: Գալով մեր Վանեցի Վարդա-
նին, ան ալ գիրերով Հրացան մը առեր փախեր է, ուր
ղացեր է չենք գիտեր: Հիմա ունինք 4 Հրացան և 8
ստորճանկ: ասով կը կուռինք, բայց պատրոն, վա-
նոք, կապար շատ ունինք, պարապները կը լեցնենք,
եթէ նեղք մնանք: Բայց Հաց չունինք: Այսօր եօթը օր
է այս վարի, այս դուրանդին տեղ Բրտերը չատրներ
կային անոնք թալանի տւինք, հոնկէ ինչ որ բերինք
կերանք: Միտ շատ էինք բերած, բայց հոտեցաւ, թա-
փեցինք:

Առտուն լուսցաւ. տեսանք որ Բիւրտերը ետ
դարձան. գործն ալ ետէն կուգայ:

Յարութիւն աղան պառկիքց որ ձայն չհաննէք,
թող անոնք սկսեն: Միզ մօտ չեն կրնար դալ, միզ չեն
տեսներ, բայց մենք գրկենք կը տեսնենք: մենք անոնց
կը սպասենք, անոնք մեզի ոչ: Միտն թէ անոնք անօթի
կուզեն մեզի սպանել: Այսօր երեք օր է որ բան չենք
կերած, մոռցանք ըսել որ Բուլանուիցի Արամ, խնդի
մը մէկ, ան ալ գնաց Կաղզուան Հաց բերելու, ան ալ
չեկաւ:

Բիւրտերը և գորքը մօտեցան և սկսեցին Հրացա-
նաճգութիւն դէպի մեզ. բայց մենք ձայն չեղաւ: Մենք
կը նայէինք, Բիւրտերը որ մօտենան մեր ճամբուն, կը
դարձէինք դատրելով ձորը կ'իջնային: Չերկարենք,
իրիկան մուծին գորքը ետ դարձաւ. դէպի Ալաշկերտ,
մենք ալ պատրաստեցանք բերդէն վար իջնել և երթալ
Կաղզուան: Վար իջած աստե՛ն Կարապետ մէկ ոտը ցատ-
կելով գլորուեցաւ վար ինկաւ, երկու տղայ ալ հետը
տարաւ. դէպի ձոր: Բայց այն կողմից որ մենք վար
կ'իջնենք, ալտեղ Բրտեր չկան, գիշեր ժամանակ
ուռի կողմը չեն կայիր: Մենք շարունակեցինք մեր
ճանապարհը դէպի Վարդապետի վանքը, որ ըսին որ
ուխտատեղի է: Երեք վիրաւորները տարինք վանքի
մօտիկ դրեք հանգստանալու, յետոյ կրկին շարկելով
տարինք: Առուացաւ, հասանք Հայու մը պարտէզը և
այնտեղ թողինք վիրաւորներին: Մենք դացինք Կաղ-
զուան և մարդ զրկեցինք երեք վիրաւորները բերել տւինք
Կաղզուան: Մենք մ'ի մեր խմրապետ Յարութիւն աղան
չտեսնէք, որ առանց զէնքի, առանց հացի գացեր է
մատուռ լաւ նպատակով, բայց խարդախ և մատնիչ
Յովհաննէս խանդարեր է գործը: Յարութիւնի գնացած
ժամանակը այնպէս խորճած են Կաղզուանի մէջ, որ
լինենք իրև և յետուստ որ երթան վարդապետի վանքը,
խի իրենց զէնքը և հացը ուրիշ ճանապարհով գայ,
մինչև որ Յարութիւն տեղ պատրաստի. բայց մատնիչ
Իկիթեան Յովհաննէս գիտնալով այդ բանը, շուտ մը
կ'երթայ ոռւս կառավարութեան իմաց կուտայ, կուգան
Կաղզուանի այգիներէ մէջ ամբողջ զէնքեր կը բռնեն:
Այսպէս Յարութիւն կը մնայ տանց օգնութեան մա-
տուռ: Յարութիւն չորս Հրացանով կը կուի Բիւրտերի
հետ. թէ որ այդ շրջան 200 Հրացանը այնտեղ հասնէր,
Յարութիւն այդ 200ը շուտ կէտք էր չինէր 2000 և այդ-
պէս ալ նպատակ ունէր. ինչ անես որ անօթութիւնը
կը յաղթէ ամէն բանի: Թագ չպարծեմամ մտանիչները,
եյր լիմի պետք է գամ յեղափոխականի դամակին, ինչ-
պէս որ Իկիթեան շուր Յովհաննէս իննգ տարի պտոնց,
վերջը ինքն իրեն եկաւ կարծելով որ յեղափոխականները
մոռացած այդ արտի ցաւը: Ա՛լ ինձի ով պիտի ճանչ-

նայ, երթամ Կարս, տեղեկութիւններ հաւաքեմ, որ
Թուրքից կամ ոռուսից պատիւ մը ստանամ: Բայց հինգ
ժամ տեսց իր Կարսի արքայութիւնը: Կարսի ջուրը 3
օր պահեց զինքը. վերջը ձկնորսները դուրս հանեցին
յանձնեցին կառավարութեան: Մի օր պահէ՛ք վերջ
տղաքը բերել տւին և տարչուցին: Ասեկա մեր հա՛յ-
րն է: Հա՛ աղա՛, շորերը մեր հօրն են, բայց ինք
ճանչցերիւու տեղ չէ մնացեր որ ըսենք: — Ձեր հօր
Թշնամին ո՞րն է դիտէ՞ք, Հարքեց բժիշկը: — Հա՛,
աղա՛, Կաղզուանցիք, ինչու որ մեր հայրը Հայերու
զէնքերը բռնել տւեց հինգ տարի ատաջ Կաղզուան, ատոր
համար սպանած են մեր հայրը:

Բժիշկը Հայու սիրտ ունէր. պատասխանեց տղոց.
— Տէ՛ գնացէք, այդպէս տեղն է, խելօք կացէք, ձեզ
ալ չպահեն: — Ձէ՛ աղա՛, մենք աղագասէր ենք: Լալով
տղաքը դուրս ելան: Կառավարութիւնը տարաւ շուր
Յովհաննէսին թաղեց:

Մենք Կաղզուան կեցանք 10 օր, անկից կանչեցանք
Կարս: Տարօնացի Սարկաւազ, Սարգիս Կուկունեան,
Ալեյխացի Ստեփան աղան, Յարութիւն աղան, Բեր-
դեցի Պետրոս աղայի տղայ՝ Նազարէթ, քաջ Սարգար,
Քիտիկալացի Միլոնչ, Շեղաղոցայի Նազօն, Մուշեցի
Վարդանեան Մետրապ, ասոնք հաւաքած մեզի կը կան-
չեն: Բայց մենք Մատուռէն վար իջած ժամանակ Մա-
տուռ թողինք մեր աւելորդ վատօր, զնդակ և այլ գոր-
ծիքներ. ի՛նչ անէինք, անօթութիւնն այնպէս բան է,
որ տեսնողին ինչ պատմեմ, մեզի հազիւ կարողացանք
ազատել: Բայց այդ օրը, որ կանչեցանք Կարս, այն
գիշեր Ղարաբաղցի Սահակին հետ գնացինք այդ մեր
կորուստը յետ բերինք: Գնալով հասանք Մատուռ,
նայեցինք դեռ Բրտեր կը սպասեն: Այդտեղ հաւաքե-
ցինք ինչ որ թողած էինք, մէկ հատ էլ ունէինք հե-
տերնիս, բերդի տակ թողած էինք. շալկելով վար բե-
րինք մեր էլը բարձանք, չու շուրկելով շարունակե-
ցինք մեր ճանապարհը դէպի Կաղզուան: Այդօթարանը
բացեց, նայեցինք, որ Բրտեր կուգան մեր յետևից:
Սկսեցին մեր վրա կրակ թափել: Մենք էլին թողինք
յետ դարձանք մեզ սկսեցինք քարի դէմ և ալ սկսեցինք
կրակ: Ընկերս, Սահակ, շատ վարժ էր Հրացանի.
Բրտերից մէկին գլորեց, նայեցինք Բրտեր սկսեցին յետ
քաշել: Բայց Բրտեր չունէին կանոնաւոր Հրացան.
ես վազելով գնացի՞ աստիկած քերտի վրա նայեցի որ,
Հրացան մը ունի չափամաս ալ չունի՞ առի շախմատի
Հրացանը և յետ դարձայ դէպի Սահակը: Մօտեցայ Սա-
հակին թէ չէ, յետևիցս կրակ մը տւին, ինձ վզիցս
վիրաւորեցին: Յետ դարձայ, նայեցի դէպի վեր, տե-
սայ թիւրտ մը կը փախէր, բայց քաջը ընկերս ինձ թո-
ղց փախչող քրտին կոնակից գարկաւ, այն ալ այնտեղ
մնաց: Մենք շարունակեցինք մեր ճանապարհը, որ շուտ
մը ոռւսի փոստ անցնենք, չըլլայ թէ ոռւսի կողակներ
իմանա, բանի որ անոնց չենք կարող դիմադրել: Ե-
կանք հայու մը պարտէզի մէջ նստակցեմ, մենք փորե-
րնս կշտացրինք, պօք էյն էլ լաւ կշտացրինք: Մինչի
իրիկան մուծը տոււ անկից գացինք Կաղզուան. ընկեր-
ներու ջով:

Հիմա դառնանք մեր վերջի մասին: Վերջ ուռեցաւ,
երեսս ալ ուռեցաւ, զնդակը մէջը մնացեր էր: Գնացինք
գաղթական Մշեցու տուն, պատուա մայր մը ունէր.

այդ օրհնեալ պառաւ վէրքս դարձանց, զորակն ալ մէջնց հանեց, եթ օրհն լուացրեց: Եթէ բժիշկին դիմէի շարաքներ պէտք էր տեւեր, է, ինչ որ է:

Ընկերներս գնացին Կարս, բայց Սահակ ինձ սպասեց մինչև լուացայ: Լուանայլն վերջ ես ե Սահակը գնացիք Կարս, իրիկուն մը մեզի ալ կանչեցին Պ. Ս. տունը: Տունը լեցած էր, մինչև դուռ, տեղ չկար նստելու: Կարս փողոցներ կը տեսնէիր ամէն գոյնի մարդ: Այդ բոլորը եկած էին նպատակով և ըսելով՝ թէ Տարօնացի Սարկաւազ ինչ որ ըսէ մենք անոր խօսքին պէտք է մեռնինք: Ե այնչափ ժողովուրդ Սարկաւազին հաւատացի էր իբր լուսաւորիչ մը:

Ժողովուրդը չհասկացաւ այդ ս. բնութիւն մինակ հասկցաւ ազգաւոր և յեղափոխական: Ոչ թէ Տաճկաստանի Հայեր, ամբողջ Կովկասի Հայերն ալ: Միթէ ազգափոխութիւն, յեղափոխութիւն լոկ խօսքով կը լինի՞, մենք գիտենք թէ դործով պէտք է լինի: Կարս և Ալեքսանդրապոլի հայաբնակ գիւղերը ամբողջ կը սպասէին Սարկաւազի Հայաստան մտնելուն: Ամէն մարդ իր տանն ունէր երկու, երեք, չորս, այն որ չունէր մի հատ ունէր տանկից մնացած խափաղիչ հրացան: Այլեքսանդրապոլի ուսական գորհանցները հայ գինւորներէն ամբողջ պատրաստած էին, խաչազոթ Սարկաւազին կը սպասէին. Ե այնտեղից կարող էին եթ ժամից սահման անցնել հանդիստ: Ռաչապոլ Սարկաւազ սպասեց, այսօր-վաղ ըսելով, քաջ Կուկունեան Սարգիս յուսահատեցաւ, կանչեց մի երևիոյ իր պանդուխտ: Ի՞նչ կը սպասես, ի՞նչ է քո նպատակ, պատասխան կ'ուղեմ: Սարկաւազ պատասխանեց, որ Քիֆլիսէն ինձ նամակ կայ, ես այս տարի չեմ կրնայ երթալ մինչև դարուն: Պատասխանեց Սարգիս. — Եղբայր, այսքան մարդ մեզ կը սպասէ. թէ՛ հայ գինւորներ և թէ՛ դիւղացիներ, թէ՛ դուբայց եկող յեղափոխականներ, ամբողջին թիւն է 9300, մենք ատոնցմով շատ բան պէտք է անենք, եթէ մենք սպասել գտրանա, դրանցից մէկին չենք կրնար գտնել, ոուս կառավարութիւն կ'իմանայ գէշ կը լինի մեր սպազան: Սարգիս, Սարտար Յովնան շատ մը խօսելէ վերջ համոզեցաւ որ Սարկաւազը խաչազոթ մըն է:

Առաւօտ լուացաւ, նայեցինք խաչազոթը չկար. 3 օր կորսեցաւ: Երեք օրէն վերջ Տրլպանդլա գիւղ լինելը իմացանք: Սարգիս ունէր իրեն հետ երկու Ղարաբաղցիներ, որոնցից մէկին Չորուկ գիւղ սպանեցին կողակները: Երկուքին անունն էր Արբաճամ: Այդ մէկ քաջ Ղարաբաղցի Արբաճամին, Սարգիսն ուղարկեց և խաչազոթին ըրել տուց Կարս, շատ աղաչեցին, անհնար եղաւ խաչազոթի այդ տարաւ յեղափոխութիւն: Վերջ համոզեցին, որ Կարսի, Ալեքսանդրապոլի գէնքերը տեղափոխենք սահմանի վրա պատրաստ լինի դարնան: Այդ բանը խաչազոթն ընդունեց. սկսեցին ձիերով տեղափոխել սահմանի վրա եղած հայ գիւղերը:

Միթէ քաջ Կուկունեան այդ բանը միտնալ, ասանց խաչազոթին չի՞ կրնայ, այնպէս չէ՞. այդ տեղի ժողովուրդը ասոր հաւատացիք են և կը ճանչնան քաջ և հաւատարիմ դործիչ մը: Մենք ցրեցինք գիւղեր, սպասեցինք որ մեզ պէտք է: 70 ընկերներ էինք Քիթիկարներ, Բայրախար, Օղուզուր գիւղերում: Մէկ ամիսէն վերջ հայ գինւորներ կը խոտովանեն տէրտէրին թէ մենք

այս տարի պէտք է Սարկաւազի հետ մտնենք Հայաստան: Եւ չուն տէրտէր, դու չուն տէրտէր ես, գնա ոուսի կառավարութեան իմաց տուր թէ՛ այս օրերս հայ գինւորներ պատրաստած են, հայ գորպայտներ ալ միասին, պէտք է մտնեն Հայաստան: Կառավարութիւնը իմանալուն պէս, շուտ մը բանտարկեց քանի մը գինւորներ և բերաւ ոուս գինւորներ խառնեց Հայերի հետ: Այդ դործի մասնակից քանի մը մարդիկ քաղտրեց, մի քանիսին բանտարկեց: Այդ էլ խանգարեց, ի՞նչ անենք:

Եթէ խաչազոթ Սարկաւազ չսպասեցնէր, կարելի է մեծ յոյս մը ունէինք այդ դործից:

Ռեղձ Կուկունեան Տիկոս Բէջ Քիլիսայի վանքում այդ ցաւալի բանն իմանալուն պէս, կը սկսի երեխայի պէս լալ. ի՞նչ անէր, մեծ ուժ գնաց: Այդ իրեն մօտ եղող Արբաճամ կը խօսի. — Եղբայր, մենք այդ խաչազոթին սպանենք աւելի լաւ է, քանի դեռ ժողովուրդը չգիտէ ասոր կեղտութիւնը: Նատոն, Սահակը և Արբաճամ գիւղեր մը կ'իջնեն վանքից, խաչազոթն ալ հետեւին, որ այնտեղ եղած գէնքերը պահեն: Վանքից Չարուկ քառորդ ժամ է կը հնուանան այնտեղ քարափներին: Այն քարերուն մէջ եղաւ շուն խաչազոթին գերեզմանը:

Ի՛հ, եղբայրք, ինչպէս հաւատանք այսպիսի յեղափոխականներին: Լաւ քննեցէք, նոր հաւատացէք: Հիմա էլ կան դեռ այդպիսի խօսքով դործ խանգարող պրոտոսիստ յեղափոխականներ: Նմանապէս հիմա դուրս եկած են միութիւն քարոզիչներ, ի՞նչ հարկ կայ այդ միութեան: Ժողովուրդը չընացրեց, անցան այն օրերը, հայ ժողովուրդը այսօր արեան մէջ էլ թաւալի, եթէ հայի մանկան վերջնա օրորցից, հարցնես ի՞նչ կուզես. նա քեզ կը պատասխանէ. — ազատութիւն: Այսօր մենք չպէտք է ինչայնք, մեր արիւնը պէտք է թափենք մեր ազգի ազատութեան համար, այսօր դիտունները չպէտք է խնայեն իրենց գրիչը, նմանապէս հարուստները չպէտք է խնայեն իրենց ստակը, որ այսօր Հայաստանի մանուկները կը պօտան հա՛ց, հա՛ց, հա՛ց և օգնութիւն կը սպասեն իրենց եղբայրներին. օգնեցէք նրանք, այդ կը լինի միութիւն և դրանցով կը փրկելի Հայաստան:

Մենք գիւղերէն և քաղաքներէն ամբողջ հաւաքեցանք Կարս: Սարգիս Կուկունեանը մեզ կանչեց և ասաց. — Ի՞նչ կ'ասէք եղբայրք, ես եկած եմ հեռու տեղից մեռնելու ազգիս համար, ոչ թէ այստեղ ուսուցու, խմելու և պտտելու, քանի որ մենք նպատակով եկած ենք այդ նպատակով ալ մեռնենք: Մենք բոլորս պատասխանեցինք, որ մենք այդ նպատակով եկած ենք, այդ նպատակին էլ պէտք է մեռնենք:

Առաւօտ լուացաւ, բոլորիս ուղարկեց կրկին դիւղեր: Ռուս կառավարութիւնը սկսեց հայ գիւղերում խոտովանելներ անել ամաց վրա, որոնք խոտացել էին մեզ հետ գալ: Մենք մնացինք 87 մարդ Սարգիս Կուկունեանի հետ: Վանքից Յովնանի և Ալաչկերտցի Նազարէթի խումբը 200 մարդ էր: Մենք 87 ընկերներ առաջ պէտք է անցնէինք սահմանի վրա, անոնք ալ մեր ետեկց պէտք է գային:

1890ի սեպտեմբեր 13ին մենք հաւաքեցինք Բաջ Քեատիկար — Մըկուչին գիւղն է, որ նոր սպանե-

ցաւ քաջ Սարգսրին հետ — այլ զիւղի մէջ մի լաւ քահանայ կար, բերաւ մի հրեայ յանձնեց Սարգսրին: Այլ հրեայն անունը Վկրտիչ էր և այլ տէրտէրք մկրտածն էր: Մի հայ ազնակու տաճ էր այլ հրեային: Այլ տէրտէրք շատ հաշտարիմ էր, բայց ինչքան լինի հրեայ է քիչ մը վախկոտ կը լինի: Մենք պատրաստուցինք, հայերնիս, չորերնիս լաւ կապեցինք, սուրհանդակները պատրաստուցին: Նայեցինք որ մի երիտարդ և մէկ պառաւ մարդ, կնուսցի ջալատին հետ ներս մտան Սարգսրի մօտ: Երիտասարդը ձեռքին բռնած էր մի պարսկական գօտի, որը երկաբոցուց Սարգսրին ասելով.— Ահա՛ աղա, ես ունեմ այս գօտին և երեք ռուբլի ստակ, ինձի մէկ հրացան տաս, որ ես ալ ձեզ հետ դամ ազգիս համար մեռնելու: Բարեկերտ Սարգսրի կուզուեան լալով հարցրեց.— Ի՞նչ է ձեր անունն, ասացէք ինձ: Երիտասարդը պատասխանեց, որ ինք Մեչյի է, Մլրբբր պիւղաջի, իսկ անունն է Մուշկ Թոթիկեան: Սարգսրին ասաց.— Նստէ՛, եղբայր, ասելովը հրացան ալ չունենանք, իմ անձնական զրամով քեզի հրացան մը պէտք է անեմ: Մեր տէրտէրն այլտեղ նստած էր, որ մեզ ճանապարհ դնէր, դուրս եկաւ, իր ծառային ճամբեց, անից մէկ հրացան բերել տաւ և տալով Մուշկիին ասաց.— Ահա՛, գաւազ, հրացանս քեզ կը նշիրեմ, դիտ՛ նպատակիւ հասիր: Բարեկերտ Մուշկ տէրտէրի աջը համբուրեց, հրացանն առաւ: Սարգսր ինք իր ձեռքով Մուշկի գօտին կապել տուց, իր քով նստեցուց մինչև որ ճանապարհ ելանք:

(Շարունակելի)

Մ Ի Ը Շ Տ Ո Ւ Մ

«Դրօշակ»-ի ներկայ տարւոյ Ձ 3 մարտի թիւում, Սև Քարեցի Սաքօի ինքնակենսագրութեան մէջ, հանդուցեալ ընկերը գրի է առել Մանուկ Շատուրեանի կախաղան բարձրանալու պատճառները, որոնք ճիշտ չեն և թուրք պարիւրապետը բոլորովին ինքնահնար պատմութիւն է պատմել, կախալուց վեց տարի յետոյ:

Մ. Շատուրեանի կախալու պատճառը հետեւեալն է.—

1892-ին վանի կուսակալն էր Բահրի փաշան, դատան Բերտ, իր ժամանակին յայտնի էր իբրև հայակեր: Սրա օրով վանի զաղտնի օսականութեան պետերիցն էր փոխադատէր Շըխէյդարի Նուրին, որ Այդեատանի չըջանում ապրելով, իր ճարպիկութեամբ լրտեսական ցանցեր էր ստեղծել՝ հետապնդելու ժամանակի յեղափոխական երիտասարդութեան զաղտնի աշխատանքները: Նուրին վերին աստիճանի ցոփ, փճացած կեանք ունէր և հետամուտ էր հայ ընտանեկան յարկերում սողոսկումներ կատարելու և:

Յեղափոխական երիտասարդութեան մէջ միտք է

ծաղում մէջտեղից վերցնել այս գաղանը: Այս բանին համաձայն են լինում Արմենական կազմակերպութեան պարագլուխները, նաև Դաշնակցութեան վանի ներկայացուցիչ Պետոն:

Ահաբեկման գործը ստանձնում են Քեանքեան-Փանոյեան Յովհաննէս (Գաւիթ), որ յայտնի էր իր մի երկու տերորիներով, ապա Սարհատեան Հաջին և Փանոս Թէրլէմէզիան (յայտնի նկարիչ, որ ներկայիս ապրում է): Մի անգամ զօմիսը Նուրին ընթերթի է լինում Այդեստանի Ալուսաձոր թաղի հայ փօլիս Մեղքոնի տանը: Քեանքեան-Փանոյեանը հէնց ինչոյքի միջոցին ներս է մտնում և փորձում է տեղն ու տեղ սպանել, սակայն, բազմութեան անյարմարութիւնը տեսնելով, հեռանում է:

Իր ընկերներէ հետ նոյն զիշերը հսկում են այն ճանապարհի վրա, որտեղից անցնելու էր Նուրին: Մեծ Քէնտրչիի փողոցում՝ Սաֆրաստեանների և Շատուրեանների բնակարանների մօտ սպասում են: Քիչ վերջ գալիս է Նուրին մի լապտերակիր հայի անաչնորդութեամբ: Ահաբեկիչները բռնում են, տեղնուտեղ վերջացնում ու հեռանում են:

Սպանութեան հետեանքով ձերբակալում են Յովի ակնի անձեր, սրանց շարքում և Շատուրեանների ամբողջ զերպատանի սղաճարիկ՝ Տիգրան, Բուրբն, Մանուկ, Խաչատուր, Աւետիս, Նազարէթ, այն ամբաստանութեամբ թէ սպանութիւնը կատարել է Շատուրեանների տան մէջ, ապա դիակը նոր նետել են փողոց: Մասնաւորապէս դարձուրելի շարչարանքի են ենթարկում Շատուրեանների տան բանտարկեալները: Մանուկի եղբայր Տիգրանը, չլիմանալով բանտի շարչարանքներին, դամ մը կը դնէ ականջի անցքին և գլուխը պատին զարնելով վերջ կուտայ իր կեանքին: Այս ողբերգական վիճակին ի տես, Մանուկը յանձնատու է լինում, ի պին իրենց դերդաստանի փրկութեան, ամբողջ յանցանքը իր վրա վերցնել, յայտարարելով դատարանի մէջ:

— Ես ինքս եմ կատարել սպանութիւնը, ոչ ոք տեղեկութիւն չունի...

Մրանից յետոյ է, որ թէ և միւսները ապատում են, բայց արդէն այնքան խոշտանդումներից և ամիսներ տեղ գանակոծութիւններից յետոյ, շատերը մեռնում են: Իսկ ինք Մանուկը մահան է դատապարտում: Ենի Գափուի հրապարակի վրա, հանդիսատարապէս կախաղան է բարձրանում Մանուկը: Առաջին անգամ պարանը կտրում է, սակայն, կրկին կախում է:

Այսպէս է պատմութիւնը: Հարիւրապետի պատճառը մտացածին է, թէ Մանուկը, ջան-Փիդալին, հետեւ է Բահրի փաշային մինչև Ռչտունեաց երկրի կիրճերը, այնտեղ սպանելու կուսակալին, ձերբակալելու ու կախաղան բարձրացել:

Հ. ԿՈՍՏԵԱՆ

ԱՐԴԻ ՌՈՒՍԻՈՑ ԸՆԿԵՐԱՑԻՆ ՌԻՃԵՐԸ

Վ. Լեպետև, էս-էր, անդամ Կերենսիի Աստաղեայ Կառավարութեամբ, վերջերս 36 օր պտտած և պարտած է Խորհրդային Միութեամբ մէջ: Անշուշտ գաղտնի: Այս առթիւ հրատարակութեամբ տուած ըլլալով իր տպաւորութիւնները, ստորև կը ներկայացնենք զլիսաւոր մատերը:

հՄԲ.

Առաջին բանը որ աչքի կը զարնէ Ռուսիոյ մէջ, քաղաքին բացարձակ տիրապետութիւնն է գիւղին վրա. և, միւս կողմէ, քաղաքին նիւթական գրեթէ նոյնքան բացարձակ կախումը՝ դիւղէն: Երկրի ժողովուրդին 87%ը, աշխնքն սամբողջ գիւղական բնակչութիւնը գրկուած է ո՛րեէ ուղղակի ազդեցութենէ կառավարութեան գործերուն վրա: Քաղաքացիական պատերազմին վախճանէն և անտեսական նոր քաղաքականութեան (Նէպո) ներմուծումէն ի վեր, կառավարութեան անտեսական քաղաքականութիւնը գիւղերուն մէջ յատուկ կը բերէ միայն կրտսերական դիմադրութիւն մը որ, վերջ ի վերջոյ, նոյն այդ քաղաքականութեան հետ համընթաց, կը յանգի թովանդակ երկրի աղքատացման:

Այսպէս, մէկ կողմէ կը տեսնենք քաղաքական բացարձակ տիրապետութիւնը, իսկ միւս կողմէ, գիւղին դիմադրութիւնը որ յաճախ ճշմարիտ անձնասպանութիւն մըն է: Այս է երկրի ներկայ կեանքին տիրական իրողութիւններէն մէկը:

Արդ, բուն քաղաքին մէջ, իշխանութեան վրա գործածած ազդեցութիւնները և, ատով իսկ, անոր դիմադրելու միջոցները բոլորովին տարբեր կերպով դասաւորուած են քան նախկին վարչաձևին ատեն կամ ուրիշ երկիրներու մէջ: Քաղաքացի բնակչութեան զանազան խաւերը, իրենց խոշոր դիմերուն մէջ, և նկատի առնելով իրենց ազդեցութեան մակընթացութեան կարգով, կը ներկայացնեն հետևեալ դասերը.— (Երբեմնի դրամատէրները, նախկին քաղաքի, ազնւապետական և դիւանապետական դասակարգերը, իբրև աշուղտիս, ոչ մէկ ազդեցութիւն ունին երկրին մէջ, ոչ ընկերային, ոչ բարոյական, ոչ այլ քաղաքական: Եւ դեռ աւելին.— անոնք «փարիս»ներ են յաճախ ունին այդպէս ըլլալու զգացումը: Իբրև ընկերային դաս, բացարձակապէս ոչնչացած են: Անոնք այլևս հաշի չեն առնուիր արդի կեանքին մէջ)։—

ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (Ինտելիգենցիա)

Մտաւորականները կը գտնուին ահռելի պայմաններու մէջ, քաղաքական և անտեսական տեսակէտով: Այս միջոցն անոնց համար անկարելի է ո՛րեէ քաղաքական ազդեցութիւն գործել իշխանութեան վրա: Տնտեսապէս, անոնք ոչ մէկ ոյժ կը ներկայացնեն: Բայց, բարոյական որոշ ազդեցութիւն կը պահեն, պահպանած ըլլալով ռուսական մշակոյթի և առ հասարակ մշակոյթի տեսականութիւնը: 1923ին, կառավարութիւնը

նը նոյնիսկ փորձած էր իրեն կապել մտաւորականները, լայն խոստումներով: Մտաւորականներու մէկ մեծ մասը վստահեցաւ և մեծ եռանդով աշխատեցաւ մշակոյթի կեանքին այլազան ասպարէզներուն մէջ: Յետոյ, բուլշևիկեան քաղաքականութեան հիմնական հակասութիւններուն հետեանքով, այդ խոստումները չըյարգեցան. կառավարութիւնը փորձեց ճնշում գործադրել մտաւորականներուն վրա, մէկ կողմէ գահոնք դարձնելով դիւանապետներ (բիւրոկրատ), միւս կողմէ՝ մասնագէտ, արհեստագետ (սփէց, ինչպէս կ'ըսեն Ռուսիոյ մէջ): Միջին տարիքի մտաւորականը մինչև այսօր ալ կը շարունակէ իր մշակոյթի գործը, հակառակ անտեսական և բարոյական զարհուրելի պայմաններուն: Այս շարքին մէջ, խիստ կարևոր տեղ մը կ'իյնայ ընկերավարական, և մասնաւորապէս յեղ. ընկերով. և ժողովրդանէր (նարոշնիքի) համոզումներով մարդոց: Դեռ վերջերս, մտաւորականներուն դէմ խոստումներուն վերջինը վերսկսան աւելի քան երբեք սաստկութեամբ կը ճգնին զլիսաւորաբար գահոնք գրկել ո՛րեէ բարոյական ազդեցութենէ, անոնց տեղ դնելով «կարմիր», համայնավար մշակոյթով «մասնագէտներ»:

ԲԱՆՒՌՆԵՐԸ

Բանւորները Սահմանադրութեան համաձայն, ինչպէս և հողերանորէն և, մեծ չափով մըն ալ անտեսապէս, կը կազմեն ժողովուրդին տիրական խաւը: Կառավարութեան տեսական, իսկ ներկայիս իրական ընկերային խաբիսին է այս: Վերջին 12 տարիներու ընթացքին բանւորները մեծցած են, անանաչելի դառնալու աստիճան: Իբրև ընկերային ուժ, անոնք մեծապէս օգուտած են այն առանձնաշնորհակ դիրքէն զոր ստեղծած է յեղափոխութիւնը ընդհանրապէս և Սորհրդային Սահմանադրութիւնն ու բուլշևիկեան առօրեայ գործունէութիւնը մասնաւորապէս: Որակեալ մասին մէջ, բանւորներուն մտաւոր մակարդակը շատ բարձրացած է, ինչպէս բարձրացած են իրենց մշակոյթի պահանջները: Շատ կը իր սրովին անոնք: Անհամար են բանւորական ակումբները, դպրոցները, դասընթացները: Բայց ինչ որ ամենէն աւելի կարևոր է,— բանւորները կը զգան թէ իրենք երկրին տիրապետող դասակարգը, անոր ազգային զլիսաւոր ուժն են: Թերևս ընկերային միւս բոլոր դասերէն աւելի, խորապէս համոզուած են թէ «Ռուսիան մեզի կը պատկանի»:

Այս դասը, որ միւսներէն աւելի է, իր ուժը կ'առնէ յեղափոխութենէն, կրնայ բողոքել, երբ խորհրդային իշխանութեան կամ անոր շրջաններու և գործարաններու ներկայացուցիչներուն քաղաքականութիւնը հակառակ է իր շահերուն: Բանւոր դասակարգին կացութիւնը խորհրդային իշխանութեան տակ՝ կարելի է, կարգ մը տեսակէտներով, բաղդատել այն կացութեան հետ զոր ունէր ազնւականութիւնը ցարական իշխանութեան օրով:

Բայց, մինչ կործանած և պատմականորէն դատապարտած «հեղհեղ» կառավարութեան անկարող էր ո՛րևէ գործ կատարելու հիւսնապարտութեան դէմ, բանւոր դասակարգին կացութիւնը բոլորովին տարբեր է: Այս դասակարգը ինչ է խնդրով և հաւատարմով՝ իր պատմական սպառազօրի մասին, ան ինքզինքը բարոյապէս տէր և տիրական կը զգայ կացութեան և զիտէ թէ նոր դեւանակարութիւնը — այսինքն համայնավար կուսակցութիւնը կը սիրով ակօրինաբար զինքը զրկել իր ադդեցութեան մէկ մասէն:

. . . Ինչ որ ալ ըլլայ, բանւորները կը կազմեն քաղաքական ազդեցիկ և իրական ուժը, որ տակաւին կարևոր զեր մը ունի կատարելիք և որուն վրա պէտք է հիմնել ո՛րևէ նոր կառավարութիւն, ինչ ալ ըլլայ իր աշխարհահայտացքը:

ՆՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ

Պէտք է աչքի առնել ունենալ որ, երեսուն տարին բաւական հասուն տարիք մըն է բոլշևիկ նոր գործիչներուն համար: Սիրցով, ժող. Գործավարներու խորհուրդին նախագահը, հազիւ 33 տարու կայ: Այն երիտասարդները որոնք յեղափոխութեան սկիզբը 15-16 տարեկան էին, կը սկսին բաւական կարևոր դեր մը կատարելու որսական կեանքի բոլոր առաջադէպներուն մէջ: Կը բաւէ նշանակել թէ՛ կարմիր բանակին ամբողջ ստորադաս հրամանատարութիւնը, մէջն ըլլալով վաշտապետները, կը բաղկանայ երիտասարդներէ: Պէտք է մտնալ նաև որ, կարմիր զինուորներու տասը երիտասարդական դասակարգին զարձած են իրենց գիւղերը, — այսինքն ոչ պակաս քան երկու միլիոն զինուորներ որոնք երիտասարդ համայնավարներուն հետ (կոմսոնոլ) խիստ կարևոր դեր մը կը կատարեն գիւղերուն մէջ: Կը յիշեցնեմ նաև որ կոմսոնոլը, որ նմանակէս երկու միլիոն երիտասարդներ կը համբէ, կը սկսի քաղաքական մեծ ազդեցութիւն մը գործել: Անոր շարքերէն է որ կը հաւաքուին ոչ միայն կուսակցութեան ամէն տեսակ քարտուղարները, այլ և բազմազան «առաջադասները» (լիտովիմենցի), ինչպէս և մեծ չափով ուսանողները: Երիտասարդները, որոնք կ'ընդունուին դպրոցները, «հրամանատարական դպրոցները», բազմաբնաստեան վարժարանները և բանւորական համալսարանները (որոնցմէ այժմ ունին աւելի քան 70 հատ), չեն կրնար դերուս մեղադրել իբրև հակայնդադարական ձգտումներու սեղ, որովհետև անոնք յեղափոխութեան զաւակներ են բառին բովանդակ նշանակութեամբ և, իբրև ընդհանուր կանոն, ծաղուսով կը պատկանեն բանւոր-գիւղացիական դասակարգներուն:

Այս երիտասարդները ամենաբարձր աստիճանով կը զգան թէ Ռուսաստանը իրենց կը պատկանի, թէ իրենք անոր տէրն են, թէ մեծ չափով կը հեռանան համայնավար կուսակցութեան յախտնապէս յեղեղովի գաղափարաբանութենէն և մասնաւոր կը ջանան ստանալ այն գործնական գիտելիքները որոնց պէտք պիտի ունենան իրենց կառուցման աշխատանքին մէջ: Անոնք հետզհետէ աւելի կը նեղուրին ուսման ազատութեան

չգոյութենէն: «Երիտասարդ Յառաջապահ» (Ավանդարտ) խմբագրութեան վերջին ըմբոստագումը, որուն հետևանքով թուրքալից երգիծանք մը հրատարակեց Սոսլինի դէմ, մէկ արտայայտութիւն է այն դիմադրական ոգիին որ կը տիրէ երիտասարդներուն մէջ: Անոնք հետզհետէ աւելի յուսախար կ'երևան կառավարութեան բռնած դիրքէն: Համայնավարական հաստատման անվերջանալի կոնֆլիկտները մէկ կողմէ զանոնք կը մղեն դէպի «գործնական մտահոգութիւնները»: Միւս կողմէ ցանկութիւն կը յարուցանեն ճանչնալու ուրիշ, մեծ մասով ընկերավարական (և մասնաւորապէս «ժողովրդականէր») վարչապետութիւններ:

Այս երիտասարդ սերունդը, որուն վրա պէտք է աւելցնել երկու միլիոն «պիտնէք»ները (սկաուտ, արի 14-15 տարեկան) մեծցած է մասնաւոր պայմաններու մէջ: Յեղափոխութեան զաւակներն են ատնք և չեն ճանչնար ոչ դրամատիրական վարչաձևը, ոչ դրամատիրութիւնը, ոչ ալ քաղքենի կարգ ու սարք: Անոնք խորապէս կրած են կնիքը պետութեան մը որ ահագին մեծանորհներ ունի, որ մեծ մասով, սնտեսապէս կազմակերպած է գործակցութեան հիման վրա և որ կը պատկանի բանւորներուն և գիւղացիներուն: Այս երիտասարդները չեն կրնար հրապուրել ո՛րևէ հակայեղափոխութեամբ: Սակայն, այն տարակարծութիւնները որ, շատ մը կէտերու մէջ, զիրենք կը հետապնէ կառավարութենէն, կրնան ծանր հետևանքներ ունենալ. որովհետև այս երիտասարդները, բանւորներուն հետ մէկտեղ կը կազմեն պետութեան ամենէն շարժունակ ուժը: Վերջին ժամանակներս, երիտասարդ համայնավարներու ձերբակալութիւնները սովորական դէպք են դարձած: Եւ խիստ յաճախաբէպ են հրաժարումներն ու արտաքսումները Կոմսոնոլին: Անձնասպանութեանց թիւն ալ կ'աւելնայ տոյն համեմատութեամբ: Այս բոլորը կ'ապացուցանեն Երիտասարդներու անվիճելի յուսախարութիւնը կառավարութենէն:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակը գրեթէ տարամբօթոյն կը բաղկանայ բանւորներու, գիւղացիներու, խորհրդային պաշտօնեաներու և համայնավարներու զաւակներէն, այսինքն ընտրական իրաւունք վայելող ժողովուրդին զաւակներէն (այդ իրաւունքէն զրկած է 8.1%ը, համաձայն սահմանադրութեան): Մայրաքաղաքներէն, կարմիր բանակը կը վայելէ ամենամեծ հոգածութիւնը կառավարութեան և հանրային իշխանութեանց, ինչպէս և համայնավար կուսակցութեան օրկաններուն: Կարմիր բանակը կը կերակրուի ժողովուրդի միւս բոլոր դասերէն առաջ: Մայրաքաղաքներուն մէջ, լաւ զգեստուութեամբ է, կը հետևի գրաստադպրու, ունի իրեն յատուկ սկուսներ: Կարմիր զինուորները, ինչպէս բանւորները, թատրոն և սինեմա կը յաճախեն. գործնոցներուն մէջ դասախօսութիւններ կը սարքին անոնց համար, — վերջին ժամանակներս մասնաւոր հողագործական դասընթացներ, որովհետէ, իրենց գիւղերը վերադարձած ատեն, կարմիր զինուորները կարենան գործադրել կառավարութեան հողագործական քաղա-

քականութիւնը. այսինքն, «սովխոզ» (խորհրդային անտեսութիւն) և «կոլխոզ» (հաւաքական անտեսութիւն): Կարծիք գինւորները կը հետևին նաև քաղաքական ուսման, համաձայն շափազանց ընդարձակ ծրագրի մը և, կարճ խօսքով, կը ստանան ապահովարար յեղափոխական դաստիարակութիւն մը: Կարգապահական ասֆալտայ կանոնադրը կը յայտնէ կը մեակերպէ կարծիք բանական պաշտօնը:

— «Պորհրդային Ընկերավարական Հանրապետութեանց Միութեան կարծիք Բանակը սահմանած չէ ստրկացնելու միւս Ժողովուրդները, այլ պաշտպանելու և շխատաւորներուն շահերը, պահպանելու խաղաղութիւնը և բանւորներու և գիւղացիներու խաղաղ աշխատանքը»:

Կասկած չկայ որ, հոգեբանօրէն, այս բանակը սերտօրէն կապած է բանւոր և գիւղացի բնակչութեանց և թէ այս վերջիններս հոգեկան վիճակը հզօրացնուցնուց կարծիք գինւորներու հոգեկիւն վրա: Այս կապը մասնաւորապէս ստիւտն է, մինչև այսօր, կարծիք բանակին և բանւորներուն միջև և կ'ամբարշտէ այս կամ այն դործարանը «ՀՎՖ», կնքահայր կամ կընքամայր անուններով բանակի այս ինչ կամ այն ինչ միւտորին: Զինւորներու, բանւորական վաշտերու և համայնավար Երիտասարդներու միացեալ ռազմախաղերն ալ կը նպաստեն ամբարշտելու այս կապը: Առհասարակ, կարծիք բանակը մեծ յարգանք կը վայելէ Ռուսիոյ մէջ. փողոցները և հանրային հրապարակները յաճախ կարծիք բանակի, կարծիք հրամանատարներու, ռազմայեղափոխական խորհուրդին, այս կամ այն գորարածին, զորապետին անունները կը կրեն: Զինւորական արհեստն ալ շատ յարգի է. ամբողջ Ժողովուրդը առանց բացառութեան այդ ստպարէզէն կ'անցնի յայտնէ կամ այնպէս, «սիւնէրճնէրէն (արիներ), այսինքն 14—15 տարեկան պատանիներէն մինչև երիտասարդ համայնավարները, ուսանողները, պաշտօնականը և տարիքոտ արհեստիները:

Ոչ պակաս (և թէ ոչ աւելի) քան բանւորներն և երիտասարդները, — կարծիք գինւորներն այն դրացումն ունին թէ «Ռուսաստանը իրենցն է» և թէ պէտք է իրենց բոլոր ուժով պաշտպանեն այն Ռուսաստան որուն տէրն են: Բայց, վարիչ կուսակցութեան ծոցին մէջ ծագած հասուածական ուժգին պայքարը ի հարկէ խոր անդրադարձուած կ'ունենայ բանակին շարքերուն և մասնաւորապէս աստիճանաորներուն շարքերուն մէջ: Մասնաւորապէս պայքարը Տրոցկիին և տրոցկիականներու դէմ որոնք խիստ բազմաթիւ են հրամանատարութեան մէջ, կը շարունակուի մինչև այսօր և կարեւոր սարք մը կը կազմէ կարծիք գինւորներու և մասնաւոր սպաներու քաղաքական կրթութեան: Այս հատուածական կրիւններ և այս պայքարը կարծիք բանակը կը մղեն բազմաթիւ չէրք մը բռնելու համայնավարական զաղափարաբանութեան կանդէպ: Հոգեբանօրէն, սպաները կը սկսին կամաց կամաց ծուռ նայիլ ամէն զգալարարաբանութեան» և ներքին մասնաւոր իրենց գինւորական արհեստին գործնական ուսումնասիրութեան: Ինչ որ ալ լլայայ, մարդ այն յատակ սպաւորութիւնը կ'ունենայ թէ՛ դժուար պիտի լլայայ այս բանակը գործածել բանւորական և գիւղացիական

զանգուածներուն դէմ որոնց կապած է, ի վերջոյ, և՛ զգացումներու նոյնութեամբ և՛ արեան կապերով:

ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Տրոցկիի շնորհադրութեանն է ի վեր, անհամար փոփոխութիւններ կրած է բարձրաստիճան սպաներու գունդը: Շատերը քննած են բանակին ցանկէն, կամ Տրոցկիի և կամ ցարական նախկին բանակին հետ կապեր ունեցած լլայով: Այս մաքրագործումը կը շարունակուի այսօր ալ և հրամանատարութեան մէջ կը ստեղծէ անապահովութեան այն զգացումը որ յատուկ է Ռ. Միութեան ամբողջ զորաթիւնին, բոլոր անոնց որ որեւէ պաշտօն կը վարեն, լլայ իսկ մասնաղէտի, կամ կուսակցական կազմակերպութեան մը քարտուղարի:

Ստորադաս հրամանատարութիւնը այժմ կը հաւաքուի միայն բանւորներու, գիւղացիներու (չքաւոր) և համայնավարներու շարքերէն: Զինւորական վարժարան ընդունելու համար, աւաջին պայմանն է պատկանել ժողովուրդի որոշ մէկ դասուն:

Բարձր ուսում չի պահանջել թեկնածուներէն, բայց անոնք պարտաւոր են գիտնալ համայնավար ընդգրկուողի հոսանքներու դործած շարիները ոչ միայն Ռուսիոյ, այլ և բովանդակ աշխարհի մէջ, այլ մասնաւոր գիտնալ Տրոցկիի պատճառած շարիքները:

Զինւորական վարժարաններու աշակերտները, ինչպէս և սպաները և իրենց քնտանիքները կը վայելեն մեծ առանձնաշնորհներ՝ հողի, տուրքի, ընկերային ապահովագրութեան, վարձքի, բժշկական խնամքի, դատական ծախքերու, թղթակցութեան, թաղման ևն. համար: Սպաներուն ոտնիկը շատ բարձր չէ, — 92½ բուրլէն մինչև 220 (չօրարանակի հրամանատար): Ստորադաս սպաները համեստ մարդոց տպաւորութիւն կ'ունեն, մարդիկ որոնք չեն խառնուր քաղաքականութեան և որոնք յաճախ կը հասկնան իրենց գինւորական կրթութեան անբաւականութիւնը: Մաքած լլայով բանւորներու և գիւղացիներու խաւերէն, խոր կապեր ունին անոնց հետ. այս վերջիններս հոգեկան վիճակը շատ աւելի սպրեկտրութիւն ունի ստորադաս սպաներուն վրա քան ցարերու շրջանին:

ՆՈՐՀՐԿԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐԸ

Որոշ բազմաթիւ, բերրիդատիկ, խեղճ ոտնիկով, խորհրդային պաշտօնատարները ոչ մէկ անկախ ուժ կը ներկայացնեն, անկարող են բողոքելու, իբրև ամբողջութիւն՝ երկշտ են, ահաբեկ, ենթարկած բարձրագոյն գիւտնապետութեան և համայնավարական ամէն տեսակ օրկաններու կամայականութեանց. միշտ կը զողովան պատու մը հային համար, անհաղար ենթակայ են ամէն տեսակ մաքրագործումներու, պաշտօնի փոխանակութիւններու և արտաքստմաներու ևն: Անկարող՝ բողոքելու, այս խորհրդային գիւտնապետութիւնը նոյնքան անկարող է թիչ-շատ գործուն նեցուկ հանդիսանալու բուշեկներուն: Յաճախ կը պատահի, որ հաստատութեան մը ամբողջ պաշտօնէութիւնը փոխել վերէն վար, նայելով թէ համայնավարական ո՛ր հաստածն է որ յաղթանակած է. և այլ

հաստատութեան ամբողջ վարչական կեանքը կը կազմալուծուի: Կրճատուները, գանապան հաստատութեան մէջ հատի մէջ ձուլումը, յաճախակի «մաքրագործումները» և ուրիշ բազմաթիւ նմանօրինակ տնօրինութիւններ կը ջղախնայեն խորհրդային պաշտօնատարները, որոնք չեն կրնար վստահ ըլլալ վարչական համար: Սակայն, տողովուրդին այս դասը մեծ արժէք կը ներկայացնէ, որովհետեւ ան միայն ամբողջ երկրին մէջ ունի վարչական և դիւանապետական յայտնաբերութիւն: Եթէ կը դիմադրէ հակայեղափոխութեան, պատճառն այն է որ յեղափոխութեան կը պարտի պաշտօնը, կ'ըմբռնէ նախկին վիճակին վերադառնալու անկարելութիւնը, կը վախճայ ամէն նոր վերելվարումէ և քաղաքացիական պատերազմէ:

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ

Վերջին 12 տարիներու ընթացքին, գիւղացիները գրեթէ անդադար կուրի մէջ են եղած համայնավար կուսակցութեան հետ, և այս պայթարը, շնորհիւ բողջիկներուն, յաճախ դարձած է պայթար դիւրին և քաղաքին մէջ:

Համայնավարական հատածներու կատարի պայթարը յանգեցաւ Ստալինի քաղաքականութեան յաղթանակին: Արդ, այս վերջինը 28 միլիոն գիւղացիական անհատական տնտեսութիւնները բացէ ի բաց կը յայտարարէ թշնամի «խորհրդային և ընկերավարական կառուցման գործին»: Ստալինի յաղթանակին հետեանքն եղաւ փառաւոր ցնորք մը, Ռուսիոյ «ճարտարարեւտացումը», այսինքն հողագործական հակայ երկրի մը կերպարանափոխումը իր 87% գիւղացիական բնակչութեամբ: Կերպարանափոխում մը որուն շնորհիւ պիտի դառնայ «ամենէն յառաջացել ճարտարագործական երկիրը», ձեռք քաշելով օտար ճարտարարեւտի ներածումներէն: Միւս կողմէ, որպէսզի կարենան ձեռք քաշել անհատական գիւղատնտեսութենէն, որ ներկայիս չի կրնար բաւականաչափ բերք արտադրել արտաքին վաճառականութեան համար, պատրաստած է հաւաքական տնտեսութեան ծրագիր մը: Հելինակներուն կարծիքով, այս ծրագրին շնորհիւ, բուլղիկեան կառուցութիւնը բացարձակապէս անկախ պիտի ըլլայ անհատական տնտեսութեանց հանդէպ և պիտի կրնայ ապահովել քաղաքներուն և կարմիր բանակին պարիսնաւորումը, «ճարտարարեւտացումը» իրագործելու և արտածումներ կատարելու համար:

... Գիւղացին շանգրտանար որ բուլղիկեան դիկտատուրային տեսակէտները, այնպէս ինչպէս ձեռնկերպած են վարիչ կուսակցութեան, և մասնաւորապէս Ստալինի հատածին կողմէ, հակառակ են գիւղական բնակչութեան շահերուն և այս հակամարտութիւնը հետզհետէ աւելի վճառական պիտի դառնայ: Յետոյ, գիւղացիները կ'ուզեն ստանալ շարք մը մշակութային, քաղաքական և նիւթական առաւելութիւններ, որոնք բաժին ինկած են (կամ խոստացած են) բանւորներուն:

Արդարև, և է՛ք մէկզի դենք հողին արդիւնքը վախելու որոշ ազատութիւնը, յեղափոխութիւնը գիւղացիին շքերս ինչ որ կը սպասէր և այս տեսակէտով,

յեղափոխական հողովումը չէ վերջացած Ռուսիոյ մէջ: Ահա թէ ինչու գիւղական բնակչութիւնը, թէև հակաբուլղիկ, երբեք մի մաղթեր դառնալ անցեալին: Ընդհակառակն, կը միտէ այդ անցեալը մանաւանդ անոր համար որ, իր հողերը ոտացաւ յեղափոխութեան շնորհիւ, կալւածատիրութեան ջնջումով: Գիւղացին յեղափոխութեան կողմն է, բայց ոչ բուլղիկութեան: Գիւղերը հետզհետէ կը խճողին. գիւղացիներուն գաղթը դէպի քաղաքներ — ի խնդիր աշխատանքի — ահագին համեմատութիւններ կ'առնէ մանաւանդ վերջին ժամանակներս: Այս բոլորը կը նպաստեն, մէկ կողմէ՝ գրգռելու գիւղական բնակչութեան դժգոհութիւնը, և, միւս կողմէ, սերտացնելու շփումը քաղաքի և գիւղի աշխատւորներուն: Զինուորութենէ դարձած կարմիր զինուորներն ալ, իրենց կարգին, կարևոր դեր մը կը կատարեն այս փոխադարձ ձուլման մէջ:

* * *

... Համայնավար կուսակցութիւնը այս միջոցին մասնաւորապէս ծանր տագնապ մը կ'անցնէ. տագնապ մը որուն սկիզբը կը սկսի Լենինի կեանքին վերջին տարիէն: Այս տագնապը այնքան ակնբեր է որ սպաւազուցելու պէտք չունի: Կուսակցութեան «ընդհանուր» մաքրագործումը, որ սկսաւ 1928ին, դուրս նետեց շուրջ 200,000 հոգի, զլիսաւորարար ամէն կարգի ընդգրկմադիւններ: Ներկայիս կուսակցութիւնն ունի 1,300,000 անդամ: Մեծ թիւով համայնավարներ կը գտնուին բանտերու և աքսորի մէջ: Արտադադթը կ'աւելնայ շարունակ: Համայնավար տարագիրները շարք մը պարբերականներ կը հրատարակեն արտասահմանի մէջ: Իսկ Ռուսիոյ մէջ գաղտնի տպարանն է որ կը գործի: Գաղափարական տեսակէտով աներևակայի խառնաշփոթութիւն մը կը սիրէ համայնավարական շարքերուն մէջ: Երբեմնի երկաթեայ «միասնական» կուսակցութիւնը չկայ այլևս: Գրեթէ բոլոր հին դադափարաբաժանները, որոնք ապահոված էին կուսակցութեան յաղթանակը, մեկուսացած են կամ աքսորուած: Մաքրագործումը վերջ է վերջոյ հասաւ կէփելին: Կուսակցութիւնը հետզհետէ կ'ալլատներ և կը դառնայ համայնավար պաշտօնեաներու խառնակոյտ մը, գուրի հաւատքէ և խանդավարութենէ: Անոնք որ կը բաժնիկ կուսակցութենէն, գաղափարական շարժառիթներով, կը փորձարկեն և յայտնու և շահահանգիր տարներով, որոնք ոչ մէկ կայ ունին բուլղիկեան երբեմնի գաղափարաբանութեան հետ: Թատարէն կը կազմել կառավարող մեքենայ մը, մեծ մտտով գիւնապետական: Այս կերպարանափոխումը աչքի կը գարնէ ոչ միայն պարզ բնակչին, այլ և համայնավարին համար: Ատո՛վ կը բացատրուի երիտասարդութեան ձգտումը՝ հրաժարելու գաղափարաբանութենէն, և ներկելու գործնական մտահոգութեանց, ինչպէս և անոնց հետաքրքրութիւնը ուրիշ, ոչ-համայնավարական վարդապետութեանց մասին:

Վ. ԼԵՂԵՏԻ

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ի Ջ

Օրւան մտահոգութիւնն է, միշտ, երմտական-տնտեսական տագնապը, որ երթալով կը սաստկանայ և կը ճիւղաւորւի: Քանի մը թւանշաններ՝ ամբողջ կացութիւնը պարզեցէ առաջ:

«Ներածումները 1 տարւան մէջ մեր հարիւր միլիոն ոսկին կերան»:

Այսպէս կը բնորոշէ զէմալական թերթ մը՝ 1929ի առևտրական հաշիւները:

«Իրօչակ»ի վերջին համարով, անցողակի յիշեր էինք թէ 1929ի տասը ամիսներուն մէջ, Թուրքիոյ առևտրական բացը եղած է 90 միլիոն ոսկի: Մաքսային վերատեսչութիւնը հրատարակութեան տւած ըլլալով կարգ մը նոր հաշիւներ, երևան կուզայ որ վնասը հարիւր միլիոն ոսկին կ'անցնի: Եւ դիտենք որ անցեալ հոկտեմբեր-նոյեմբերին թրքական ոսկին զլուխն առած կը թաւալէր դէպի դետին:

Ինչպէս ըսինք, այս հաշիւները հիմնւած են մաքսային վիճակագրութեանց վրա, որոնք թէ՛ անկանոն կը հրատարակին և թէ՛ պակասաւոր: Այսպէս, ապրիլին հրատարակեցան անցեալ Մայիս և Հոկտեմբեր ամիսներու ցուցակները: Անկէ առաջ հրատարակւած էին 1929 Ապրիլի և Յունիսի ցուցակները: Ուրեմն, տակաւին բաց կը մնան Յուլիս-Օգոստոս և Սեպտեմբեր ամիսներու վիճակագրութիւնները:

Նոր հրատարակութեան համաձայն, 1929 Մայիսին և Հոկտեմբերին Թուրքիոյ ներածումներն ու արտածումներն եղած են.—

	Ներածում	Արտածում
1929 Մայիս	21.159,000	10,273,000
Հոկտեմբեր	8.579,000	14.107,000

Կը հետևի թէ, շուրջիւ ձեռք առնւած միջոցներու, 1929 հոկտեմբերին արտածումները ներածումներէն աւելի եղած են, իսկ մայիսի՝ ներածումները կը կադ-մէէն արտածումներուն զբիթէ կրկինը:

1928ի նոյն երկու ամիսներուն արտածումներու և ներածումներու գումարն եղած է.—

	Ներածում	Արտածում
1928 Մայիս	23,000,000	19,588,000
Հոկտեմբեր	22,962,000	14,171,000

Ուրեմն, 1928 մայիս և հոկտեմբեր ամիսներու և 1929ի նոյն ամիսներուն արտածումները և ներածումները հետեւեալ յաւելումները ցոյց կուտան.—

	Ներածում	Արտածում
Մայիսիս	1.841,000	9.315,000
Հոկտեմբերիս	14,383,000	64,000

Հարցը այն է որ, ինչպէս ողբալով կը հաստատէ «Ճիւղաւորեցի՞ր», մէկ տարւան արտածման և ներած-

ման միջև հարիւր միլիոն ոսկի տարբերութիւն կայ ի վնաս քէմալայտութեան:

Արդարև, 1928 և 1929 տարիներու արտածման և ներածման ընդհանուր գումարներն են.—

	Ներածում	Արտածում
1928	223.531,000	173.537,000
1929	255.988,000	155.375,000

Պարզ թւաբանական գործողութիւն մը կը ցուցնէ որ 1928ին ներածումները արտածումներէն աւելի են եղած մօտ 50 միլիոն ոսկի, իսկ 1927ին՝ 100,623,000 ոսկի: Միևնոյն ատեն կը տեսնուի որ 1928էն 1929 ներածումներու գումարը 32% միլիոն ոսկի աւելցած է, իսկ արտածումները 18 միլիոն պակասը են:

«Այս տարւան հաշիւներին հարիւր միլիոնի տարբերութիւնը տարիներէ ի վեր շտեմարած երկիրցալի տարբերութիւն մըն է», կ'երկարացնէ թուրք թերթը: * * *

Ըստ Ֆաշայի կառավարութիւնը բացառիկ միջոցներ խորհած էր, Թուրքիոյ առևտրական կացութիւնը բարոյցելու համար, երբ տակաւին հաստատւած չէր այս աճաւոր բացը: Խնայողութիւն, տեղական ապրանքի գործածում, գանադան կարգադրութիւններ՝ դրամը երկրին մէջ պահելու համար և այլն: Կիներն անգամ շարժման մէջ դրեցան, որպէսզի պայթար մղեն օտար ապրանքի, արդուզարդի, պերճանքի դէմ: Եւ թրքուհիները տեղական ապրանքներու փառքը երգեցին սարքովի ժողովներու մէջ, դարդարւած՝ և քուրպական զխարկներով, մուշտակներով և անուշահոտութիւններով...:

Խնայողութիւններ պիտի կատարէին նաև թուն ելեմտացոյցին մէջ: Վարչապետը, իբրև կարևոր լուր՝ կը հաղորդէր Գաղթականներու Տեսչութեան ջնջումը, որով պիտի շահէին... 300,000 ոսկի, 225 միլիոն ոսկինոց ելեմտացոյցին մէջ:

Արդիւնքը:— «Խնայողական պայթարը, որ մէկ երկու ամիս առաջ կրակի պէս կը վառէր, երէկ վառ և այսօր մարող բոցի մը նման մոխրի դարձաւ»:

... «Հակառակ մեր բոլոր պաշտպանութեանց, տեղական ապրանքին արժեքները աւելի բարձր է, քան աշխարհի միւս ծայրէմ եկած ապրանքին գինը: Եւ քանի չեմք կրնաք աւելի վար գնով ապրանք պատրաստել, պայթարը չպիտի տայ պահանջւած արդիւնքը: Այլապէս, այս խանութի մէջ չորս ոսկիի ծախած անգլիական կերպաս մը որ դիւրութեամբ յաւանորդ կը գտնէ, քան տեղական կերպաս մը որ աւր ոսկիի կը ծախի դիմացի խանութի մէջ»: (Փոլիթիքա, Պոլիս):

Փղթասենք ուրիշ թերթ մը.

— Կայուն վիճակի մը մատուցած են Պոլսոյ առևտուրի և արտոնքի սակարանները, արտածում չըլլալուն հետևանքով: Գործարք խիստ նագած են: Այժմամպի և բուրդի գործառնութիւնները այս տարի շատ քիչ շաքայտաբոյ ունին, գերման և անգլիացի գնորդներու չըջուրթեան հետևանքով: Բամպակի վրա գործքէ ոչ մէկ գործառնութիւն չ'ըլլայ: Քանի մը ամբէ ի վեր կաղիկի գործերն ալ կտրած են, ինչպէս նաև որսի կենդանիներու մորթելը որոնց վրա նախորդ տարիները, այս օրերու, լա. գործառնութիւն կ'ըլլայ: Այս տարի Ամերիկա և Գիւրմանիա ոչ մէկ ապպարմք բլած են:

Սակայանը այս օրերուն ցորեմի սակարան դարձեր է, որովհետև այս ապպարմքի վրա միայն գործ կ'ըլլայ: Յորեմի վաճառականներն են որ կուգան ամէն օր և ամէն ժամ գործ կը կատարեն: Այս կացութիւնը մտահոգութեան մատուցած է Սակարանի վարչութեան անդամները, որովհետև օրական հազիւ 70 ոսկի հասոյք կ'ունենայ, մինչդէռ Սակարանի միայն պաշտօնէութեան ամսականը 5000 ոսկի կը բռնէ: Եթէ հասոյքը չաւելնայ, հարկ պիտի ըլլայ կրճատում կատարել:

Մասնութիւնները դարձած են արդէն ամենօրեայ դէպք, ինչպէս ոճիւր-արկածները: Ապրիլի առաջին օրերուն, Պոլսոյ մէջ, միայն մէկ շարքիւն ընթացքին հաշտարարի համար դիմում կատարեցին 108 առևտրական տուներ: Իգմիլի մէջ թուրք վաճառական մը անձնասպան եղաւ ամիտն խմելով: Ատանայի մէջ, Թրակիայէն փոխանակած վաճառական մը, որուն վրա մեծ յոյսեր դրած էին, անակացաւ երկու միլիոն ոսկի բացով: Օսմ. Իրամատուրը պաշտօնակ ըրաւ իր մասնաճիւղին տնօրէնը, որ աւելի վարկ բացած էր: Պոլսոյ մէջ, շինութեանց ընկերութիւն մը, որուն բաժնեկից էր նաև իտալական խմբակ մը, հաշտարարի ենթարկեցաւ: Նոյն բախտին արժանացաւ կալւածական ընկերութիւն մը: Գերման երկարական ընկերութիւն մը որոշեց դադարեցնել իր գործառնութիւնները: Նոյնպէս՝ օ տը քորնի գործարան մը:

Վերջին շարքիւններու ընթացքին, թուրքերէն ո՛ր և է՝ թերթի մէջ, կը հանդիպէք այս կարգի լուրերու, որոնք այլևս սովորութիւն չեն գործեր, որովհետև կացութիւնը իրականորէն մէջ աւելի ծանր է քան կը պարզեն այդ լուրերը: Մեծ յոյսեր դրած էին ըսմէթ փաշայի տնտեսական ծրագրիներուն վրա, բայց յուսախաբութիւնը չուշացաւ: Նոյնիսկ ասպարէզ իջաւ թերթի մը, «Ճարըն», ամբողջ դահլիճին հրատարականը պահանջելու համար: Անշուշտ, խմբագիրը բանտ զըրկելու պայմանով:

Սովորական խստութենէ մը տարբեր են այս թերթի ղեմ բացած շարք մը դատարան և խմբագրին ու պապասխանաւոր տնօրէնի ձերբակալութիւնը: Խրմբագրի, Արիֆ Օրուճ պէյ, նախկին հրոսակ մըն է, ազգային հերոս: Փաղաքելով հանդերձ Մ. Քէմալն ու ըսմէթ փաշան, փորձեց հարածել անոնց քաղաքականութիւնը և գործակիցները, մասնաճարակաւ երմտական և դատական գործակալները: Առջինն սլաքը՝ սուր հեղուկութիւն մըն էր՝ թրքուհիներուն ընտրական իրաւունքը տրւելուն առթիւ.— «Անօթի մարդուն ամբ մը աչիւր տալու տեղ, ջաղացքի քարերը ցուցնել՝ ինչի՞

կը ծառայէ, որո՞նք փորը կրնայ կշտացնել»: Յետոյ, իրարու ետե՛ք սկսաւ հրատարակել շարք մը խմբագրականներ, որոնք մանածասպարտ բանաձեւերու տակ, համարձակ լեզու մը կը մտանէն: 1925ի դըրըպաին դատավարութիւններէն ի վեր, որ սճեցցուց թուրք հրատարակարութիւնը, ասպարէզէն քելով անոր ամենէն հեղինակաւոր ղեմքը, Հիւսէյն Ճահրաբ, առաջին անգամ էր որ Մ. Քէմալն ականջին կը հնչէ այսպէս խորխտ ձայն մը: Խոշոր իրողութիւններ, ցնցող փաստեր չկան «Ճարըն»ի հրատարակութեանց մէջ. բայց ոգին անհանդուրժելի թւեցաւ: Խմբագրին ձերբակալութենէն յետոյ, օգնականը շարունակեց հրատարակել թերթի նոյն բուն շեշտով, բայց իր կարգին բանտ նետեցաւ, ուղղակի էնկիւրիի հրամանով: Իր կարապի երկն եղաւ հետեւալ նախադատութիւնը, միշտ ընդհանուր բառերով.

— «Դժբախտար դասակարգ մը կայ, որ կ'ուզէ իր ետը պարտարել իրկիլն և այս ազգին քաղաքական կեանքին մէջ: Այս դասակարգը քաղկացած է անոնցմէ արոնք երբէք չեն ուզեր բաժնւնի աթոռէն և միշտ կ'ազնու շարունակել իրենց փառաբանները: Այս թշուառականները, արոնք իրենց գրեթէ ուժի ազրիւր մը կը կարծեն, ահա այս օրում վիճակին ենթարկեցին այս երկիրը: Այս ազգը երբէք չպիտի ներէ այն դէմքերուն արոնք անթուրքիւնը և թշուառութիւնը ստեղծեցին և կը ծիծաղին այս թշուառութեան հանդէպ»:

Յիշէ՛ք թէ ակնարկը կ'երթայ ուղղակի կառավարութեան անդամներուն, որոնք՝ երկուքը արդէն դատ բացած են անձնապէս: «Ներքը» ուղղակի կ'ամբաստանէ Լիմասական գործադարը, գերմանական տան մը ծախած ծխախոտներու գայթակղութեան առթիւ: Իսկ ուղղակի ասկիւրութեան և շարահաշտութեան կը վերաբարէ վերջին սակարանական օրէնքները — բացարձակ մէջոցներ — «Իրար հակասող բունի որոշումներ» որոնք ժէկուկէս անդ. ոսկիի նստան աս չլաւոր ազգին որ էր քսակին մէջ 4-5 դըշ. շունք»:

Այս նոյն թերթին է որ, տող ընդ մէջ կարդաց այնպէս բացարձակ տնօրէնութեան մը իմաստը: Ապրիլի սկիզբը, թուրքերի դատական գործադարութիւնը կը հաղորդէ կարևոր օրինազիծ մը, «Ճերկին կարգ մը շրջաններուն մէջ անդորրութիւնն ապահովելու և արդարութեան մեքենան աւելի արագ բանեցնելու համար»: Օրէնքը փոփոխութիւններու կ'ենթարկէ դատավարութեան եղանակը, կարգ մը վայրերու մէջ, և մասնաւոր տրամադրութիւններ կը սահմանէ գողութեան, խառնակութեան և պետական հեղինակութեան ղեմ շարժելու նման յանցանքներու հեղինակներուն: Եթէ յանցանքը ոճիւր է, Հինգ հողինոց դատարան մը պիտի ընէ, իսկ աւելի թիթիկ աղբարքներու համար՝ երեք հողինոց: Վճիռները անվերաքննելի են, նոյնիսկ մասնապատիժի պարագային:

Օրէնքը պատրաստած է «առաջին ցննչութեան շրջանին» համար, որ կը նշանակէ՝ Արևելեան նահանգներ, այսօրվան իմաստով՝ քրտական շրջան:

Էնկիւրի անդորրութիւնն ամբողջաւորած համարելով, ջնջեց անկախութեան ատենները: Բայց կարճ տևեց իր աւետիւրը: Քրտական կրակը վրա է միշտ, և

բոցավառելու նշաններ ցոյց կուտայ այս օրերս: Թրքական առած մը կ'ըսէ. «էշը նստիր մէկ ամօթ, վար իջնելը՝ երկու»: Էնկիւրի բ'նչ երեսով կրկին բացառիկ օրէնքներ հաստատէր, — վերահաստատէր անկախութեան ստեաններ, պաշարման վիճակ են: Եւ ահաւասիկ նոր գիւտար, — գառական գործավարը գրիչ կը խաղցնէ գատաստանագրքին մէջ, իրաւունք տալով քրտական շրջաններու դատարաններուն՝ որ շարժին

այնպէս ինչպէս պիտի ընէին եթէ պաշարման վիճակ հոչակած ըլլար: Այս կարգադրութեան առաւելութիւնն ալ այն կ'ըլլայ որ, թէ ժողովուրդը կը քնացնեն — ե՛րբ է արթուն եղած թուրք ժողովուրդը — և թէ արտասահմանի կասկածելու պատճառներ չունենար, ճիշտ այն պահուն երբ զրամ կը մուրան, իրենց վարկը վերահաստատելու համար:

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

Ը. Ա. Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէն 1929 թ.ի յուլիսի գումարումին օրակարգի վրա էր գրել Ս. Հ. Միութեան սահմանների վրա նշմարուող պատերազմի վտանգի հարցը: Մենք այսօր է վիճակի չենք հրապարակ հանելու, թէ ի՞նչն էր գրգէլ Գործադիր Կոմիտէին գրադելու այս հարցով: Թերևս մի ուրիշ առթիւ հնարաւորութիւն ունենանք արտայայտելու այս մասին: Ներկայիս այսքանը կարող ենք ստել, որ յիշեալ հարցի զննութիւնը անհրաժեշտ լրջութեամբ կատարելու համար, Ինտերնասիոնալի քարտուղարութիւնը յանձնարարել էր, որ Ս. Հ. Միութեան մէջ և նրան սահմանակից երկրներում գործող կուսակցութիւնները առանձին գեկուցադրերով ձևեն իրենց դիրքը հակախորհրդային պատերազմի վտանգի հանդէպ:

Այս յանձնարարութիւնը կատարել էին մի շարք կուսակցութիւններ, ինչպէս օրինակ, Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցութիւնը, Ուկրայինական Ս. Դ. Կուսակցութիւնը, Վրաց Սոցիալ Դեմոկրատիան, Ֆինլանդիայի Ս. Դեմոկրատիան, Հ. Յ. Դաշնակցութիւնը և ուրիշ մի քանի կուսակցութիւններ:

Գործադիր Կոմիտէն, տեսնելով որ իր նիստերին ընթացքին անհնարին է լինելու ուսումնասիրել այս

գեկուցադրերը՝ նշանակեց մի Յանձնախումբ այս հարցով ոչ-անմիջականօրէն շահագրգռած կուսակցութիւնների ներկայացուցիչներին՝ յանձնարարելով նրան, ուսումնասիրել ներկայացած և ներկայացուցիչ գեկուցադրերը և Գործ. Կոմիտէի յաջորդ գումարմանը գեկուցանել իր եզրակացութիւնը:

Յանձնախումբը սոյն մայիսի 25ին գումարեց Բերլինում, լսեց շահագրգռած կուսակցութիւնների ներկայացուցիչներին, որոնց թում և Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչն, և բանաձեւելով իր եզրակացութիւնները՝ ներկայացրեց Ինտերնասիոնալի Քարտուղարութեանը Գործադիր Կոմիտէի զննութեանը դնելու համար:

Գործադիր Կոմիտէի որոշումն այս հարցի մասին հրատարակելուց առաջ՝ անհրաժեշտ ենք նկատում նախապէս ծանօթացնել մեր ընթերցողներին, թէ ի՞նչ տեսակէտներ ունէին նրա մասին շահագրգռած կուսակցութիւնները:

Այս անգամ մենք առաջ ենք դնում Հ. Յ. Դաշնակցութեան գեկուցադիրն ամբողջովին: Միւս գեկուցադրերին կանոնադառնանք «Դրօշակ»ի յաջորդ թիւ մէջ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳՈՒ Խ. Հ. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ս. Հ. Միութեան սահմանների վրա ծագելիք ամէն մի պատերազմի հանդէպ, Ա. Ը. Ինտերնասիոնալը և նրան յարած կուսակցութիւնները նոյն սկզբունքային դիրքը կարող են ունենալ, ինչ որ նոքա ունին առհասարակ ամէն մի պատերազմի հանդէպ: Համաշխարհային պատերազմի փորձից յետոյ մանաւանդ, ընկերավարական կուսակցութիւնները նողկանք միայն կարող են զգալ դէպի միջազգային բարգուծիւնները պատերազմով լուծելու մեթոդը, որ ոչ միայն պատահականութիւնների է ենթարկում աշխատաւոր դասակարգե-

րի ընկերային յառաջիմութիւնը, այլ և, պատերազմական տեխնիկայի ներկայ պայմաններում, մահացու վտանգ է սպառնում մարդկային քաղաքակրթութեանը և նոյնիսկ մարդկութեան գոյութեանը:

Եւ եթէ Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէն իր առաջիկայ նստաշրջանի օրակարգի հարցն է դարձրել Ս. Հ. Միութեան սահմանների վրա ծագելիք պատերազմի վտանգը՝ նրա նպատակը չէ անշուշտ մի անգամ ևս սկզբունքային որոշում հանել պատերազմի դէմ, այլ՝ ուրազօծել այն միջոցները, որ պէտք է ձեռք

ատենն ինտերնացիոնալը և ընկերվարական կուսակցու-
թիւնները այդ վտանգը կանխելու համար: Այսպէս
մտածելու իրաւունք ունենէջ նկատի առնելով նաև, որ
ժլեշակ վտանգի մասին զիկուսումներ ներկայացնելու
յանձնարարութիւնն է արևած այն կուսակցութիւննե-
րին, որոնք Ս. Հ. Միութեան մէջ կամ նրան սահմա-
նակից երկրներում գործելով՝ առանձնապէս շահա-
գրուած են Ս. Հ. Միութեան և իր հարեանները մի-
ջև ծագելիք պատերազմով, հետևարար և առաջին գծի
վրա պէտք է կանոնեն այդ պատերազմի պատճառները
և շարժառիթների ղեմ պայքարելու գործում:

Իրեն մէկին այդ կուսակցութիւններից՝ Ն. Յ.
Դաշնակցութիւնը հետևելով նկատուածներն ու տեսա-
կէտներն ունի ստալինյան Նոյնի մտերին:—

Ս. Հ. Միութեան ղեմ ձեռնարկելիք ամէն մի
պատերազմ՝ անհրաժեշտորար պէտք է կատեցնէ ինք-
նաքայքայման պրոցեսը, որով բունած է կոմունիս-
տական կուսակցութիւնը՝ ղեկի յետին գծերը մղելով
այն բոլոր ներքին տարածայնութիւնները, որոնք պար-
բերաբար տաղանայներ են առաջ բերում այդ կուսակ-
ցութեան մէջ և ծանր անդամահատութիւնները հար-
կաբանքն ստեղծում նրա համար:

Իսկ եթէ նկատուի անհնաճ, որ ամէն մի այդպիսի
պատերազմ կամ բաժան-բաժան անելու կամ նրանից
հողեր գաւթելու նպատակ պիտի հետապնդէ՝ ապա
կատարուից դուրս է, որ նա պէտք է նաև ամբապնդէ
խորհրդային իշխանութիւնը՝ «Տարեհիթի պաշտպա-
նութեան» տրամադրութիւններ հրահրելով որևէ ժողո-
վրդի բոլոր խաւերում: Պատերազմ պիտի զբոյժէ
նոյնիսկ խորհրդային իշխանութեան մահացու թշնա-
քիներին՝ մոռանալու իրենց ատելութիւնը և անկա-
ցելու օրու այ իշխանութեանը, որպէսզի վերջինս կարող-
անայ պաշտպանել մոտաւորակ մտրոնութիւնը կամ
զպակ այրատաքին թշնամիներ շարժառիթակարական ա-
խորժակները: Լեհական պատերազմը պերճաբոս ապա-
ցոյցներ է տալիս այս տեսակէտից:

Սրա վրա պէտք է աւելացնենք նաև, որ եթէ Ս.
Հ. Միութեան ղեմ ձեռնարկած որևէ պատերազմ
յաղթանակով վերջանայ՝ նա անհրաժեշտաբար պէտք
է հրահրէ Փաշխտական տրամադրութիւնն բոլոր եր-
կրներում և ամենուրեք ուժեղացնէ՝ քաղաքական և
ընկերային ղեկավորներ. իսկ եթէ պատերազմը ձախտ-
ի՞նք՝ բուլղարիկան ղեկավորներ նոր թափ պէտք է առնէ՝
Ս. Հ. Միութեան սահմաններում ապրող ժողովուրդը-
նեքին գազանաբար տրորելու և իր դաւերով ու լրբու-
թիւններով համաշխարհային պրոլետարիատը պա-
ռակտելու համար:

Այս ընդհանուր կառադատութիւնները ինքնին բա-
ւական են, որպէսզի Ն. Յ. Դաշնակցութիւնը, նաև
անկախ իր սկզբունքային վերաբերմունքից ղեկի պա-
տերազմի աղէտը, վճարականապէս ղեմ լինի Ս. Հ.
Միութեան ղեմ ներթուղ ամէն մի պատերազմի: Բայց
մեր կուսակցութիւնը մասնակի պատճառներ ևս ունի
թշնամաբար վերաբերելու Ս. Հ. Միութեան սահման-
ների վրա որևէ պատերազմ առաջացնելու ծրագրերնե-
րին:

Այս ամանակի պատճառը պայմանաւորում է այն
փոխադարձութեամբ, որ դուրսիւնն ունի թիւր-

ջիայի և Ս. Հ. Միութեան միջև: Մեր խորին համոզ-
մունքով, ամէն մի արտաքին պատերազմ պէտք է
ծանր դժարութեան մասին խորհրդային իշխանու-
թիւնը և առիթ հանդիսանայ թիւրքայի համար յար-
ձակելու Անդրկովկասի վրա:

Ստորև կը տեսնենք, թէ ինչ հիմունքներ կան
այսպէս մտածելու: Առաջմ՝ կը ցանկայինք մի երկու-
խօսք սակ թէ ինչ կատաստորֆի առաջ կը դնէ այս
յարձակումը անդրկովկասեան ժողովուրդներին ևս
մասնաւորապէս հայ ժողովրդին:

Անդրկովկասեան ժողովուրդների այսօրայ ան-
կազմակերպ վիճակում — և խորհրդային իշխանու-
թիւնը, «բաժանեա՛ր» զի տիրուածնէրով, շնունւմ է յարատև դարձնել լայն վիճակ՝ անդրկով-
կասեան ժողովուրդների միջև հակառակութիւն և ան-
վստահութիւն հրահրելով — թիւրքական յարձակումը
պղպային ներհակութիւնների և փոխադարձ անհա-
կացողութիւնների փոթորիկ պէտք է առաջացնէ, ինչ-
պէս այդ եղաւ 1918-ին:

Ազրբէջանեան թաթար ժողովուրդը, որ կրօնական
և ցեղային կապեր ունի թիւրքերի հետ՝ որանց ներ-
խուժումը Անդրկովկաս փրկութիւն պէտք է նկատէ իր
համար և իսկայն թշնամական դիրք բռնի իր այն հա-
րեան ժողովուրդների ղեմ, որոնք կընդդիմանան այդ
ներխուժմանը: Ճիշտ է, ազրբէջանցիք 1918-ին տեսան,
որ թիւրքական բռնակալութիւնը ոչնչով լաւ չէ ցա-
րական բռնութիւնից և մինչև իսկ գերազանցում է
նրան, սակայն, բուլղարիկներ իրենց պաշտնութիւննե-
րով, տնտեսական ճնշումներով և կրօնական հալա-
ծանքներով այնքան են զգեցրել ազրբէջանցիներին,
որ նրանք այսօր պատրաստ են սատանայի գիրկն իսկ
ընկնել բուլղարիկեան ճիրաններէց ապատելու համար:

Անկապում, այլ կը լինի վրացիների վերաբեր-
մունքը ղեկի թիւրքական ներխուժումը Անդրկովկաս:
Յեղային ոչ մի կապ չունենալով թիւրքերի հետ և քա-
ղաքական, ընկերային ու մշակութային լմբոնումնե-
րով միանգամայն տարբերելով նրանցից՝ վրացիք
վճռականապէս հակառակ կը լինեն թիւրքերի ներ-
խուժմանը, մանաւանդ, որ այդ ներխուժումը պիտի
անդամատի Վրաստանը՝ անվատելով նրանից Բաթու-
մի շրջանը և ուրիշ հողամասեր: Սակայն, այս այսպէս
լինելով հանդերձ՝ վրացիները՝ անգոր սեփական մի-
ջոցներով դիմադրելու թիւրքերին՝ ճարահատեալ պի-
տի համակերպելն նրանց ներխուժմանը և, առանձնա-
նալով անդրկովկասեան միւս ժողովուրդներէց, պիտի
կծկեն իրենց ազգային պատեանում, ջանալով փրկել
թիւրքական աւերից այն, ինչ որ հնարաւոր է: Կար-
ծում ենք, որ այս համակերպումը թիւրքական նոր
ներխուժման պարագային աւելի՛ դիրքին պէտք է լինի
վրացիների համար, քան եղաւ 1918-ին. որովհետև
բուլղարիկ բռնութիւնները Վրաստանում, և մանա-
ւանդ, վերջինս ապստամբութեան ժամանակ կատարւած
խժգոտութիւնները, վրացիներ որոշ շրջաններում ևս
այն մտայնութիւնն է առաջացրել, թէ ոչ մի վիճակ
Վրաստանի համար աւելի վատ չի լինի, քան թէ այն
վիճակը, որին դատապարտել են նրան բուլղարիկները:
Այս մտայնութիւնից են սնոււմ թիւրքայի օժանդա-
կութեամբ բուլղարիկներէց ապատելու ձգտումները, որ

նկատում են վրացական որոշ շրջանների մէջ:

Գալով հայ ժողովրդին՝ ալքամոր կասեմք, որ թիւրքական ներխուժումին Անդրկովկաս այլ բան չէ նշանակում նրա համար, բայց եթէ զանգաւածային բնաջնջում: Վերջին պատերազմի փորձից յետոյ այլ կարծիք չի կարող լինել այս մասին: Այդ պատերազմում, թիւրքեան վայրագութեանը կոտորել և փշացրել մօտ մի միլիոն հայ, իսկ մի միլիոնի շատ էլ տարազրեց երկրից՝ անսպասի փերածելով ամբողջ թիւրքահայաստանը և Ռուսահայաստանի մի մասը: Այլ փճակ չէ սպասում հայ ժողովրդին և թիւրքերուհարձերդային պատերազմի պարագային, եթէ աչքի առաջ ունենանք այն ծայրահեղ շովինիզմը, որ համատարած թագաւորում է զբնմայական վարչաձևի տակ և որի շուշափելի արտայայտութիւնն են հանդիսանում զրգերի և շերտերի կոտորածը, լազերի հայածանքը և հայկական մնացորդների վտարումը Անատոլիայի խորքերից: Ազգային փոքրամասնութիւնները թիւրքացնելու կամ ոչնչացնելու քաղաքականութեան մէջ զբնմայական դիկտատուրան գերազանցում է թէ՛ Երիտասարդ թիւրքերի և թէ՛ սուլթան Աբդուլ Համիդի օտարահալած քաղաքականութեանը:

Թիւրքերի ներխուժումին Անդրկովկաս անխուսափելի կոտորած է սպանում հայ ժողովրդին ոչ միայն թիւրքեայի յողթութեան, այլ և պարտութեան պարագային: Որովհետև Մոսկուայի և Կարսի զաւնագրերով (1921թ. մարտ և 1922թ. հոկտեմբեր) բուլնիկները, թիւրքեան իրենց արեւելեան քաղաքականութեան համար սիրաշահելու նպատակով, զիջել են նրան նահակին Ռուսահայաստանի ամբողջութիւնները — Կարս և Արդահան — ու այսպիսով մեր երկրի դռները բաց ձգել թշնամու առաջ: Պատերազմի պարագային, մինչև խորհրդային իշխանութիւնը զօրքեր կենտրոնացնի թիւրքեայի գէմ, վերջինս, մի քանի ժամում կը դարձի Երևանն ու Ալեքսանդրապոլը և առաջին իսկ օրերին իր տիրապետութեան տակ կանոնի ամբողջ զաշտային Հայաստանը՝ հրի և սրի ճարակ դարձնելով զաշտաքանակ հայ ժողովուրդը:

Անդրկովկասեան երեք զլխաւոր ժողովուրդները — ազրբէջանցիների, վրացիների և հայերի — այս տարբեր վերաբերմունքը դէպի թիւրքեան և նրա հետ կապուած երկիրդները զլխաւոր պատճառն են հանդիսանում այդ ժողովուրդների այսօրու իրարանհակացողութեան: որ վաղը, հէնց որ թիւրքեան ոտքը դրեց Անդրկովկաս, անխուսափելիօրէն պէտք է դառնայ փոխադարձ ներհակութիւն և թշնամութիւն՝ ազգային կոիւնների և դաւերի թատերաբեմ դարձնելով այդ երկիրը:

Մասնաւորապէս սրանով է բացատրւում, որ երեք տարի առաջ վրացիների, ազրբէջանցիների և լեռնականների մասնակցութեամբ կազմուած «Կովկասեան Անկախութեան Կոմիտէ» և նոյն շրջանների կողմից հաստատուող «Պրոմեթէյ» ամսագիրը, որոնք կովկասեան ժողովուրդների անկախութեան նշանաբանի տակ են գործում՝ միանգամայն բացասական վերաբերմունք են գտնում ոչ միայն Հ. Յ. Իսախանցիութեան այլ և հայ քաղաքական բոլոր հոսանքների կողմից: Հայ ժողովուրդը գիտում է այդ ձեռնարկները իբրև

թիւրքական և իմպերիալիստական մեքենայութիւններ, և այս գնահատութիւնը հասկանալու համար, բաւական է նկատի առնել, որ «Կովկասեան Անկախութեան Կոմիտէ» կազմուած Գոյում և թիւրքեայի բարեհաս թոյլաութեամբ, իսկ «Պրոմեթէյ» ամսագիրը նրկական օժանդակութիւն է ստանում այնպիսի քաղաքական շրջաններից, որոնք թիւրքերուհարձային պատերազմը յաւազոյն զէնքերից մէկն են համարում Ռ. Հ. Միութեան հետ իրենց հաշիւները կարգադրելու համար:

Տեսնենք այժմ, թէ ինչ հասանակնութիւն է ներկայացնում այս պատերազմը:—

Բուլնիկեան դիկտատուրայի և զբնմայական դիկտատուրայի դրացիութիւնն արտաքուստ բարեկամական է, և երկուստեք շարունակ խաղաղասիրական հաստատացումներ են լուում: Սակայն, այս «բարեկամութիւն» ու «խաղաղասիրութիւն» չեն խնդաքում, որ թիւրքեայից և Ռ. Հ. Միութեան յարաբերութիւնները յաճախ լարեն, և երկու կողմերի զինուորական սպայակոյտերը տեղային գործողութիւնների դիմեն «անակնկալի» շղարու համար:

Սրա պատճառները մի քանի տեսակի են.

Առաջին՝ խորհրդային իշխանութեան հանրածառնօթ դաւադրական քաղաքականութիւնը բոլոր հարեան և մինչև իսկ ոչ հարեան երկրներում: Արտաքուստ զբնմայական դիկտատուրայի բարեկամ ձևանալով՝ այդ իշխանութիւնը իր գործակալներով շարունակ աշխատում է նրա ոտքի տակ փորել խորհրդային կարգերի ճանադարձ թիւրքեայում հարթելու համար: Իսկ որովհետև Մուստաֆա Գեմալը օրինական ձևերի շատ չէ կառուում ձեռք ձգած դաւադրներին դաժանօրէն պատժելու համար՝ ուստի երկու դիկտատուրաների սիրալիը ժպիտները յաճախ փոխարինում են ստամոքիների կրճատողով:

Երկրորդ՝ զբնմայական վարիչները նախորդ ուժի մի ներկայացուցիչներին — Երիտասարդ թիւրքերին ամէն կարգի հալածանքների եթթարկելով՝ հանդերձ՝ ամբողջովին իւրացրել են նրանց պանթուրանական ծրագրերը: Ըստ այս ծրագրերի՝ թիւրքեան պէտք է միացնի իրեն Ռ. Հ. Միութեան սահմաններում գրտնող բոլոր թիւրքեթաթար ցեղերը — ազրբէջանցիներ, կովկասեան լեռնականներ, թիւրքեստացիներ են. և նրանց հետ միասին մի ընդարձակ թիւրքեթաթարական կայսրութիւն կազմի: Այս ծրագիրը յարողացնելու համար, նա հեղեղում է Ազրբէջանը, Դաղաստանը, թիւրքեստանը իր էմիսարներով և աշխատում ոչնչացնել այն ժողովուրդներին — հայեր, ջրգեր ևն — որոնք, ընկած լինելով թիւրքեթաթար ցեղերի միջև, աղքեղ են հանդիսանում նրանց միացման: Որոհրդային իշխանութիւնը, որ շատ լաւ տեղեակ է այս ծրագրերին և նրանց մէջ Ռ. Հ. Միութեան քայքայելու միտումն է տեսնում, բնականաբար հաշտ աչքով չէ նայում այս մեքենայութիւններին: Մասնով ծլէտք է բացատրել խորհրդային և զբնմայական թիւրքերի պայքարները, որոնք երբեմն շատ սուր հանգամանակ են առնում՝ մերկացնելով թիւրքեթաթարային գաղտնածածուկ հակամարտութիւնները:

Երրորդ՝ Ռ. Հ. Միութեան գէմ թշնամաբեմ տրտ

մաղբուհի պետութիւնները, նկատելով թիւրքեան լաւագոյն գործիքներէց մէկը Ս. Հ. Միութիւնը հարաւ-
ճելու համար՝ յաճախ գրգռուած են նրա իմպերիալիս-
տական սխորտակները կողմնակա սիրահարութեան հե-
ռանկարով և թիւրքեան խորհրդային պատերազմի տրա-
մաղբուհիները հրահրում: Այս քաղաքականութիւ-
նը, որով մինչև այժմ աչքի էին ընկնում առանձնա-
պէս Մուսուլինի և Պիլսուդանի կառավարութիւննե-
րը, անկասկած իր դժբախտ դրոշմները կր տար,
եթէ Ս. Հ. Միութեան մէջ ներքին խրատումներ ծա-
ղէին, կամ Ս. Հ. Միութիւնը ո՛րևէ երկրի հետ պա-
տերազմի բռնէր և կամ, ընդհանրապէս, թիւրքեայի
համար նպատակարար պայմաններ ստեղծէին Ս. Հ.
Միութեան վրա յարձակելու համար:

Զարբոյժ՝ Ս. Հ. Միութեան և թիւրքեայի սահ-
մանազրիխի դանուղ փոքրիկ ժողովուրդները, որոնց
պատուութիւնն ու անկախութիւնը նրանք է բոլշևիկե-
ան ու քեմալական կրօնակների տակ, պատրաստի
միջառնալը են հանդիսանում ամէն տեսակի պրոպագ-
անդիստիկ և սաղբուհիներ համար, որոնք անկարելի
պէտք է դարձնեն ո՛րևէ տակաւին խաղաղութիւն Մեր-
ձաւոր Արեւելքի ալք մասում:

Ս. Հ. Միութեան սահմաններում այլ ժողովուրդ-
ներն են՝ լեռնականները, ազրբէյշանցիները, վրացիներ-
ը և հայերը, որոնք կորցրել են իրենց անկախութիւնը
բոլշևիկեան ուժերի նշանակ տակ: Իսկ թիւրքեայում
այլ ժողովուրդներն են հայերը և քրդերը: Առաջիննե-
րը, վտարւած իրենց հայրենի երկրից, որը այժմ ա-
մալացած և բառի իսկական իմաստով վարքի գազան-
ների որջ է դարձած, անհանդիստ յանուած են իրենց
մարած օջաղների շուրջը, իսկ քրդերը, թիւրքական
կոտորածների սարսափից մղուած, 1925-ից ի վեր,
արևելահեղ պաշարի մէջ են մտել՝ իրենց ինչքը,
կեանքը և պատիւը պաշտպանելու համար:

Հասկանալի չէ՞ արդեօք, որ այս ժողովուրդները՝
անկարող սեփական միջոցներով թթվափելու իրենց
վրէժի ծանրագած ստելի լուծը՝ ցանկանան վերստա-
նալ իրենց պարտութիւնը օտարների միջամտութեամբ
և մինչև իսկ արտաքին պատերազմի միջոցով, որքան
էլ աղէտալի լինեն սրա հետևանքները...

Այս բոլոր պատճառները, իրար լրացնելով և իրա-
րով պայմանաւորելով՝ ստեղծում են Ս. Հ. Միու-
թեան հարաւային սահմանների վրա մի մշտական
լարւած կացութիւն, որ առաջին իսկ պատե՛ծ առթիւ
պէտք է պայթի, ահաւոր կատաղիկների մի շրջան
բռնալով ոչ միայն Մերձարոր Արեւելքի այլ և Եւրո-
պայի համար, եթէ մանաւանդ պատերազմը վերջա-
նայ թիւրքեայի պարտութեամբ և սրա նոր անկամա-
հատման հեռանկարը մի անգամ ևս ցցել իմպերիալիս-
տական սխորտակների տապ:

Անշուշտ, Ս. Հ. Միութեան միւս սահմանների վրա
ևս պատերազմի վտանգներ կան, որոնց մասին կը խո-
սեն այլ սահմանների վրա գործող և անտեղի իրա-
դարձութիւնների լաւատեսեակ կուսակցութիւնները՝
մատնանելով այն գործնական միջոցները, որ պէտք
է ձեռք ստնեն Ինտերնասիոնալը և համապատասխան
կուսակցութիւնները: Մենք առանձնապէս ծանրացանք
թիւրքեան խորհրդային պատերազմի վտանգի վրա, որով-

հետև այստեղ աւելի՛ գործնականօրէն, քան այլուրեք
կարող ենք մեր ուժերը տրամադրել՝ իրականացնելու
համար այն գործնական միջոցները, որ Ինտերնասիո-
նալը պէտք է ձեռք ստնէ այլ՝ վտանգը կանխելու հա-
մար:

Մեր կարծիքով այս միջոցներից ամենազլխաւորը
և ամենարժանատիւնը այն է, որ Ս. Հ. Միութեան
և թիւրքեայի սահմանների վրա պարզ ազրբէյշանցի,
վրացի, հայ և քիւրդ ժողովուրդները, որոնք մի ժա-
մանակ անկախ պետական կեանք ունէին, վերստանան
իրենց կատարեալ անկախութիւնը: Այս ժողովուրդ-
ներն անկախաւարով՝ մի բնական բարիք կը կազմեն
Ս. Հ. Միութեան և թիւրքեայի միջև և ոչ միայն
նրանց ընդհարումն անհնարին կը դարձնեն այլ և զգա-
լի կերպով կը թուլացնեն այն իմպերիալիստական հա-
կամարտութիւններն ու դաւերը, որոնք մօտ 150 տա-
րուց ի վեր պատերազմական մղձաւանջի տակ են պա-
հուած Մերձարոր Արեւելքը և մասնաւորապէս Փոքր
Ասիան և Անդրկովկասը:

Ա. Ը. Ինտերնասիոնալը բոլոր ազգերի ինքնորոշ-
ման իրաւունքի պաշտպան կանգնելով՝ արդէն ըս-
կազմեց իրեն ընդունել է յիշեալ ժողովուրդների ան-
կախութեան պահանջը, իսկ նրանցից երկուսի — հա-
յերի և վրացիների պետական անկախութեան՝ մասին
յատուկ բանաձևեր ևս քննարկել է Համաբարբի և Մար-
սելի Համաշտմաններում: Այժմ նա պէտք է դորձնա-
կանապէս հետապնդի այլ պահանջի իրականացումը՝
իբրև զլխաւոր երաշխիքներից մէկը ընդդէմ թիւրքե-
ան խորհրդային պատերազմի վտանգի և յանուն Մերձա-
ւոր Արեւելքի խաղաղութեան:

Սրա համար, Ինտերնասիոնալը երեք կարգի աշ-
խատանք պէտք է կատարէ.

Առաջին՝ նա պէտք է յանձնարարէ իր կուսակցու-
թիւններին ազդելու համապատասխան կառավարու-
թիւնների վրա, որ սրանք, Ս. Հ. Միութեան հետ յա-
րաբերութիւններ հաստատելու կամ մշակելիս, առաջ
քաշեն և պաշտպանեն Անդրկովկասեան ժողովուրդների
անկախութեան պահանջը: Ժամանակակից կառավա-
րութիւնները այդ յարաբերութիւնների խնդրում զե-
կալարւում են միմիայն կապիտալիզմի շահերով, ո-
րոնց հանդէպ պատերազմի և խաղաղութեան խնդր-
ները նկատառութեան չեն դառնու: Ընկերավարական կու-
սակցութիւնները, որոնք հետամուտ են Ս. Հ. Միու-
թեան հետ նորմալ յարաբերութիւններ հաստատելու
առաջին հերթին խաղաղութիւնը ապահովելու մտահո-
գութեամբ, չպէտք է մոռանան, որ պետրոկովկասեան
ժողովուրդների շահերի և իրաւունքների անտեսումը
վտանգ է հանդիսանում խաղաղութեան համար, ինչ-
պէս տեսանք վերև:

Երկրորդ՝ Ինտերնասիոնալը պէտք է յանձնարարէ
ընկերավարական կուսակցութիւններին ազդելու կառա-
վարութիւնների վրա, որ նրանք, թիւրքեան Ազգերի
Լիգայի մէջ ընդունելու պարագային, պահանջ դնեն,
որ նա դուրս հանէ իր զորքերը թիւրքահայաստանից
և Քիւրդիստանից՝ հնարաւորութիւն տալով այս եր-
կրներին իրականացնելու իրենց ինքնորոշման իրա-
ւունքը: Ազգերի Լիգան արդէն երեք անգամ 1920-ին,
1921ին և 1922ին բանաձևեր է քննարկել թիւրքահա-

յատասնի անկախութիւնը պահանջելով. մնում է միայն հետապնդել այս բանաձևերի իրազործումը և դրա հետ միասին պահանջել, որ ջերուք ժողովուրդի ինքնորշման իրաւունքը ևս ճանաչւի, որպէսզի արիւնհեղութիւնները դադարեն Քրդաստանում:

Ինտերնասիոնալը կարող է իւրացնել այս քաղաքականութիւնը, նկատի ունենալով մասնաւոր, որ Քիւրքիան, Հարաւստանի և Քրդաստանից հեռանալի յետոյ ևս ի տիրապետութեան տակ այնքան հող կունենայ, որ կարող է առատօրէն կերակրել թիւրք ժողովուրդը, անգամ եթէ սրա թիւը վեց անգամ աւելի լինի, քան թէ է ներկայիս:

Երրորդ — և սա ամենակարևորն է — Ինտերնասիոնալը պէտք է իր գործնական խնդիրներից մէկը դարձնէ իրարհակացողութեան բերել Ս. Հ. Միութեան և Քիւրքիայի սահմաններում ապրող ժողովուրդներին, որպէսզի նրանք ոչ թէ արտաքին իմպերիալիստական ուժերի մէջ որոնեն իրենց փրկութիւնը, այլ փոխադարձ աշակցութեան և գործակցութեան մէջ:

Այս իրարհակացողութեան պակասն է պատճառը, որ անդրկովկասեան ժողովուրդների մէջ ստալը են եկել Քիւրքական և ուսուսակայ օրինաւորներ կասկածներ — կասկածներ, որ լայնօրէն շահագործում են թէ՛ բոլշևիկները, թէ՛ քեմալիստները և թէ՛ նրանց ետեւը կանգնած ամէն կարգի իմպերիալիստներ՝ որպէսզի յիշեալ ժողովուրդներին շեղեն իրենց ազատագրական պայքարի շիտակ ուղիից, նրանց յարաբերութիւնները պղտորած պահեն և պղտոր ջրերում իրենց ձուլը որսան:

Իմպերիալիստական այս մաքրավելիզմը միանգամայն ապարդիւն կանցնի և թիւրքիստորդային պատերազմի հաւանակութիւնը մեծապէս կը թուլանար, եթէ յիշեալ ժողովուրդները, սոգորած այն պիտակցութեամբ, որ իրենց ընդհանուր շահերը շատ աւելի իրական են և կենսական, քան արտաքին ուժերի պատիր խոստումները՝ միացեալ ճակատ կազմէին նրանց դէմ իրենց անկախութիւնն ու սոցատութիւնը պաշտպանելու համար:

Այս միացեալ ճակատն ստեղծելու գլխաւոր դժուարութիւնը կայանում է նրանում, որ անդրկովկասեան ժողովուրդները սահմանային կամ հողային վէճեր ունեն իրար հետ և չեն ուզում այդ վէճերը կարգադրել համաձայն ազգերի ինքնորշման իրաւունքների: Այս բոլոր ժողովուրդներն էլ ամուր կառուած են ազգերի ինքնորշման իրաւունքին՝ երբ խօսքը վերաբերում է իրենց երկրները բռնակրկեան կամ առհասարակ ուսական տիրապետութիւնից ազատելուն. բայց երբ հարց է դրուած, որ այդ սկզբունքի հիման վրա դժուեն անդրկովկասեան պետութիւններին ներքին սահմանները, որպէսզի ոչ մի ազգային հատած, առանց աշխարհագրական հարկադրանքի, դուրս չմտայ իր ազգային պետութեան սահմաններից՝ իսկոյն հանդէս են գալիս զանազան պատմական, անտեսական և մինչև իսկ

ոսպմական նկատումներ՝ սեփական պետութեան սահմանները հարեան պետութիւնների հաշիւն ընդարձակելու համար:

Սկզբունքի և գործի այս հակասութիւնը, որ անցեալում շատ է թունաւորել անդրկովկասեան երեք գլխաւոր ժողովուրդների յարաբերութիւնները՝ այսօր էլ նրանց տարաձայնութիւնների հիմնական պատճառն է հանդիսանում:

Կան և մի քանի ուրիշ պատճառներ, ինչպէս օրինակ, Անդրկովկասում հեգեմոնիա բանեցնելու ձգտումը, ազգային փոքրամասնութիւնների պահանջներն անտես առնելը ևն, որոնք զեր են կատարում այդ տարաձայնութիւնների մէջ. բայց մենք, շերտարացնելու համար, նրանց վրա կանշ չենք առնում:

Արդ, Ինտերնասիոնալի երրորդ գործնական խնդիրը պէտք է լինի վերացնել այս տարաձայնութիւնները՝ Քիւրքիայի և Ս. Հ. Միութեան սահմանների վրա ապրող ժողովուրդների դիմադրական ուժը իմպերիալիստական դաւերի դէմ մեծացնելու համար: Նա ոչ միայն պէտք է պարտադրի իրեն յարած կուսակցութիւններին, որոնք գործում են այդ ժողովուրդների մէջ, որ յիշեալ վէճերի կարգադրութեան ժամանակ ղեկավարեն համաձայն Ինտերնասիոնալի կողմից որոշուած ազգերի իրաւահաւասարութեան, ազգերի ինքնորշման և ազգային փոքրամասնութեան ընդդրունքների՝ այլ և պէտք է նախաձեռնողի և ղեկավարի դեր ստանձնի այս գործում, եթէ ցանկանում է, որ նրանից շօշափելի արդիւնք ստացի:

Ա. Բ. Ինտերնասիոնալը դեռ ևս չէ հասել այն քաղաքական գորութեանը, որ կարողանայ մի հրամանով չիք դարձնել պատերազմ կոչած բարբարոսութիւնը: Դրա համար էլ, նա իմաստութեամբ լծել է խաղաղութիւնը մասնակի միջոցներով ամբողջելու քրտնալան աշխատանքին:

Այս աշխատանքը ապարդիւն չէ անցել: Նրա անուղղակի արդիւնքը պէտք է համարել Լոկարնոյի համաձայնութիւնը, Կելլոզ-Բիրան պակոը և դինաթափութեան այն զեռ ևս տարած տրամադրութիւնները, որ ի յայտ են բերում բուրժուական կառավարութիւնները՝ Ինտերնասիոնալի խաղաղասիրական քաղաքականութեամբ ստեղծած հանրային կարծիքը շլացնելու համար:

Մենք վստահ ենք, որ այդ արդիւնքը նազ շօշափելի չի լինի Ս. Հ. Միութեան սահմաններից, և մասնաւորապէս, Քիւրքիայի և Ս. Հ. Միութեան սահմաններից պատերազմի վտանգը հեռացնելու գործում, եթէ Ինտերնասիոնալը գործնականօրէն աշխատէ վերացնելու մեր մտանաւշած պատմականները, որոնք ծնուող են տալիս այդ վտանգին:

Այս աշխատանքի մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը պատրաստ է ըստ ամենայնի գորավիզ կանգնելու Ինտերնասիոնալին:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

ՂԵՒՈՆԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

(Կ ո ս)

Գանձակը թէև Անդրկովկասի հայաշատ կենտրոնական քաղաքներից մէկն է, բայց, շնորհիւ ցարական կառավարութեան հայաշատ թաղաքականութեան, զուրկ է հզօր հայկական միջնակարգ վարժարանից: Այս պատճառով էլ, Գանձակի և իր գաւառի հայ մատաղ սերունդը իր կրթութիւնը ստացել է հայոց ծխական միդասեան և ապա ուսական քաղաքային, արհեստաւորական դպրոցներում և կամ գիմնազիայում:

Շատ քիչ թւով անհատներ ի միայն յալոզել է իրենց կրթութիւնը ստանալ Քիֆլիսի և Երևանի թեմական դպրոցում կամ էլ՝միսնիի հոգևոր ճեմարանում: Այս պատճառով էլ Գանձակը չի կարողացել տալ սպասուած չափով յայտնի մտաւորականներ ու քաղաքական և հանրային գործիչներ: Գանձակի շրջանը աւելի շուտ տւել է համեստ գործիչներ և քալ ուսմիկներ:

Հանգուցեալ ընկեր Ղևոնդ Մելքոնեանը, որ կուսակցական շրջանում և հայկական մամուլում յայտնի էր «Կոս» կեղծ անունով, Գանձակի գաւառի Բրաշուր դիւղիցն էր: Դեռ պատանեկան հասակում, երբ միասին սովորում էինք ՅՕական թուականներ Վերջերին Գանձակի ուսական քաղաքական դպրոցում, ընկ. Ղևոնդը և Վահան Մինախորեանը (այժմ էսէր) ամենքից աչքի ընկնող դէմքերն էին: Դեռ այդ հասակում, չնայած, շ. Յ. Գանձակցութեան մէջ արձանագրելու դժւարագոյն պայմաններին, կարողացել էին մտնել կուսակցական շաբէրը և ոչ-կուսակցական աշակերտներիցս ամսական 10ական կուպէկ էին հաւաքում գաղտնի, «յօգուտ տանկահայ եղբայրներին»: Յորդորում էին մեզ կարող Ուաշ. Արմախի, Բաֆֆիի, Միք. Նալբանդեանի, Գամառ-Բաթիսայի և Ա. Ահարոնեանի գրքերը:

Քաղաքային դպրոցը աւարտելուց յետոյ, ընկեր Ղևոնդը կարողացաւ շփոթական դպրոցի ուսուցչական վկայական ստանալ և պաշտօնավարել Գանձակի շրջանում, միևնոյն ժամանակը գործած մասնակցութիւն ունենալով կուսակցական կազմակերպչական աշխատանքներում:

Ռուսական առաջին մեծ յեղափոխութեան շրջանին — 1905—907 — ընկ. Ղևոնդը շ. Յ. Գանձակցութեան Ալլեքսանդրի (Գանձակ) Կենտրոնական Կոմիտէի անդամ էր և եւանդոսն պայքարողներից մէկը մեր հակաուսուրդ հայ մարքսիստների, էսէրների, հնչակեանների ու պահպանողականների դէմ:

Այդ կարճահասակ, թխաղէմ երիտասարդը, հրապարակային ժողովներում մեր հակաուսուրդ հետորդների դէմ խօսելիս կրակ ու բոց էր դառնում և մթնոլորտը երեկտրականացնում, ընդհանուր ոգևորութիւն

առաջ բերելով մեր և մեր համակիրների շարքերում: Ընկ. Ս. Զաւարեանի պէս, որքան տաքանում, այնքան աւելի ուժեղ էր հարևածում հակաուսուրդներին:

Միև կողմից թէ՛ խօսքով և թէ՛ մամուլի միջոցով ուժեղ պայքար էր մղում հայ կղերականների և հանրային ասպարէզում վխտացող պնակալէցների դէմ:

1906 թւի վերջերին Գանձակի մեր կուսակցական շարքերում առաջ եկաւ «Սարաքան» անունով մի խումբ, որ իրեն նպատակ էր դրել խարազանել և դուրս չպրտել մեր շարքերից անհարազատ տարրերին, որոնք իրենց հակադաշնակցական մտայնութեամբ և վարք ու բարքով արատաւորում էին մեր կուսակցութեան հմայքը: Այս խարազանական խմբի գլուխն էր կանգնած ընկ. Ղևոնդը, որ իր եղբոր՝ Սորէի (Սանիկ), Մանէլ Ենդիբարեանի (Կրօմէլ), Ղևոն Մանասեանի — (Քևս սիր) (երեքն էլ Գանձակի մեր աչքի ընկնող ընկերներից էին, որոնք զոհ գնացին թրջախտին) և մի քանի ուրիշ ընկերների հետ յալոզեցին մեր շարքերը գտել, բերեղացնել:

1907 թւի օգոստոսին, Գանձակում կուսակցների պողոտից (Չարլից) յետոյ, սկսեց սաստիկ հալածանք մեր յայտնի ընկերների դէմ, որոնց թւում նաև ընկեր Ղևոնդի դէմ, որ ստիպւած եղաւ անցնել Ալաշխա, իւրև աւագ ուսուցիչ, Սարգիս Պետրոսեան կեղծ անունով: Մտտ երկու տարի պաշտօնավարելուց և երեք տարի Քիֆլիսի, Գանձակի, Նովոշերկասկի և Պետրոզքաղէ բանտերում տառապելուց յետոյ, 1912ի զարնանը Պետրոզքաղում տեղի ունեցած Գանձակցութեան դատի ժամանակ ընկ. Ղևոնդն էլ 165 բանտարկեալների հետ դատուեց և անպարտ արձակեց: Պետրոզքաղից վերադարձաւ հայրենիք, որտեղից նոյն թւի աշնանը աւագ ուսուցչի պաշտօնով անցաւ Պարուկաստանի Ռաշու քաղաքը:

Ընկ. Ղևոնդը մէկն էր այն ընկերներից, որոնք սկզբունքով դէմ են կուսակցութիւնից արքուստի միջոց ստանալուն, որպէս կուսակցական գործիչ, և աշխատում են որևէ մասնաւոր պաշտօն յալոզեցնել, որպէս եկամուտի աղբիւր և ապա ազատ ժամերը նւիրել կուսակցական գործին:

Այս էր պատճառը, որ մեզ չյալոզեց ընկ. Ղևոնդին կուսակցական հաշուով պահել Գանձակի շրջանում, 907ի օգոստոսեան հալածանքներից յետոյ:

Իրեն յառուկ պատճառաբանութեամբ ընկ. Ղևոնդը չհամաձայնեց մասնակցել կամաւորական շարժմանը և 1913թ. սեպտեմբերին անցաւ Էնդելի (Պարուկաստան) հայոց դպրոցի աւագ ուսուցչի պաշտօնով, որտեղ մի քանի ամիս վերջը, 1915ին ձուկից թունաւորւելով, իր մահկանացուն կնքեց օտար հորիզոնի տակ:

ԲՆՆՕ

ԳԵՈՐԳ ՊԱՂՏՅՈՒՆ
(Մօրուք Վարժապետ)

Մօրուք Վարժապետ հոշոր են դիմքը Մուկտադիները, իր սև ու անբաժան մօրուքին ու իր վարժապետութեան համար:

Չեմ գիտեր որե՛ք մէկը որե՛ք տեղ խօսեցա՞ւ, գրե՞ց իր մասին: Յիշուցա՞ն իր գործն ալ, իր թափառումները, իր երազները, ու, աւա՞ղ, իր եղբերական, հերոսական զախճանը...

Իայց ես կուզեմ, որ հիմակ իօսուի ու գրւի իր մասին, յիշի ինքը՝ մեր անդրանիկներէն մէկը, ու անոնց կողքին, իր անունն ալ արձանագրուի մեր վերջին զոհերուն ցանկին մէջ, ու մանաւանդ, «Դրօշակ»-ին մէջ, զոր այնքա՞ն սիրեր է ու այնքա՞ն տարածեր...

Գէորդ Պաղտօսան — Մօրուք Վարժապետ:

Հաղպ գիտակցական կեանքի շրջանը թեկադիսած, կուզայ Մուկտա, մեր խաւար ու մէկուսացած աշխարհը ու կը սկսի գործի:

Ինչպէս բոլոր մեր մեծ ռահվիրաները, որոնք լոյս տւին, մոռալ աշխարհը լուսաւորեցին, Մօրուք Վարժապետը նախ ռուսոցիչ կըլլայ հոս մեր պապերու գաւազներուն ու բան չէին գիտեր և Ա. Գ. Գ. սորվեցին:

Ու դարձեալ, ինչպէս մեր հերոս Անդրանիկները, Մօրուք Վարժապետը գաղտնօրէն ու յարատեօրէն գէնքի անհրաժեշտութիւնը, լմբոսառութեան հուրը կը տարածէ չորս դին: Կը տարածէ ու որպէս օրինակ ինքը ձտտից գլուխ» կը դիմւի: Յեղափոխութիւնը վեր կը բռնէ հոս ու ամենուն որ տեսնել ու ըմբռնել գիտեն, զոհեւլ գիտեն, կը իօսուի ու կը կարգայ մշտապէս...

Ճր աշակերտներն են, որ կը պատմեն:

— «Իեռ նոր երիտասարդ էր երբ Մուկտա, մեր երկիրը եկաւ. մարտով միջնասակ էր, նհարակազմ: Երեսն վար իր մշտակայ ու կարճ մօրուքով, որ աւելի կը ցուցնէր, կը սիրցնէր գինըր:

Պարբերդ ծնած էր, Կիլիկիա, Սխի ապրած ու հոնկէ կուզար մեր կողմերը վարժապետութեան ընելու, միայն վարժապետութիւն... Ու մեր կողմերը ատկէ առաջ իրեն նման վարժապետ դեռ չէին ունեցած, չէին տեսած:

Ինչքան գուրգուրանք ու սէր կը տածէր իր աշակերտներուն, իր զգաւակներուն հանդէպ. ու ինչքան գուրգուրանքով ու ջանքով կը սորվեցնէր մեր պապերուն սուրբ գրքերը մեզի՞ պարտիկներու, որ նոր կը սորվէինք: առաջինները դիւլին մէջ:

Կը յիշեմ, նոյն տարին ինքը կը փոխէր, ուրիշ գիւղի մը վարժապետ կըլլար, ու մեզի համար կուզար ուրիշը, կրտսեր մը, մեզի պէս:

— «Ջաւազներ, ըսաւ, չկարծէք թէ ես կերթամ ու եկողը օտար է, մեզի չկրտսի սիրէ: Ան ալ մեզի համար պիտի աշխատի, մեզի պիտի սորվեցնէ ամէն բան: Յարգեցէ՛ք գինըր, ինչպէս գիս, ու աշխատեցէ՛ք, սորվեցէ՛ք, որպէսզի մարդ ըլլաք, մեծնաք ու ձեր ապրին ծառայէք...»:

Այսպէ՛ս էր մեր վարժապետը:

«Եր պայուսակներէն մէկուն մէջ, զոր սիրով այլ պատմել կը պահէր, երկու «ձալդէր» ունէր Մօրուք Վարժապետը. երկու նոր հրացան, որ մինչև այն ատեն

քիչ, շատ քիչ կը գտնէր մեր տեղերը: Ու այն տարին քիչ օր մը յանկարծ զարթիւնները եկան, որ խուզարկութիւն կատարեն չորս դին՝ շո՛ւտ, շո՛ւտ, տղաս, ըսաւ, տոնէք պայուսակը և պահէք, պահէ՛նք»:

«Իարձեալ ջարդի ու թալանի տարին էր, ու մեր հայրերը, մեր պապերը, բոլորը անուղղորդ մէջ, անքուն ու քաղաքատ կը սպասէին դահիճներուն, որ մօտակայ գաղաքէն պիտի դաշին, անթիւ ու արիւնարու պիտի գային, որ մեզի ալ ջարդէին, թաղէին, մեռցնէին... Ու այն ատեն երբ դիմադրութիւն կը փորձէինք (ատկէ առաջ փորձած չենք) Մօրուք Վարժապետը, որ ատկէ առաջ միայն վարժապետ էր, գէնքը մեռցին, «աշղրիա» նման, չեմ գիտեր ինչպէ՛ս դիրքէ դիրք կը փութար, կը վազէր, խանդավառ կերևար ու իրախոյս կուտար ամենուն:

Այսպէ՛ս էր Մօրուք Վարժապետը, որ դեռ շատ ու շատ բաներ կընէր:

Չանագան տուփերու մէջ թերթ կը ստանար, շատ «Դրօշակ»ներ: Կը ստանար նաև ծածկագիր նամակներ ու կը կարդար: Ու ինչպէ՛ս կը պատմէր մեր հայրերուն որ չէին գիտեր...»

... Ու կը տեսնեմ հիմա, կարծես, իր դէմքը ժպտայից՝ երբ տարագրութեան ընթացքին քիչերու հետ ինքն ալ ազատած եկաւ մեր աւազուտքի վրանաքաղաքը: Առաջին գործը՝ այցելեց մեր վրանները, իր աշակերտներուն սոսնները, իմացաւ, որ ամենք, ամենք՝ գինուր գացք էին, կուելու համար դարձեալ, ուրախութիւնն ու ժպտուր դէմքին՝ ըսաւ...

— Լաւ, լաւ, այդպէ՛ս ըլլալու է, այդպէ՛ս...

Ու չուշացաւ ինքն ալ, չմնաց հոն, մանուկներուն ու ծերերուն մօտ, գնաց գինուր եղաւ ու հայրենիքին կողմերը մեկնեցաւ:

... Հաճընի ինքնապաշտպանութեան կոնկերուն մէջ կուեր է հերոսարար, ու հոն ալ նահատակե՛...»

* * *

Նահատակ ու անմոռաց Վարժապետ,

Այս մեր լեռներուն ու ժայռերուն վրա, զոր մեր փախտական պապերը ընտրեցին իրենց նամուսին ու իրենց հպարտութեան համար, թու ցանած սերմերը, տե՛ս, ծրեր են, ծրեր են անթիւ ու ուռճացեր...

Գաղափարիդ, դաշնակցական գաղափարիդ ուխտի դացող ու պատրասունք ընող հետերդներդ հիմա շարաններ, շարաններ կը կարգեն հոն: Ու վաղը, ինչպէս երէկ, ինչպէս կոտորածի տարին քեզի հետ, ու մէկալ օրը, պատրաստ են նորէն կուր դալտ իջնելու, ջարդելու և զարնելու, ջո երազած Հայոց Աշխարհի համար...

Ահա թէ ինչ կուղէի աւետել քեզ, իբրև զերազոյն յարգանք, նահատակ Վարժապետ:

ՍՈՒԷՏԻԱՅԻ

ԳԵՈՐԳ ԵՌԵՂԱՅԻԱՆ

Գէորդ Եօթնդարյան, Հ.Յ.Դաշնակցութեան Ուրֆայի զաղաքային կոմիտէի գրեթէ մնայուն անդամ էր միևնոյն ատեն նահապետն էր: Դաշնակցական շրջանակի մէջ ձեռներէց էր և խոհեմ, ժողովրդական խաւերու մէջ յարգւած: Համիտ արհեստաւոր էր, պայտար: Որոս

հետ որ խօսակցութիւն ունենար, անպատճառ պէտք էր համոզել ի նպաստ իրեն (ազգային տեսակէտով):

Աւելի լաւ է յիշել գրեւազ մը: Իր եղբոր Մկրտիչի, Հալէպի գործնոցէն զէնքերու փոխադրութեան միջոցին մասնակցաւ քանի մը հայերու կողմէ (որոնք յետոյ ըսպանակցան Մկրտիչի ձեռքով): Խնդիրը մեծ համեմատութիւններ առաւ: Հալէպի կառավարութիւնը սկսաւ հետապնդել Մկրտիչը: Այդ օրերուն Գէորգն էր որ Հալէպ սճապարհից և ամիսներով, զիշերը ցորեկին խառնելով ապահովեց Մկրտիչի ազատութիւնը: Գէորգ միշտ փոթորկալի շրջան քը անցուց: Ուրֆայի մէջ Հ.Յ. Դաշնակցութեան սերմնացանը Գէորգն էր, առաջին օրերուն կազմակերպական աշխատանքի գործը մեծ եռանդով տանողներէն մէկը եղած է: 1908ի սահմանադրութենէն վերջ ասպարէզը բացեցաւ, ընդլայնեցաւ, բայց Գէորգ ամենախոնհմ շարժողն էր և միշտ կը յիշէր Ժողովրդական արածը «ըռունը յիշէ, փէտը քովը դիր»: Մինչև վերջ չհաւատաց նեղ քուրքին կեղծ խօսքերուն:

Ընդհանուր պատերազմի նախօրեակին, յաճախ լըսած եմ իր մէկ խօսքը. — «Կորսուցանք, բայց պէտք է ձրի

լմեննել»: Գէորգ դպրոցական մը չէր, կրթւած մարդու էր վէպերով և անձնական փորձառութեամբ:

1915ի ընդհանուր ձերբակալութեան օրերուն բունեցաւ և քսանէ աւելի քաղաքի երեւելիներու հետ աքսորեցաւ Ռազգա, Ուրֆայէն, ԱՊ: քիլովէթը հետու: Երեք ամիսի չափ հոն մնալէն վերջ, վերադարձուցին Ուրֆա, բանտին մէջ երեք չորս շաբաթ պահեցին: Արդիւրած էր տեսնել ունէ մէկին հետ:

Այս բանասերութեան միջոցին ծեծ, շարշարանք և ամէն տեսակ խժժուէթիւններ պակաս չէին: Օր մըն ալ լսեցինք թէ. բանտարկեալները նորէն աքսորուած են:

Այդ աքսորը վերջնական եղաւ: Մէկ գիշերուայ մէջ Ուրֆայի արւարձաններէն 8-10 քիլովէթը հետու, դարաքէօփրիի մէջ վայրենաբար խողխողած էին բոլորը: Գիշերան խաւարին մէջ, աստղերը միայն տեսան անոնց սպանդը:

Գէորգը դնաց աչքերը բաց, առանց տեսնելու իր պատրաստած սերունդը որ քաջաբար մեռաւ, հաւատարիմ իր աւանդած սկզբունքներուն:

Գ. ՀԻՍԱԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԳՈՒԵԿՏԻՎԱՑՈՒՄ»Ը ԱՔՍՈՐԱՎԱՑՔԻՆ ՄԷՉ

(Չայն մը Սիբիրէն)

... Բապաթ, 20 փետր.

... Այնտեղ որտեղ ես եմ աքսորուած, մենակ չեմ. կան մի 30-35 հայեր, 45-50 լրացիներ, ինչպէս և հրեաներ: Սրանք աքսորուած են քաղաքական պատճառներով, իսկ քրէական յանցատուները և կրօնականները շատ աւելի են, հազարներ:

Սկզբում հաց և ուրիշ անոթեղէններ կարելի էր ձեռք բերել բնակիչներից. յետոյ կարգադրեց ստանալ պետական սպառնողական խանութից: Աստիճանաբար դարձրեցին խանութից ապրանք տար մեղ. և այժմ էլ հաճարի սև ալիւրն անգամ չի տրուում: Գիւղացիք սակաւահող լինելով, նրանք ևս առանց խանութի ալիւրի չեն կարող ապրել: Այնպէս որ բնիկներին ևս ալիւրը և ուրիշ մթերքները չափով են բաց թողնում: Բացի այդ, վերջերս սկսել են համայնացիներ ամէն բան: Մի քանի տուն աղքատներ բացառութիւն համարելով, մնացածից հաւաքեցին պաշար, միս, ձուկ, իւղ, կայն: Սպառողական խանութներին բռնի անդամադրում են բնիկներին: Միջակները բաժին են վճարում 100 ո. հարուստները 250, իսկ աղքատները մօտ 75 ո.: Եթէ չանդամադրւին, խանութը ապրանք չի տար և խեղճերը կը մնան

մերկ և քաղցած: Մեծ մասով ձկնորսներ են և տեղացիներու լըռու չունի ապրանքը ուրիշ տեղ ծախելու: Պարտաւոր է յանձնել խանութն մեռած գնում և փոխարէնը առանալ թղթադրում: Կանչում են գիւղական խորհուրդ և գանապան անուանելով դրամը ստանում և մի ստացական են տալիս ձեռքը: Այնպէս որ նորից գիւղացի մնում է գատարկածուն: Նաև պարտադրում են որոշ քանակութեամբ ձուկ որսալ և տանը երեք փիթից աւելի չպահել, բոլորը խանութ յանձնել: Նոյն պայմանը մի համար: Խուզարկութիւնների Ժամանակ մի կերակուրի միս անգամ չի թողնում և անվճար տանում են: Անասունները մորթելու կամ ծախելու իրաւունք չունին. միայն պէտք է պահեն և կերակրեն: Երբ պետութիւնը պէտք ունենայ կը հաւաքէ, խոստանալով որոշ վճար տալ:

Ահա այսպէս կտրուել ենք մթերքից: Խանութը ոչինչ բաց չէ թողնում բացի «պուտրից», օտը ջրոնից, առամի փոշուց որոնք մեզ բոլորովին պէտք չեն: Գնում ենք ամիսը միայն 5 Փոնտ նաթ և 4 տուփ լուցիկ: Տեղացիների միջոցաւ գնելու դէպքում գիւղացուն զրկում են անդամ լինելուց: Նոյն իսկ խօսում են թէ տանն եղած կաթից միջ տայ աքսորականներին. ձուկ միս տըւողներին տուգանում են: Երեկ որոշել են սովամահութեան ենթարկել մեզ: Կենդանուց շատ հետո ենք և լիաբոր պետական մարմինը անուշադէր է թողնում բողբոները, իսկ Չեկայի լիազօրը պատասխանում է. «Այդ իմ

գործը չէ, սպառողական խանութների վարչութեան գործն է»:

Մեզ ամսական նպաստ են տալի վեց բուրի 25 կոպ. այն էլ 2-3 ամիսը մի անգամ: Տարեկան տաք հագուստի համար տաս բուրի պէտք է տան, բայց ոչ անցեալ տարի տեցինք, և ոչ էլ այս տարի:

Քէ մեր բանտարկութեան պատճառը ինչ է, - գայլի և գառան պատմութիւն . . .

Այստեղ և աւելի հեռուները, Ռուսաստանի գանազան նահանգներից գիշեր ցերեկ մեծ թիւով ժողովուրդ է գաղթում, թողնելով գիւղում իր սեռեսուրբները: Ո՛վ կարող է, վերցնում է ընտանիքը, հնարաւորութեան չափ ստեղծելու պաշար, ձի է առնում և փախում առանց յետ նայելու: Մեր լրագիրն ու լրագրիչները այդ գաղթականներն են, որ պատմում են թէ ինչ սարսափելի տանջանքներ են տալի ժողովուրդին: Աւելորդ է խօսիլ կենսիչի և գոյքի սպահովութեան մասին:

Այսպէս, ընկեր, հայրենիքից հեռացած, այս լայնատարած անասուններում, փայտաչէն տնակներում մեր գոյութիւնը քարչ ենք տալի, հաւատարմով որ տեւական խաւար չկայ կենսութեամբ, խաւարին յաջորդում է ալան, վարվում կենսատու արևը, ճառագայթները ցրացնելով շատ հեռուներ մութ անկիւններ, ծմակներ, ներքնալարկեր, և լուսաւորելով մեր գեղեցիկ հայրենիքի ճանապարհը . . .

ԱՄՍՈՐԱԿԱՆ

ՀՐԱՌՆԱԹԻՆ ՎԻՃԱԿ

. . . քաղաք, 13 մարտ

Դժբախտաբար ինձ վիճակեց շատ ծանր լուրեր հաղորդել Լեոնահայաստանի գրութիւնից, բոլշևիկեան իշխանութեան թունութիւններից և ժողովրդական շարժումներից:

Փետր. 26-ին Ալիանյուսեցի տարադիրները մեծ խմբով (60 հոգով) անցել էին սովետական փոք. պատուէլ են ամբողջ Հաքեարի և Բարգիշապի շրջանները, փետր. 27-ի գիշերը, երբ գիշերում են Ղարաթաթալու գիւղում, պահակների վրա են յարձակում կոմունիստները: Կոմունիստներից մէկին սպանում, միւսին կենդանի են բռնում, խօսեցնում են, տեղեկութիւններ են հարցնում, չի պատասխանում. միայն ստում է, որ իր անունը չէ կոպիտ և մէկ էլ այն թէ ներսերում կուի է, մտացուներ են հաւաքում: Իրօք որ մինչև փետրուար 28-ը ամբողջ օրը վազողները արջաւ, գոմէշ և ոչխար էին տեղափոխում դէպի Բազու: Սակայն, 27-ին այս կողմից Շահականները մի խումբ թուրք տարագրիչների հետ Պուզափերիի ցածից անցնում են միւս փոք. բաւականին վնաս են հասցնում խորհրդայիններին, 12 միւլիցիոներների սպանում են, մէկ նաչալիի՝ Աբաս Ալի անունով և վեց գինւոր: Ահապին աւար են բերել: Վերադառնալուան քանդել են երկաթուղու գծերը, մեծ տարածութեան վրա:

Մի փախտականի ասելով, Հանդի սարերում ապաստանել են 60 հայեր: Մարտ 9-ին, մի քանի տասնակ կոմունիստները շրջապատել են նրանց՝ կենդանի բռնելու նպատակով. սակայն, նրանք քաջաբար կուռել

և 13 հոգի սպանել են հակառակորդներից, իսկ իրանք մէկ վիրատու են տեւել:

Մատանի և Եղուարդի շրջաններում 300 հոգի են ձերբակալւած, դիւղերում էլ եզ, կով, ոչխար կամ այլ մսացու շմաց, բոլոր կամ մորթում են կամ բաժանում չքաւորներին, որպէսզի կտտալարութիւնը չկէ: Մարտ 9-ի գիշերը 130 հոգի փախտական անցան: Հայեր այնքան չեն անցնում, որովհետև անծանօթ են ջրին ու ճանապարհին:

Բազուի ձերբակալւածները տանում են Շուշի, ուր բանտերը լցել են: Քաղաքում շինութիւններ են պարպում անտարակալներին տեղափոխելու նպատակով:

Տեղական իշխանութիւնները կազմել են կենտրոնական սահեատ, որտեղ հաւաքւած է ամբողջ մէկ գաւառի և յիւրը, կաթը, հացը և այլն: Ապա օրերով հերթի են կանգնում, որպէսզի հաց, ալիւր կամ կաթ ստանան: Հակասական լուրեր են հասնում ամէն օր:

Կուիներ են ծաղել Ասիեարանում, թրմաս-Դաղ կոչւած վարում, Դալաքուրի և Սօրիի սարերում, Հանդից դէպի արևելք:

. . . մարտի, 1930 թ.

Ըստ վերջին տեղեկութիւնների, Ղըզըր-Բողազի աւագակախումբը դեռ կանգուն է, որովհետև գիւղացիներից օժանդակութիւն է ստանում:

Յիշեալ աւագակախումբը վերջերս սպանել է պետական հինգ պաշտօնեաներ:

* Վեդիի Աբաս Կուլի խանը, որ իր խմբով կուով անցել էր Արաքսը, ներկայումս գտնուում է Արալիում, ուր հաւաքւած են Հայաստանի դաւնագան վայրերից մեծ թիւով թուրք փախտականներ: (Արալիւր գտնուում է Արաքսի աջ ափին, ինք վիրապի դիմաց: Նախ քան համալսարանային պատերազմը Արալիւր գտնուում էր ռուսական սահմանում, իսկ ներկայումս՝ տանկական): Չնայած Աբաս Կուլի խանը Վէդիից հեռացել է, բայց այդ շրջանը դեռ խաղաղւած չէ և ըմբոստացման նշաններ է ցոյց տալիս . . .

* Այն թունութիւնները և խելագար փորձերը, որ կատարում են Հայաստանում՝ բանտ, աքսոր, հակակրօնական պայքար, հաւաքական տնտեսութիւն և այլն և այլն . . . Նախկինում (Նախիջւան) կամ չի կիրառւել, կամ կիրառւելու է փոքր չափերով: Այսպէս, օրինակ, բացայայտ կերպով խուսափում են հաւաքական տնտեսութիւն մտցնելուց: Թէ ինչո՞ւ, այդ էլ թող իրենք պատասխանեն . . .

ԿՈՏԷՆ

ԱՊՍՏԱՄԱՐԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄ ԼԵՌՆԱԹԻՆ ԳԻՒՂՆԵՐՈՒՄ

. . . 2 Ապրիլի

Փետրուարի վերջերի և մարտի սկզբների ընդհանուր ձերբակալութիւններ և գիւղացիների ամբողջ կազմի ցուցակազրումը, բռնադատւելու նպատակով յօգուտ հաւաքական տնտեսութեան, ստալ են բերել ապաստական շարժումներ . . .

ղափոխութիւնը դէպի Հայաստան՝ յետաձգեցին:

1. Միլիի Գարայի, Ջիլինի և Վէդիի լեռնային շրջաններում, կենտրոն ունենալով Ձիմանքները:

2. Ալինջաչան շրջանի լեռնային զիւղերում, սկսած Կղնաուտ գիւղից մինչև Ջանգեղուրի Լըզըլ-Բողզաղի շրջանը և

3. Լըզըլ-Բողզաղի լեռնային զիւղերում, կենտրոն ունենալով Գելչու գիւղը:

Ապստամբները ծրագրած են եղել նախ՝ բայրամի առաջին օրը յարձակուել Նախիջևանի բանտի վրա և աղատել բանտարկեալներին. ապա գրաւել Ջուլֆան, կտրել բոլոր ճանապարհները մինչև Երևան և անխնայ կոտորել բոլոր տեղացի կոմունիստներին:

Ծրագրի առաջին մասը չի յաջողում իրագործել, որովհետև մինչև բայրամ բոլոր բանտարկեալներին տեղափոխած են լինում Ռուսաստան: Իսկ երկրորդ մասն էլ վիժում է չնորհւել աճապարանքի: Կղնաուտում հաւաքւած 60 ապստամբները, որ պիտի միանային լեռնային զիւղերի ապստամբներին և շարժւէին Ջուլֆայի վրա, յարձակուում են Կղնաուտով Ջուլֆա անցնող դրահապատ ինքնաշարժի վրա և մի քանի գոհեր տալին: Այդ միջոցին վրա է հասնում զօրքը և կտրում դէպի լեռնային զիւղերը տանող ապստամբների նահանջի ճանապարհը: Կոիւր շարունակում է կատարել կերպով: Ապստամբներից ազատում են միայն 11 հոգի և իրենց զէնքերով անցնում Պարսկաստան: Գաղազած բուլլեթիները յարձակում են Ալինջաչայի շրջանի երկու թրքական զիւղերի վրա, հիմնադրած կործանում և բոլոր զիւղացիներին էլ կոտորում:

Մինչև Կղնաուտի կտրել Լըզըլ-Բողզաղի շրջանում տեղի են ունենում երկու կռիւներ և երկուսն էլ վերջանում են բուլլեթներով պարտութեամբ: Ապստամբների դէմ կռուելիս են լինում տեղացի կոմունիստ աղամարդիկ և կանայք, ուսական փոքրաթիւ զօրքի հետ միասին, տալով 80 սպանած, զնուայիներ և զէնքեր:

Լըզըլ-Բողզաղի ապստամբների շարքերում կան նաև երեք փախստական ուս կիւտրներ:

Կռիւներն առայժմ դադարած են: Չնայած հէնց ապստամբութեան սկզբներին հեռազրկ են Մուկու և զօրք խնդրել, զեռ մինչև օրս զօրք չկայ, իսկ ապստամբների թիւը օրէջօր աւելանում է:

Երևան-Ջուլֆա երկաթուղապիտը անապահով լինելով, երթեկեկում են գրահապատ զնացքներ:

Ապստամբական շարժում է սկսած նաև Գանձակի շրջանի մի շարք գիւղերում:

Ապստամբական շարժումը լայն չափերով շտաբածելու պատճառը այն է, որ կան լեռնային շատ շրջաններ, որոնց միջև հաղորդակցութիւն չկայ, որովհետև ճանապարհները լցւած են ձիւնով:

Կ.

ԿԱՏՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԿԵԱՌԻՐԻ ՇՐՁԱՆԻՆ ՄԵՁ

(Քաղւած մասնաւոր նամակներէ)

Ղարաբաղի և Ջանգեղուրի շրջանները կտրւած են իրարից: Միսիանի շրջանում երեստասոր չի մնացել: Կամ բանտարկուած են, կամ փախստական վիճակում են

ապրում: Ջերբակաւաններին մեծ մասով տեղափոխում են Գորիսի բանտը: Այժմ Գորիսի բանտում հասարակ հոգուց աւելի բանտարկեալ կայ: Նախիջևանից մինչև Մոսկան ամբողջ շրջանի զիւղերը ապստամբների ձեռքին է: Ապստամբները կոտորել են շրջանի կոմունիստ պաշտօնեաներին և ղեկավարներին:

Ջանգեղուրի և Ղարաբաղի ապստամբները բաժանուած են մի քանի խմբերի: Ջանգեղուրի ապստամբները մեծ մասով ապրում են Բմիշանաղի, Գեօմլու և Ղափանի լեռներում: Ջանգեղուրի պատասխանատու պաշտօնեաներից երեք հոգի, բաւականաչափ զինւորներով գնացել են Միսիանի Դամիր Ջնգան կոչւած տեղը, ապստամբներին բռնելու կամ կոտորելու: Եսկան, բուրովին հակառակն է դուրս դալին: Ուփում են երեք պաշտօնեաները և զինւորներից մի քանի հոգի. իսկ մնացածները փախւում են:

Միսիանի ամբողջ շրջանը զրգուած վիճակի մէջ է ապրում:

* * *

Մի քանի հարիւր հայ և թաթար փախստականներ այժմ ապրում են Ղարաբաղի Թումաս Դաղ կոչւած լեռներում: Այդ փախստականները մէկ ամսից աւելի է, ինչ լեռներ են բարձրացել. մեծ մասով Դիզակի և Վարանդայի շրջանից են: Նրանց միացել են Մուսուրժանւարի և Ալիանլուի, ինչպէս նաև Շուռուճի Թաթարները: Բազւից մի քանի անգամ զորամասեր են ուղարկել ճնշելու ապստամբներին, բայց միշտ էլ անյաջողութեան են մատնւել նրանց յարձակումները:

Շուշիում զտնուած բանտարկեալներին, երբ ցանկացել են Բաղու տեղափոխել, Աղզամի և Բարդայի միջև ապստամբները յարձակում են պահակների վրա, նրանց կոտորում և բանտարկեալներին ազատում: Այժմ Եւլախի գիծը փակւած է դէպի Ղարաբաղ: Գանձակում նոյնպէս շարժումներ են եղել, բայց կառավարութիւնը ճնշել է մեծ վնասներ է հասցրել թաթարներին:

* * *

Միւս ափից բաւականաչափ զինւած թաթարներ են անցել այս ափը և այժմ գտնւում են Ղարաբաղի շրջանում: Նոր եկողներից շատերը զիւղերով փորձում են անցնել միւս ափը, իրենց ընտանիքները տեղափոխելու, բայց ուժեղ պահակ լինելու պատճառով, միշտ կոտորներ են ունենում սահմանապահ զինւորների հետ: Երկու կողմից էլ լինում են վիրաւորներ և սպանւածներ: Այս ափի վիրաւորներին բերում են Վինան և միւս գիւղերը, որոնց բժշկում է տեղում գտնուող բուժակներից մէկը: Եկողները պատում են, որ Աղբէջանի Ձեկայի պետ Բաղդրովը և Մամեդ խանը խփւած են, երբ գնացել էին ապստամբներին ճնշելու:

Շարժումը մեծ համեմատութիւններ է առած: Միայն ղեկավար տարրի պակասն է զգացւում:

* * * Ռուսաստանից եկողների պատմելով, Ռուսաստանի ներսերում էլ մեծ անկարգութիւններ են տեղի ունենում:

ԳԻՐՍ

8 Ապրիլի 1930 թ.

Նախկարյի շրջանի կոիւնները տեղեցին 15 օր, որից յետոյ ապստամբները խմբեցին Ղրղըլ-Քոդազում:

Կարմիր զօրքերը Նախկարյից շտապ կերպով տեղափոխեցին Փանձակի շրջանը, ուր տեղի են ունենում կատաղի կոիւններ:

** Կոիւններ եղև են նաև Դարալազեազում, բայց մանրամասնութիւնները պակասում են:

** Արաս Կուլի խանը նորէն վերադարձել է Վեդիի լեռնային մասը, ուր խմբած են մեծ թւով ապստամբներ:

** Նախկարյում դադրեցրել է հաւաքական տընտեսութեան կիրարկումը...

** Ղրղըլ-Քոդազում կոիւնները վերակուել են: Կարմիրները ամէն կերպ աշխատում են լեռնաշղթան գրաւել, բայց նրանց բոլոր ճիգերը անցնում են սպարդիւն:

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հ Ա Ի Ա Ք Ա Մ Ո Ն Ե Ր

1925-ի (վեց ամսւան. կը պակսին միայն № 1 եւ 2):

1926-ի (տարեկան. կը պակսի միայն № 6):

1927, 1927 եւ 1929 տարիները լրիւ:

ԳԻՆ՝ 35 ՖՐԱՆՔ Ի ԻՐԱՔԱՆՁԻԻՐ ՏԱՐ-ԻԱՆ ՀԱՄԱՐ: (Թղթատարական բարձր սակերով երկիրներու համար 2 տար):

Թղթատարի ծախք չկայ:

Դիմել նամակով.—

Mr L. Tadévosian
71, Av. Kléber Paris (16^e) FRANCE.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

« Դրօշակ » - Ի տարեկան բաժնեւէինն է՝ Տրանսայի, Յունաստանի, Բուլղարիայի, Ռումանիայի, Եւրոպական այլ երկրների և Սիրիայի համար 25 ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի, ամբողջ Պարսկաստանի և մնացած բոլոր երկրների համար՝ երկու դոլար:

« Գ Ր Օ Շ Ա Կ » Ի

Բաժանորդներուն և Գործակալներուն «Դրօշակ»-ի առաջումը չընդհատելու համար՝ կը խնդրենք այն բաժանորդներէն և գործակալներէն. որոնք ցարդ մտքած չեն իրենց հաշիւները, փութաւ: օր առաջ զրկել բաժնեգիները:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Խմբագրական՝	Մի հշտում (Հ. Կոստյան)	135
Անկախութեան Տօնը	Արդի Ռուսոյն ընկերային ուժերը (Վ. Լե- պետե)	136
Դաւադրութեան մը տասնամեակը	Թիւրքիոյ շուրջ	140
Կէշր Հարդի (Մ. Վարանդեան)	Ինտերնասիոնալ	142
Ապրիլեան եղեռնը քննական ակնոցով (Կ. Սասունի)	Մեր գոհերը	147
Կուկուսեանի արշաւանքի մասին	Թղթակցութիւններ	149

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M^{re} S. AGOPIAN.

5, rue des Gobelins, 5. Paris (13^e)